զմայրան լիբանանու:

Մանրեցէ՛ զնոսա որպէս զմատաղատունկն
լիբանանու, որ սիրելին է որպէս զորդիս
միեղջերուի:

Չայն տեառն հատանէ զբոց ՚ի հրոյ. ձայն
տեառն շարժէ զանապատն, և խռովեցու-
ցանէ տէր զանապատն կադէս:

† Չայն տեառն հաստատէ զեղջերուս, և
յայտնի առնէ զանտառս:

Ի տաճարի նորա ամենեքեան ասացեն
զփառս նորա:

Տէր զջրհեղեղս նստուցանէ և ջածուցա-
նէ. թագաւորեցէ տէր յաւիտեան:

Տէր զօրութիւն ժողովրդեան իւրոյ տացէ,
և օրհնեցէ զժողովուրդ իւր ՚ի խաղա-
ղութիւն:

Տունք . ԺԹ:

ՄԱՂՄՈՍ . ԻԹ

Մաղմոս դաւթի . ՚ի նոյն:

Բարձր առնեմ զքեզ տէր՝ զի ընկարար
զիս. և ոչ ուրախ արարեր զթշնամին իմ յիս:
Տէր աստուած իմ՝ կարգացի առ քեզ և

բժշկեցեր զիս . տէր հաներ 'ի դժոխոց
 զանձն իմ , և վրկեցեր զիս յայնցանէ՝ որք
 իջանեն 'ի գուբս :

Սաղմոս ասացէք տեառն սուրբք նորա .
 և խոստովանեցէրուք յիշատակի սրբու-
 թեան նորա :

Սրտմտութիւն է 'ի բարկութեան նորա ,
 և կեանք են 'ի կամաց նորա :

Ընդ երեկոյս հանգիցեն լալիք , առաւօտու
 եղիցի ուրախութիւն :

Լս ասացի 'ի բարեկենդանութեան իմում ,
 թէ ոչ սասանեցայց յաւիտեան :

Տէր 'ի կամս քո ետուր գեղոյ իմոյ զօրու-
 թիւն , դարձուցեր զերեսս քո յինէն՝ և ես
 եղէ խոսկեալ :

Ըս քեզ տէր կարդացի , և առ աստուած
 իմ աղաղակեցի . զի՛նչ օգուտ է քեզ յա-
 րենէ իմմէ , թէ իջանեմ ես յապականութի :

Ս'ի թէ հող խոստովան առնիցի առ քեզ ,
 կամ սլատմեսցէ զճշմարտութիւնս քո :

Ուաւ ինձ տէր և ողորմեցաւ , և տէր
 եղև ինձ օգնական :

Դարձոյց զսուգ իմ յուրախութիւն , և զերձ
 յինէն զքուրձ , և ինձ զգեցոյց զուրախուի :

Որպէս սահմոս ասացենք քեզ փառք իմ,
 և այլ մի ևս զղջացայց, տէր աստուած իմ
 յաւիտեան խոստովան եղէց քեզ:

Տունք . Ժբ : Գորդայս . ըն :

ՍՄԷԼՄՈՍ . Լ

Ի հատարած . նահատակութիւն գովութեան .

Սաղմոս Դաւթի :

Ի քեզ տէր յուսացայ՝ մի ամաչեցից յա-
 վիտեան , յարդարութեան քում փրկեան
 և ապրեցն զիս :

Խոնարհեցն առ իս զունկն քո , վաղվաղեան
 ՚ի կեցուցանել զիս :

Եր իմ աստուած պաշտպան և տուն ա-
 պաւինի՝ ապրեցուցանել զիս , զի հզօրիչ իմ
 և ապաւէն իմ դու ես :

Ո՛ր ասն անուան քոյ տէր առաջնորդեցեր
 ինձ , և սնուցեր զիս . և հանցես զիս յորս-
 դայթէ յայսմանէ՝ որ թագուցաւ ինձ :

Ղու ես պաշտպան իմ տէր , և ՚ի ձեռս քո
 յանձն առնեմ զհողի իմ :

Փրկեցեր զիս տէր աստուած ճշմարտու-

Թեամբ քով . ատեցեր զայնսովից որք պահեն
զերկիւղ 'ի սնտախ :

Եւ 'ի տէր յուսացայ , ցնծացայց և ուրախ
եղէց 'ի փրկութեան քում :

Օ 'ի հայեցար 'ի խոնարհութիւն իմ , և
փրկեցեր 'ի վշտաց զանձն իմ . և ոչ մատ-
նեցեր զիս 'ի ձեռս նեղչաց իմոց , և կա-
ցուցեր յանդորրու զոտս իմ :

Ողորմեա՛ ինձ տէր՝ զի նեղեալ եմ ես .
խառնեցաւ 'ի սրտմտութենէ ակն իմ՝ անձն
իմ և փոր իմ :

Պակասեցան 'ի ցաւոց կեանք իմ , և ամբ
թմ յոգւոց ելանելոյ :

Եղբատացաւ 'ի տկարութենէ զօրութիւն
իմ , և ոսկերք իմ խառնեցան :

Քան զամենայն թշնամիս իմ եղէ ես նա-
խատ դրացեաց իմոց , յոյժ ահ և երկիւղ
ծանօթից իմոց :

Եմենեքեան որք աեսանէին զիս , արտաքս
փախչէին յինէն :

Մտացեալ եղէ ես որպէս մեռեալ 'ի
սրտէ . և եղէ ես որպէս զանօթ կորուսեալ :

Օ 'ի լուայ ես զբամբասանս բազմաց որք
շուրջ էին զինե , 'ի ժողովից նոցա՝ 'ի միա-

սին առնուլ զանձն իմ խորհեցան . այլ
ես ՚ի քեզ տէր յուսացայ :

Ասացի դու ես աստուած իմ , և ՚ի ձեռու
քո է ժառանգութիւն իմ :

Քրկեան զիս ՚ի ձեռաց թշնամեաց իմոց , և
՚ի հալածչաց իմոց :

Երևեցն զերեսս քո ՚ի ծառայս քո . ապրե-
ցն զիս տէր ըստ ողորմութեան քում . տէր

մի յամօթ եղէց՝ զի կարդացի առ քեզ :

Ամաչեցեն ամբարիշտք և իջցեն ՚ի դը-
ժոխս . համբ եղիցին շթունք նենգաւորք՝

ոյք խօսէին զարդարոյ զանիրաւութիւն ,
յամբարտաւանիլ և յանդոսնեթիւրեանց :

Որպէս զի բազում է ողորմութիւն քաղց-
րութեան քոյ տէր , զոր պահեցեր երկիւ-
ղածաց քոց :

Արարեր դու այնոցիկ՝ ոյք յուսացեալ են
՚ի քեզ , առաջի որդւոց մարդկան :

Ամբացուցեր զնոսա ՚ի ծածկոյթ երեսաց
քոց , ՚ի խռովութենէ մարդկան :

Չածկեցեր զնոսա ՚ի խորանի քում , ՚ի հա-
կառակութենէ լեզուաց :

Օրհնեալ է տէր , զի սքանչելիս արար զո-
ղորմութիւն իւր ՚ի քաղաք ամուր :

Եւ ասացի 'ի զարմանալ իմում, թէ ընկե-
ցայ ուրեմն յերեսաց աչաց քոց:

Ս ան այսորիկ լուար ձայնի աղօթից իմոց,
յաղազակել իմում առ քեզ:

Սիրեցէք զտէր ամենայն սուրբք նորա,
զի ստուգութիւն խնդրէ տէր, և հաստե-
ցանէ այնոցիկ՝ որք առաւել առնեն զամ-
բարտաւանութիւն:

Քաջալերացարնք և զօրացին սիրտք ձեր,
ամենեքեան՝ ոյք յուսացեալ էք 'ի տէր:

Տունք . Ի՛ն:

ՍԱՂՄՈՍ . ԼԱ

Իմաստութիւն . Սաղմոս դաւթի:

Երանի ում թողութիւն եղև մեղաց, և
ծածկեցան ամենայն յանցանք նորա:

Երանի առն որում ոչ համարի տէր ըզ-
մեղս նորա, և ոչ գոյ նենգութիւն 'ի
բերան նորա:

Եւ եցի ես և մաշեցան ամենայն ոսկերք
իմ, առ աղաղակել ինձ առ տէր զօրհանա-
պազ 'ի տուէ և 'ի գիշերի:

Դանրացաւ ձեռն քո 'ի վերայ իմ, դարձայ
'ի թշուառութիւն՝ զի հարան յիս փուշք:

Օ մեղս իմ ցուցից քեզ , և զանօրէնու
 Թիւնս իմ ոչ ծածկեցից ՚ի քէն :

† Բասցի Թէ պատմեցից ինձէն զմեղս իմ ,
 և դու Թողցես զամենայն ամբարշաու
 Թիւնս մեղաց իմոց :

Ս ասն այսորիկ յաղօթս կաղցենն առ քեզ
 ամենայն սուրբք , ՚ի ժամ ընդունելի :

Բայց միայն ՚ի ջուրցն հեղեղաց բազմաց ,
 որք առ նոսա ինչ ոչ մերձեացին :

Դու ես ապաւէն իմ ՚ի նեղութենէ
 յայսմանէ , որ շուրջ եղենն զինև :

Յնծութիւն իմ փրկեա՛ զիս յայնցանէ՛
 ոյք պաշարեցին զիս :

Իմաստուն արարից զքեզ և խելամուտ ՚ի
 ճանապարհ՝ յոր և գնացես , և հաստաւ
 տեցից ՚ի վերայ քո զաչս իմ :

Ս ՚ի վնիք որպէս զձիս և զճորիս՝ զի ոչ
 գոյ ՚ի նոսա իմաստութիւն . ՚ի սանձս և ՚ի
 դանդանաւանդս ճմլեցես զկզակս նոցա՝
 որք առ քեզ ինչ ոչ մերձեացին :

Բազում տանջանք են մեղաւորաց , բայց
 ոյք յուսան ՚ի տէր՝ ողորմութիւն տեսնն
 շուրջ եղիցի զնորք :

Ուրախ եղերուք և ցնծացէ՛ք արդարք ՚ի

տէր , պարծեցարուք ամենեքեան՝ ոչք
 ուղիղ էք սրտիւք :
 Տունք . ԺԴ : Գորդայս . ինք :

ՍԱՂՄՈՍ . ԼԲ

Սաղմոս Դաւթի :

Յնծացէք արդարք ՚ի տէր՝ ուղղոց վայելէ
 օրհնութիւն , խոստովան եղերուք տեառն
 օրհնութեամբ . տասնաղեաւ սաղմոսարաւ
 նաւ սաղմոս ասացէք նմա :

Օրհնեցէք զտէր յօրհնութիւն նոր՝ զի
 բարի է , սաղմոս ասացէք նմա օրհնութիւն :
 Աւղիղ են պատգամք տեառն , և ամենայն
 գործք նորա հաւատովք են . և սիրէ զու
 ղորմութիւն և զիրաւունս տէր :

Աղորմութեամբ տեառն լի եղև երկիր , և
 բանիւ տեառն երկինք հաստատեցան , և
 հօգւով բերանոյ նորա ամենայն զօրու
 թիւնք նոցա :

Բողովեաց որպէս ՚ի տիկ զջուրս ծովու , և
 դնէ ՚ի խորս զգանձս իւր :

Երկիցէ ՚ի տեառնէ ամենայն երկիր , և ՚ի

Նմանէ դողացին ամենայն բնակիչք աշխարհի:

Օ ի նա սաց և եղեն, ինքն հրամայեաց և հաստատեցան:

Տէր ցրուէ զխորհուրդս հեթանոսաց, աշարդէ տէր զխորհուրդս ժողովրդոց, և արհամարհէ տէր զխորհուրդս իշխանաց: Խորհուրդ տեառն յաւիտեան մնայ, և խորհուրդ սրտի նորա ազգէ մինչև յազգէ: Լյրանի ազգի՝ որոյ տէր աստուած օգնական է նմա. ժողովուրդ զոր ընտրեաց ՚ի ժառանգութիւն իւր:

Յերկնից նայեցաւ տէր յամենայն որդիս մարդկան, ՚ի պատրաստ բնակութենէ իւրմէ հայեցաւ յամենայն բնակիչս աշխարհի: Ա ստեղծ առանձին զսիրտս նոցա, ՚ի միտ առնու զամենայն գործս նոցա:

Այ թէ ՚ի բազում զօրս իւր ապրեցի թագաւոր, և ոչ հսկայ ՚ի բազում զօրութեան իւրում:

Սուտ է ձի ՚ի փրկութեան իւրում. ՚ի բազում զօրութեան իւրում ոչ ապրեցուցանէ զհեծեալն:

Այք տեառն ՚ի վերայ երկիւղածաց իւրոց,

և ոչք յուսան յողորմութիւն նորա
Փրկել ՚ի մահուանէ զանձինս նոցա, և կե-
րակրել զնոսա ՚ի սոխու:

Անձինք մեր համբերեսցեն տեսան, զի
օգնական և պաշտպան մեր է:

Ի նա ուրախ եղիցին սիրտք մեր, և յա-
նուն սուրբ նորա յուսացուք:

Լղիցի ողորմութիւն քո տէր ՚ի վերայ
մեր, որպէս յուսացայք ՚ի քեզ:

Տունք . ԺԹ:

ՍՍՂՄՈՍ . ԼԳ.

Սողմոս դաւթի . ՚ի ժամանակի զի այլագունեաց զե-
րեսս իւր առաջի արխմելեքայ . և ապա արձակեաց զնա,
և գնաց:

() Բհնեցից զտէր յամենայն ժամ, յամե-
նայն ժամ օրհնութիւն նորա ՚ի բերան իմ:
Ի տէր պարծեսցի անձն իմ, լուիցեն հեզք,
և ուրախ եղիցին:

Մեծ արարէք զտէր ինե, և բարձր արաս-
ցուք զանուն նորա ՚ի միասին:

Ինդրեցի ՚ի տեսանէ և լուաւ ինձ, յա-
մենայն նեղութենէ իմմէ փրկեաց զիս:

Մասիք առ տէր՝ և առէք զոյս, և երեսք

ձեր մի ամաչեացնու

Այս աղքատ կարգաց առ տէր , և տէր լուաւ սմա . յամենայն նեղութենէ սորա սիրկեաց զօա :

Իանակք հրեշտակաց տեառն շուրջ են զերկիւղածովք իւրովք , և պահեն զնոսա : ճաշակեցէք և տեսէք՝ զի քաղցր է տէր .

Երանեալ է այր՝ որ յուսայ ՚ի նա :

Լրկերնք ՚ի տեառնէ ամենայն սուրբք նորա . զի ոչինչ է պակասութիւն երկիւղածաց նորա :

Մեծամեծք աղքատացան և քաղցեան . բայց յք խնդրեն զտէր՝ մի պակասեցի ՚ի նոցանէ ամենայն բարութիւն :

Լկնք որդեակք իմ՝ լուարնք ինձ , և զերկիւղ տեառն ուսուցից ձեզ :

Ո՛վ է մարդ որ կամի զկեանս , սիրէ զաւուրս իւր տեսանել ՚ի բարութեան :

Լուցն զեզուքս ՚ի չարութենէ . և շքութունքքս մի խօսեցի զնենգութիւն :

Խոտորեալ ՚ի չարէ և արա՛ զբարի , խնդրեալ զխաղաղութիւն և երթ զհետ նորա :

Աչք տեառն ՚ի վերայ արդարոց , և աչկանք նորա ՚ի վերայ աղօթից նոցա :

Լըրեցք տեառն 'ի վերայ չարագործաց ,
 սատակել յերկրէ զյիշատակս նոցա :
 Կարդացին արդարքն առ տէր՝ և տէր լու-
 ւաւ նոցա , յամենայն նեղութենէ նոցա
 փրկեաց զնոսա :

Մերձ է տէր առ այնոսիկ , որք մաշեալ
 են սրաիւք , և զխոնարհս հոգւով կեցու-
 ցանէ :

Բազում նեղութիւնք են արդարոց , յա-
 մենայնէ փրկէ զնոսա տէր . և պահէ զա-
 մենայն ոսկերս նոցա , և մի 'ի նոցանէ մի
 փշրեցի :

Մահ մեղաւորին չար է . բայց որ ատէ
 զարդարն , զղջացի :

Փրկէ տէր զանձինս ծառայից իւրոց , մի
 զղջացին ամենեքեան՝ ոչք յուսացեալ
 են 'ի նա :

Տունք . ին : Գորգայս . ին :

ՍԱՂՄՈՍ . ԼԳ

Ի կատարած . Սաղմոս Գաւթի :

Դատեա՛ տէր զայնոսիկ՝ ոչք դատեն զիս .
 մարտիր ընդ այնոսիկ՝ ոչք մարտնչին ընդ իս :

Մա զգէն և զասպար քո , և արի՛ յողնել
ինձ . հան զսուր քո ընդդէմ հալածչաց
խնոց , արդէլ զնոսա . և ասա՛ դու ցանձն
իմ՝ թէ փրկութիւն քո ես եմ :

Մատչեացեն և յամօթ լիցին ոյք խնդրելին
զանձն իմ . դարձցին յետս և ամաչեացեն ,
ոյք խորհելին ինձ չար :

Եղիցին նոքա որպէս փոշի առաջի հողմոյ .
և հրեշտակ տեսանն ներդեցէ զնոսա :

Եղիցին ճանապարհք նոցա ՚ի խաւար և
՚ի գայթակղութիւն . և հրեշտակ աստուծոյ
հալածեցէ զնոսա :

Ի նանիր թագուցին ինձ որոգայթ յապա-
կանութեան իւրեանց , և ՚ի նանիր նախա-
տեցին զանձն իմ :

Հասցէ ՚ի վերայ նոցա որոգայթ՝ զոր ոչ
զխտացին , և որսն զոր թագուցին՝ առցէ
զոտս նոցա , և յորոգայթ ՚ի նոյն անկցին :

Մյ անձն իմ ցնծասցէ ՚ի տէր , ուրախ
եղիցի ՚ի փրկութեան նորա . և ամենայն ոս-
կերք իմ ասասցեն , տէր՝ ո՞ նման է քեզ :

Օ ՚ի փրկեաց զաղբատն ՚ի ձեռաց հզօրի ,
զաղբատն և զանանկն յայնցանէ՝ որք յա-
փշտակեն զնա :

Յարեան 'ի վերայ իմ վկայք չարաց . և
 զոր ինչ ոչ գիտէի՝ հարցանէին ցիտ :
 Հասուցին ինձ շար փոխանակ ընդ բար-
 ւոյ , անժառանգել զանձն իմ խորհեցան
 յորդւոյ 'ի մարդկանէ :

Ես 'ի նեղել նոցա քուրձ զգենուի , խո-
 նարհ առնէի պահօք զանձն իմ , և աղօթք
 իմ 'ի ծոց իմ դարձցին :

Որպէս զեղբայր և զքնկեր՝ այսպէս հաճոյ
 լինէի , որպէս զսգաւոր և զտրտում՝ այն-
 պէս խոնարհ առնէի :

'ի վերայ իմ ուրախ եղեն և ժողովեցան ,
 ժողովեցան յիս տանջանք և ես ոչ ծանկոյ .
 ցրուեցան , եւ ոչ զղջացան :

Փորձեցին զիս և արհամարհեցին արհամար-
 հանօք կրճտեցին 'ի վերայ իմ զատամուռնս
 իւրեանց , տէր երբ տեսցես :

'ի բաց արա զանձն իմ 'ի խորամանկութենէ
 նոցա , և յառիւծուց զվիամօրութիւն իմ :
 Իրտատվան եղէց քեզ տէր յեկեղեցիս
 մեծս , և 'ի ժողովս բազմաց օրհնեցից զքեզ :

Ս'ի ուրախ եղիցին յիս թշնամիք իմ՝ ոյք
 առեին զիս 'ի տարապարտուց . ակն արկի
 առնէին յիս աչօք իւրեանց :

Ընդ իս գիտադադութի խօսէին, և ինքեանք
բարկութեամբ զնենդութիւն խորհէին:

Բային ՚ի վերայ իմ զբերանս իւրեանց, և
ասացին՝ այն այն տեսին աչք մեր:

Տեսեր տէր և մի լուեր, տէր՝ մի ՚ի բացեաց
առնիր յինէն:

Օ արթիր և հայեաց տէր յիրաւունս իմ,
աստուած իմ եւ տէր իմ ՚ի դատաստանս
իմ. և իրաւ արա ինձ ըստ արդարութեան
քում տէր աստուած իմ:

Այի ուրախ եղիցին յիս թշնամիք իմ, և
մի ասացեն ՚ի սիրաս իւրեանց՝ թէ վնչ
վնչ անձանց մերոց զի ընկուզաք զնա:
Ըմաշեացեն և յամօթ լիցին՝ ոյք խնդան
ընդ չար իմ. զգեցցին զամօթ և զանար-
գանս՝ ոյք մեծաբանեն ՚ի վերայ իմ:

Յնծացեն և ուրախ լիցին ՚ի քեզ ամե-
նեքեան, ոյք կամին ընդ արդարութիւն իմ:
Ըսացեն յամենայն ժամ, մեծ է աստ-
ուած. և ոյք կամին գիտադադութիւն ծա-
ռայի քո:

Եզու իմ խօսեացի զարդարութիւնս քո,
զօրհանապազ զգովութիւնս քո:

Ի կատարած , ծառայի տեառն . Սաղմոս դաւ թի :

Մտէ անօրէնն 'ի մեղանչել ընդ միտս իւր ,
 Թէ չիք երկիւղ աստուծոյ առաջի աչաց
 նորա :

Նենգեաց առաջի նորա դառնել զանօրէ-
 նութիւն , և ատել զնա :

Բանք բերանոյ նորա՝ անօրէնութիւն և
 նենգութիւն են :

Ոչ կամեցաւ նա իմանալ զբարի , զանօրէ-
 նութիւն խորհեցաւ յանկողնի իւրում :

Եկաց նա յամենայն ճանապարհ՝ որ ոչ է
 բարի , և 'ի չարէ նա ոչ ձանձրացաւ :

Տէր յերկինս է ողորմութիւն քո , ճշմար-
 տութիւն քո մինչև յամպս :

Մտարութիւն քո որպէս լերինք աստուած .
 Իրաւունք քո որպէս խորք բազումք . զմար-
 դիկ և զանասուն կեցուցանես դու տէր :
 Արպէս զի բազում արարեր ողորմութիւն
 քո աստուած . այլ որդիք մարդկան 'ի հա-
 վանի թեոյ քոյ յուսացին :

Մբեցին նոքա 'ի պարարտութենէ տան
 քո , և զուղիս փափկութեան քո տացես
 ըմպել նոցա :

Ի քէն է տէր աղբիւր կենաց, և լուսով երեսաց քոց տեսանեմք զլոյս:


Օրագեան զողորմութիւնս քո ոյք ճանաչեն զքեզ, զարդարութիւնս քո՝ ոյք ուղիս են սրտիւք:

Մի եկեսցեն ՚ի վերայ մեր ոտք ամբարտաւանից, և ձեռք մեղաւորաց մի դողացուցեն զմեզ:

Ընդ անկցին ամենեքեան ոյք դործեն զանօրէնութիւն, մերժեսցին և այլ մի կարացեն հաստատիլ:

Տունք • ժգ: Գորգայս • Կս:

Կանոնս Գորգայս • է: Սաղմոս • ժլ: Տունս • ժգ:



ՕՐԸՆՈՒԹԻՒՆ ՄԵԾԻՆ ՄՈՎՍԷՍԻ ԱՍՏՈՒԱԾԱՍ
ՏԵՍ ՄԱՐԳԱՐԷԻ

Է • Օրինաց • լք:

Նայեցարուք երկինք և խօսեցայց, լուիցէ երկիր զպատգամս բերանոյ խնոյ:

Ընդունելի լիցի որպէս անձրև բարբառիմ. և իջեն որպէս ցօղ պատգամք խմ:

Որպէս անձրև ՚ի վերայ սիզոյ, որպէս

տարաբի ՚ի վերայ խոտոյ . զի զանուն տեաան
կարդացուք . և տնէք օրհնութիւն տեաան
աստուծոյ մերոյ :

Աստուած որոյ ճշմարտութեամբ են գործք
նորա . և ամենայն ճանապարհք նորա իրա-
ւամբք են :

Աստուած հաւատարիմ է , և ոչ գոյ ՚ի նմա
անիրաւութիւն . արդար և ճշմարիտ է տէր :

Սեղան՝ և ոչ նմա որդիքն արատոյ , ծը-
նունդք խտորեալք և թիւրեալք :

Ոչ այդ այն է զոր տեաան հատուցանելիք
դուք՝ ժողովուրդք յիմարք և ոչ իմաստունք :

Ոչ սա ինքն է հայր քո՝ որ ստացաւ ըզ-
քեզ , արար զքեզ՝ և ստեղծ զքեզ :

Յուշ լիցին քեզ աւուրքն յաւիտենից .
իմացարնէք զամն ազգաց մինչև յազգս :
Հարցնիր դու ցհարս քո , և պատմեսցեն
քեզ . ցծերս քո՝ և ասացեն քեզ :

Ի ժամանակի՛ յորժամ բաժանեաց բարձ-
րեալն զազգս ամենայն . որպէս սփռեաց
նա զորդիսն ազամայ :

Կացոյց զսահմանս հեթամասոց ըստ թուոյ
հրեշտակաց աստուծոյ :

Աղև բաժին տեաան ժողովուրդ իւր յակոբ ,

և փիճակ ժառանգութեան իւրոյ խորացէլը
 ՚հաւական եղև նմա յանապատի, ՚ի ծարաւ
 տօթոյ յանջողւոյ պաշտպանեաց զնա:

† Խրատեաց զնա, և պահեաց որպէս բիր
 ական. որպէս զարծուի ՚ի թևս իւր ընկա-
 լաւ զնա. և որպէս ՚ի վերայ ձագուց իւրոց
 դթացաւ:

† Տարածեաց զթևս իւր, և ընկալաւ զնա.
 և բարձեալ բերէր զնա ՚ի վերայ միջնողաց
 իւրոց:

Տէր միայն ածէր զնոսա, և ոչ գոյր ընդ
 նոսա աստուած օտար:

Եւս՝ եհան զնոսա ՚ի զօրութիւնս երկրի. և
 կերակրեաց զնս արդեամբք անդաստանաց:

Վիեցոյց նոցա մեղր ՚ի վիմէ, և իւղ յա-
 պառած վիմէ:

Իւղ կուլուց՝ և կաթն մաքեաց, ձարպով
 հանդերձ խոյոյ՝ որթուց՝ ցլուց՝ և նոխազաց:

Օ պարարտութիւն երիկամանց ցօրենոյ, և
 զարիւն խաղողոյ էարբ գինի:

Եկեր յակօր և յաղեցաւ, և անգուշեաց
 զսիրելին:

Վիրացաւ՝ ստուարացաւ՝ լայնացաւ, ե-
 թող զտէր աստուած զարարիչ իւր, և

յետս եկաց յաստուծոյ փրկչէ իւրմէ :
 Բարկացուցին զիս օտարոտիւք իւրեանց ,
 և կռովք իւրեանց դառնացուցին զիս :
 Օ սէեցին դիւաց՝ և ոչ աստուծոյ . դիցն՝
 զորս ոչ գիտէին , նորք և առ ժամայնք ,
 զորս բնաւ ոչ ճանաչէին հարք նոցա :
 Թողին զտէր՝ որ ծնաւ զնոսա , մոռացան
 զաստուած՝ որ կերակրեաց զնոսա :
 Ատես տէր՝ և նախանձեցաւ , և սրամտե-
 ցաւ ՚ի վերայ ուստերաց և դստերաց նո-
 ցա , և ասէ :

Բարձուցից զերեսս իմ ՚ի նոցանէ , և ցու-
 ցից նոցա զինչ լինելոց իցէ յապայ ժա-
 մանակի :

Օ ՚ի ազգ մի Թիւր են նոքա՝ և որդիք
 անհաւանք . նոքա նախանձեցուցին զիս ՚ի
 չաստուածս իւրեանց , և դառնացուցին զիս
 ՚ի կուռս իւրեանց :

Արդ՝ և ես նախանձեցուցից զնոսա յազգ
 անալիտան , և անմիտ ազգաւ զկճեցուցից
 զնոսա :

Քրաք հօր և որդւոյ և :

ՄԱՂԹԱՆՔ

Տո՛ւք ժառս աստուծոյ, անէք օրհնութիւն
ճարդասիրին թագաւորին յախաննից, որ փրկէ
զձառայս իւր և կեցուցանէ:

Մարդասէ՛ր անէր՝ վասն սրբուհւոյ:

Քարոզ և աղօթք՝ երկինք պատուն, և Տէր ազաւն
կանոնացն:

Ո՛ր ան ՚ի գիշերի և ՚ի աունջեան՝ և յանձնայն
ժամու խօսիլ մեզ զբան տեառն՝ զտէր աղաւ
շեացուք: Տէր ողորմեա՛ն:

Ո՛ր ան շանկանելոյ մեզ ՚ի փորձութիւն՝ որում
ոչ կարեմք հանգուրթել՝ զտէր աղաւ:

Ո՛ր ան անբիծ և անդաստապարտ կալ մեզ աւաւ
ջի ահեղ ասունին քրիստոսի՝ զտէր աղաւ:

Ո՛ր ան առաջնորդելոյ մեզ ՚ի նաւահանգիսան
կենաց անխախճանից՝ զտէր աղաւ:

Ո՛ր ան արժանի լինելոյ մեզ վերին կոչմանն՝ և
երկնից արքայութեանն՝ զտէր:

Ո՛ր ան հոգւոցն հանգուցելոց՝ որք ճշմարիտ և
ուղիղ հաւատով ՚ի քրիստոս ննջեցին՝ զտէր աւ
ղաշեացուք:

Եւ ևս՝ միաբան վասն Օանձինս մեր և ի
Ողորմեաց:

Ի գիշերի և ի սուսնօրեան և յամենայն ժամու
 զքեզ աղաչեմք, և ի քէն խնդրեմք մարդասէր
 տէր: Եւր մեզ աստուած փրկիչ մեր. խնայե-
 հեցի ունինք թո՛ւ ի խնդրուածս մեր, զի մի ու-
 նայն վիշն վաստակք ծառայից քոց. այլ հա-
 մարեան զաշխատութիւնս մեր ի գործ արդա-
 րութեան, և ի սպառնող աստուածարարութեան: Եւ
 ընկնա՛լ տէր՝ զաղօթս և զերկրպագութիւնս մեր,
 և հասն՛ մեզ զօղորմութիւն քո առաստապէս.
 Ծածկեան զմեզ ընդ հովանեաւ ամենազօր աշոյ
 քո. պօրացն՛ զմեզ տէր՝ զօրութեամբ սուրբ
 հոգւոյդ. սահեան զմեզ որպէս բիրտ տկան: Եւ
 արան առ մեզ նշան բարի, ի գովեստ և ի փա-
 սաբանութիւն անուանող քում սրբոյ: Օ ի ի
 քո փառս կատարի ամենայն արարածոց մշտն-
 ջենաւոր փառաբանութիւն ի բարձունս, հօր
 և որդւոյ և հոգւոյն սրբոյ, այժմ և միշտ և
 յաւիտեանս յաւիտենից, ամէն:

Խաղաղութիւն ամենեցուն
 Աստուծոյ երկիրպագեացոք:

Հովն քաջ՝ հովն բարի՛ և յաւիտենական,
 նայեանց և այց արա բանաւոր հօտի քո, զոր ժո-
 զովեցեր առ քեզ զթութեամբ քով: Օ ի քո
 առաջի կամք տէր, և առ ի քէն ողորմութեանցդ

և գթութեանցդ ակն ունիմք: Օ՛րհնեան
 սրհնեան, զամենեան խնամանացո՛ւ, զամենեան
 ըւսաւորեան. և ամենեցուն պարգևեան զերկնից
 արքայութիւնդ: Դ՛սան զի դու ես տէր կենաց,
 և աստուած որդրմութեանց. և քեզ վայելէ
 փառք իշխանութիւն և պատիւ, այժմ և միշտ և
 յաւիտեանս յաւիտենից, ամէն:


Մարտանք:

Ի գիշերի և ՚ի տունիւն և յամենայն ժամու
 անդադար փառաւորեմք զՀայր և զորդի և ըզ
 սուրբ Հոգիդ, այժմ և միշտ և յաւիտեանս յա
 յիտենից, ամէն:

(՝) Բնեալ տէր մեր յառաքիտաց, ամէն:
 Հայր մեր որ յերկնս ես:



ἡ ἁγία ἑκκλησία





ՍԱԳՄՈՍ • ԼԶ

Սաղմս Դաւթիս

Մի նախանձիր ընդ չարս . և մի ընդ այնոսիկ՝ ոչք գործեն զանօրէնութիւնս :

Օ ի որպէս խոտ վաղվաղակի ցամաքեսցին . որպէս զդալարի խոտոյ վաղվաղակի անցցեն :

Հուսանի տէր՝ և արան զքաղցրութիւն . բնակեան յերկրի՝ և հովուեսցիս ի մեծութեան նորա :

Դտեանի տեառնէ , և նա տացէ քեզ ըզխնդրուածս սրտի քո . յայանեան առաջի տեառն զճանապարհս քո և յուսանի նա : Աս արացէ և հանցէ որպէս զոյս զարդարութիւնս քո , և զիրաւունս քո որպէս զօր հասարակի :

Հնազանդ լիբ տեառն՝ և ծառայեան նմա . և մի նախանձիր ընդ այնոսիկ՝ որոց ագա-

կեալ իցեն ճանապարհք իւրեանց , ընդ
մարդոյ՝ որ գործէ զանօրէնութիւնս
] և եւս ՚ի բարկութենէ և հանգիւր ՚ի սրբա-
մտութենէ , և մի նախանձիր ընդ չարս :
Օ ՚ի չարք վաղվաղակի սատակեացին .
բայց ոյք համբերեն տեսան՝ նոքա ժա-
ռանդեացեն զերկիր :

Փոքր մի և այլ ոչ և ս իցէ ամբարիշտն .
խնդրեացես զտեղի նորա և ոչ դացես :
Եւ ը որ հեղքն են՝ նոքա ժառանդեացեն
զերկիր , և փափկացին ՚ի բազում խաղա-
ղութեան իւրեանց :

Սպասէ մեղաւորն արդարոյ , և կրճտէ ՚ի
վերայ նորա զատամուճս իւր . այլ տէր
ծիծաղեցի զնովաւ :

Քանզի յառաջագոյն տեսանէ , զի հասեալ
է օր նորա :

Սուր հանին մեղաւորք և լարեցին զաղե-
ղունս իւրեանց , հարկանել զաղքատն և
զանանկն , սպանանել զայն որ խոնարհն է
սրտիւ :

Սուրք նոցա մտցեն ՚ի սիրտս նոցա , և ա-
ղեղունք նոցա փշրեցին :

Ի աւ է սակաւիկ ինչ արդարոյ քան զբա-

զում մեծութիւն մեղաւորաց, և բազուկք
անբարշտաց խորտակեցին:

Հաստատէ տէր զարդարս, և ճանաչէ զա-
ւուրս անբժից, ժառանգութիւն նոցա
յաւիտեան եղիցի:

Մի ամաչեցին նոքա ՚ի ժամանակս շա-
րութեան. այլ յաւուրս սովու յաղեցին:

Նա մեղաւորք կորիցին. այլ թշնամիք
տեառն ՚ի փառաւորիլ և ՚ի բարձրանալ
իւրեանց պակասեցին որպէս ծուխ՝ զի
պակասի:

Փոխ աանու մեղաւորն և ոչ հատուցանէ.
այլ որ արդարն է՝ ողորմի և տայ:

Ոչ օրհնեն զտէր՝ ժառանգեցին զեր-
կիր, և ոչ անիծանեն՝ սատակեցին ՚ի
նմանէ:

Ի տեառնէ ուղղին զնացք առն, զճանա-
պարհս նորա նա կամի յոյժ:

Թէպէտ և դայթակղեցի, նա մի կործա-
նեցի, զի տէր ձեռնկալու է նորա:

Մանուկ էի ես և ծերացայ, և ոչ տեսի
զարդարն արհամարհեալ, և ոչ զաւակ նորս
թէ մուրանայ հաց:

Օ օրհանապաղ ողորմի և տայ փոխ, զա-

Լակ նորա օրհնեալ եղիցի յաւիտեանս :
 Խոտորեան ՚ի չարէ և արան դրարի . և բնակեացիս յաւիտեանս յաւիտենից ՚ի նմա :
 Տէր սիրէ զիրաւունս , և ոչ ընդ վայր հարկանէ զսուրբս իւր , սյլ յաւիտեան պահէ
 զնոսա :

Մտօրէնք հալածեացին ՚ի միասին , և զաւակք ամբարշտաց սատակեացին :

Մ. Մ. արդարք ժառանգեացեն զերկիր , և բնակեացին յաւիտեանս յաւիտենից ՚ի նմա :
 Բերան արդարոյ խորհի զիմաստութիւն ,
 և լեզու նորա խօսեացի զիրաւունս :

Օրէնք աստուծոյ իւրոյ են ՚ի սրտի իւրում ,
 և մի գայթակղեացին զնացք նորա :
 Հայի մեղաւորն ընդ արդար և խնդրէ ըսպանանել զնա , սյլ տէր ոչ թողու զնա ՚ի ձեռս նորա , և ոչ դատապարտէ զնա՝ յորժամ դատէ զնա :

Համբեր տեառն և պահեան զճանապարհս նորա , և բարձր արացէ զքեզ ՚ի ժառանգել զերկիր , և զսատակումն մեղաւորաց տեսցես :

Տեսի զամբարիշտն վերացեալ և բարձրացեալ որպէս զմայրսն լիբանանու :

Անցի և ահա ոչ էք, խնդրեցի՝ և ոչ գտաւ
տեղի նորա:

Պահեա՛ զամբծութիւն, և տես զուղղու-
թիւն. զի գոն մնացուածք յառն խաղա-
ղարարի:

Անորէնք հարածեսցին ՚ի միասին, և զա-
ւակք ամբարշտաց կորիցեն:

Փրկութիւն արդարոց ՚ի տեսանէ է, վերա-
կացու է նոցա ՚ի ժամանակս նեղութեան:

Օգնեսցէ նոցա տէր և փրկեսցէ զնոսա-
ապրեցուցէ ՚ի մեղաւորաց՝ և կեցուցէ
զնոսա զի յուսացան ՚ի նա:

Տունք . ԼԷ:

ՍԱՂՄՈՍ . ԼԷ:

Սաղմոս Դաւթի . առ ՚ի յիշատակ շարաթու:

Տէր մի սրտմտութեամբ քով յանդիմաներ
զիս . և մի բարկութեամբ քով խրատեր զիս:

Օ ՚ի ներք քո հարան յիս, և յիս հաստա-
տեցաւ ձեռն քո:

Ա՛չ գոյ բժշկութիւն մարմնոյ իմոյ, յերե-
սաց բարկութեան քոյ:

Ոչ է խաղաղութիւնն սակերաց խնոց , յերեսաց մեղաց խնոց :

Ենօրէնութիւնք իմ բարձրացան քան ըզգլութիւն իմ , որպէս բեռն ծանր ծանրացան ՚ի վերայ իմ :

Նեխեցան և փտեցան վէրք իմ , յերեսաց անզգամութեան խնոց :

Տառապեցայ և խոնարհ եղէ մինչև յոյժ , զօրհանապազ արտում գնայի , զի անձն իմ լի եղև չարչարանօք , և ոչ ոյ բժշկութիւն մարմնոյ իմոյ :

Չարչարեցայ և խոնարհ եղէ մինչև յոյժ , մանչէի առ հեծութեան սրտի իմոյ :

Տէր առաջի քո է ամենայն ցանկութիւն իմ , և հեծութիւն իմ ՚ի քէն ոչ ծածկեցաւ :

Մերտ իմ խռովեցաւ յիս , և եթող զիս զօրութիւն իմ . լոյս աչաց իմոց , և այս ոչ եղև ընդ իս :

Բարեկամք իմ և մերձաւորք իմ առաջի իմ մերձեցան և կացին , և մերձաւորք իմ հեռի եղեն յինէն :

Բռնադատէին զիս և խնդրէին զանձն իմ՝ ոյք խորհէին չար ՚ի վերայ իմ , խորհեցան զանօրէնութիւն և զնենգութիւն զօրհա-

Նապաղ խորհեցան

Այլ ես որպէս խուլ զի ոչ լսէ, որպէս
համբ որ ոչ բանայ զբերան իւր:

Ազէ ես որպէս մարդ որ ոչ լսէ, և ոչ գոն
խօսք ՚ի բերան նորա:

Աս ՚ի քեզ տէր յուսացայ, և դու լուիցես
ինձ տէր աստուած իմ:

Ասացի թէ մի ուրախ եղիցին յիս թշնամիք
իմ. ՚ի սասանիլ ոտից իմոց՝ ՚ի վերայ իմ
մեծամեծս խօսեցան:

Աս ՚ի տանջանս պատրաստ եմ, և ցաւք
իմ առաջի իմ են յամենայն ժամ:

Օ անօրէնութիւնս իմ պատմեցից, և հո-
գացայց վասն մեղաց իմոց:

Իսկ արդ՝ թշնամիք իմ կենդանի են, և զօ-
րացեալք են քան զիս. և բազումք էին՝
ոչք ատէին զիս ՚ի տարապարտուց:

Այք հատուցին ինձ չար փոխանակ ընդ
բարւոյ. չարախօսէին զինէն, զի ես եր-
թայի զհետ արդարութեան:

Ա՛յ թողուր զիս տէր աստուած իմ. և մի
՚ի բացեայ առնիր յինէն, հայեաց յօգնել
ինձ տէր փրկութեան իմոյ:

Տունք. ին:

Ի կատարած . յիդիթովնայ սրհնուծիւնս
Սաղմոս դաւթիս

Ասացի թէ պահեցից զճանապարհս իմ ,
զի մի մեղայց լեզուաւ իմով :

Եդի պահապան բերանոյ իմոյ՝ ՚ի հակա-
ռակիլ մեղաւորին առաջի իմ :

† Լուս եղէ և խոնարհեցայ . լսեցի ՚ի բա-
րուծենէ , և ցաւք իմ նորոգեցան յիս .
Սկսաւ սիրտ իմ ՚ի փոբի իմում , և ՚ի խոր-
հուրդս իմ վառեցաւ հուր :

Խօսեցայ լեզուաւ իմով և ասացի . ցնց
ինձ տէր զկատարած իմ և զթիւ աւուրց
իմոց՝ քանի՞օն է , զի գիտացից թէ որչափ
ինչ պակասեալ է յինէն :

Ահա չափով եղեր զաւուրս իմ , և կար զօ-
րուծեան իմոյ որպէս ոչինչ է առաջի իմ .
պակայն ամենեւին ընդունայն է ամենայն
մարդ մտեղի :

Ապաքէն որպէս ՚ի պատկերի շրջի մարդ ,
սակայն ՚ի զուր խառլի , դանձէ և ոչ գիտէ
ուն ժողովէ :

Իսկ արդ՝ ո՞վ է համբերութիւն իմ՝ թէ
ոչ դու տէր . կամ կա՞ր զօրութեան իմոյ՝

Թէ՛ ոչ ՚ի քէ՛ն:

Յամենայն անօրէնութենէ իմէ՛ փրկեցեր
զիս, և նախատինս անզգամաց արարեր զիս:
Լուս եղէ՛ և ոչ բացի զբերան իմ, զի դու
արարեր:

+ Ի բաց արա յինէ՛ն զտանջանս իմ, զի ՚ի
զօրութենէ՛ ձեռին քո ես պակասեցայ:
Աշտամբութեամբ վասն մեղաց խրատեցեր
զմարդ, մաշեցեր որպէ՛ս սարդի սպայն
զանձն նորա. սակայն ընդունայն է ամե-
նայն մարդ:

Լուր ակեր աղօթից իմոց, ունին զիր խըն-
դրուածաց իմոց, արտասուաց իմոց մի լսեր:
Պանդուխտ եմ ես առաջի քո, նժդեհ և
անցաւոր որպէ՛ս ամենայն հարք իմ:

+ Թոյլ արա ինձ զի հանդեպց մինչև երթ-
եալ իցեմ, և այլ ոչ ևս գտանիցիմ:
Տունք. ծն:

ՍԱՂՄՈՍ. ԼԹ.

Դ հատարած. Սաղմոս դաւթի:

* ամբերելով համբերի տեսան, և նայե-
ցաւ առ իս, և լուս աղօթից իմոց:

Եւհան զիս 'ի գբոյ տառապանաց , 'ի կաւոյ
 և 'ի աղմոյ :

Հաստատեաց 'ի վերայ մխի զոտս իմ , և
 ուղղեաց զգնացս իմ :

Լարկ 'ի բերան իմ օրհնութիւն նոր , զօրհ-
 նութիւն տեառն աստուծոյ մերոյ :

Տեցեն բազումք և երկիցեն , և յուսա-
 ցին 'ի տէր . երանեալ է այր որոյ անուն
 տեառն յոյս է նորա :

Ոչ հայեցաւ նա 'ի նանքութիւն , և ոչ 'ի
 մոլութիւն սուտ :

Ընդունմ արարեր զու՝ տէր աստուած իմ
 զսքանչելիս քո , և խորհրդոց քոց՝ ոչ որ է
 որ նմանիցի քեզ :

Պատմեցի և խօսեցայ՝ և բազումք եղեն
 քան զթիւս . ընդ զոհս և ընդ պատարագս
 ոչ հաճեցար , լսելիս հաստատեցեր ինձ .
 զողջակէզս և զվան մեղացն ոչ ինդրեցեր :
 Հայե՛ծամ ասացի թէ՛ ահաւասիկ դամ
 ես , 'ի գլուխս գրոց գրեալ է վան իմ :

Ղանել զկամս քո աստուած իմ կամեցոյ ,
 և զօրհնս քո 'ի մէջ որովայնի իմոյ :

Ղեւտարանեցից զարդարութիւնս քո յե-
 կեղեցիս մեծս . ահա զշքութեանս իմ ոչ ար-

զեղից 'ի քէն:

Տէր դու գիտացեր՝ զի զարդարութիւնս
քո ոչ ծածկեցի 'ի սրաի իմում, զճշմար-
տութիւնս քո՝ և գիրկութիւնս քո:

Ասացի և ոչ Թագուցի զողորմութիւնս
քո, և զճշմարտութիւնս քո 'ի ժողովրդենէ
մեծէ:

Այլ դու տէր մի հեռի առնիր զգթու-
թիւնս քո յինէն. զի ողորմութիւն քո, և
ճշմարտութիւն քո յամենայն ժամ ըն-
կալցի զիս:

Շուրջ եղեն զինև չարք՝ որոց ոչ գոյր
թիւ. հասին ինձ անօրէնութիւնք իմ, և
ես ոչ կարացի տեսանել:

Բազում եղեն քան զհեր գլխոյ իմոյ, և
սիրտ իմ եթող զիս:

Կամեաց տէր փրկել զիս, և տէր յօգնել
ինձ նայեաց:

Ամաչեացեն և յամօթ լիցին՝ ոյք խնդրէին
զանձն իմ բառնալ զսա. դարձցին յետս և
ամաչեացեն՝ ոյք խորհէին ինձ չար:

Կրեացեն զամօթ առ ժամայն վազվազակի,
ոյք ասէին ինձ վաչ վաչ:

Յնձացեն և ուրախ լիցին 'ի քեզ ամե.

ներքեան, ոյք խնդրեն զքեզ տէր:
 Ասացեն յամենայն ժամ՝ մեծ է աստուած,
 և ոյք սիրեն զփրկութիւնս քո:
 Աս աղքատ և անանկ եմ աստուած խորհեա՛
 զիս . օղնական և պաշտպան իմ ես, և դու
 աստուած իմ մի յամենայր:
 Տունք . ին: Գորգայս . Ել:

ՍԱԼՄՈՍ . Խ

Ի կատարած . Սաղմոս Դաւթի:

Արանի որ խորհի զաղքատն և զանանկն,
 յաւուր չարի փրկէ զնա տէր:
 Տէր փրկէ զնա և կեցուցանէ, երանելի
 առնէ զնա ՚ի վերայ երկրի, և ոչ մատնէ
 զնա ՚ի ձեռս թշնամեաց իւրոց:
 Տէր օղնական է նմա ՚ի մահիծս ցաւոց
 իւրոց, զամենայն անկողինս նորա դարձու-
 ցանէ ՚ի հիւանդութենէ նորա:
 Աս ասացի տէր ողորմեա՛ ինձ, բժշկեա՛
 զանձն իմ, ես մեղայ քեզ:
 Թշնամիք իմ ասացին ինձ չար . երբ իցէ
 զի մեռցի և կորիցէ անուն նորա:

Մտանէր տեսանել զնանբութիւն , խօսէր
 'ի սրտի իւրում , և ժողովէր զանօրէնու-
 թիւն յանձն իւր :

Արտաքս ելանէր և զնոյն խօսէր . զինէն
 շնջէին ամենայն թշնամիք իմ :

Խորհեցան չար 'ի վերայ իմ , բան անօրէ-
 նութեան եղին 'ի վերայ իմ :

Մի թէ որ ննջիցէ՝ սյլ ոչ ևս յաւելցի
 յառնել . քանզի և այրն խաղաղութեան
 իմոյ՝ յոր և եան յուսացայ :

Ար ուտէր զհաց իմ , յաճախեաց առնել
 ինձ խաբէութիւն :

Այլ դու տէր ողորմեա՛ ինձ և կանգնեա՛
 զիս , և ես հատուցից նոցա :

Յայսմ ծանեաց թէ հաճեցար ընդ իս , զի
 մի ուրախ եղիցին յիս թշնամիք իմ :

Այլ զիս յամբժութեան իմում ընկալար .
 և հաստատեցեր զիս առաջի քո յաւիտեան :

() Բհնեալ տէր աստուած խորայելի յա-
 ւիտեանս յաւիտենից , եղիցի եղիցի :

Տունք . ԺԳ :

Ի կատարած . իմաստութիւն որդւոցն կրթւոյ :
Սաղմոս դաւթի :

Որպէս փափագի եղջերու յաղբերս ջուրց ,
այնպէս փափագի անձն իմ առ քեզ
աստուած :

Չարաւի է անձն իմ առ քեզ աստուած
հզօր և կենդանի . երբ եկից երևեցայց
երեսացդ աստուծոյ :

Եղեն ինձ արտասուք իմ կերակուր 'ի
տուէ և 'ի գիշերի , և այն զի ասէին ցիս
զօրհանապաղ՝ թէ ո՞ւր է աստուած քու :

Օ այս որպէս յիշէի՝ տառապէր յիս անձն
իմ . քաջալերէի զի մտից ընդ յարկաւ
սքանչելեաց տանն աստուծոյ :

Ի ձայն ցնծութեան խոստովանութեան , և
'ի ձայն բարեկենդանութեան :

Երդ՝ ընդէր արտում ես անձն իմ , կամ
ընդէր խռովես զիս . յուսն առ աստուած ,
խոստովանեա՛ նմա՝ փրկիչ երեսաց իմոց
աստուած է :

Ենձն իմ յոյժ խռովեցաւ , վասն այսորիկ
յիշեցի դքեզ յերկրէն յորդանանու , 'ի
հերմոնէ լեանէ փոքուէ :

Խորք խորոց կարդացին առ քեզ , 'ի ձայն
սահանաց քոց :

Մենայն զբօսանք քո , և այլք քո անցին
'ի վերայ իմ :

Ի տուէ պատուիրեաց տէր զողորմութիւն
իւր , 'ի գիշերի զօրհնութիւն նոր . և աղօթք
իմ առ աստուած վասն կենաց իմոց :

Մասցի աստուծոյ՝ ընդունող իմ ես . ընդէր
մերժեցեր զիս , ընդէր տրտում գնամ ես
'ի նեղել թշնամւոյ իմոյ :

Ի փշիւ ոսկերաց իմոց նախատեցին զիս
թշնամիք իմ , յասել ջիս զօրհանապաղ՝ թէ
նէր է աստուած քո :

Մրդ՝ ընդէր տրտում ես անձն իմ , կամ
ընդէր խռովես զիս . յուսա՛ առ աստուած ,
խոստովանեա՛ նմա՛ փրկիչ երեսաց իմոց
աստուած է :

Տուրք . ԺԳ :

ՍՆԱՄՈՍ . ԽԲ

Սաղմոս դաւթի :

Դա՛տ արա ինձ աստուած , և իրա՛ւ արա
ինձ 'ի դատաստանի իմում :

Յազգէ որ ոչ է սուրբ , 'ի մարդոց մեղա-
ւորէ նենդաւորէ փրկեան զիս :

Դու աստուած հզօրիչ իմ ես՝ ընդէր մա-
ւացար զիս , ընդէր արտում գնամ ես 'ի
նեղել թշնամոց իմոց :

Մասքեան տէր զոյս քո և զճշմարտութիւն
քո , զի առաջնորդեցցեն ինձ և հանցեն զիս
'ի լեռան սուրբ և 'ի յարկս քո :

Մտից առաջի սեղանոց աստուծոց առ աստ-
ուած , որ ուրախ առնէ զմանկութիւն իմ :
Խոստովան եղէց քեզ օրհնութեամբ աստ-
ուած աստուած իմ :

Մրդ՝ ընդէր արտում ես անձն իմ , կամ
ընդէր խռովես զիս . յուսան առ աստուած ,
խոստովանեան նմա . փրկիչ երեսաց իմոց
աստուած է :

Տւնք . է . Գորդայս . լի :

ՍՅԱԿՈՍ . ԽԴ

Ի կատարած . իմաստութեան որդւոցն կորիսոց :
Սաղմոս Դաւթի :

Մտուած՝ ականջօք մերովք լուսք , զոյ
հարբն մեր սլաամեցին մեզ :

Օ գործն զոր գործեցեր յաւուրս նոցա,
 յաւուրսն առաջինս:

Չեռն քո խլեաց զհեթանոսս՝ և զնոսա
 անկեցեր. չարչարեցեր զժողովուրդս քո և
 հաներ զնոսա:

Օ ի ոչ թէ սրով իւրեանց ժառանգեցին
 զերկիր, և ոչ բազուկ նոցա փրկեաց զնոսա:
 Այլ աջ քո՝ և բազուկ քո՝ և լոյս երեսաց
 քոց, զի հաճեցար դու ընդ նոսա:

Դու ինքն ես թագաւոր իմ և աստուած
 իմ, որ հրամայեցեր զփրկութիւնսն յա-
 կոբայ:

Իւր զթշնամիս մեր հարցուք, և անուամբ
 քով արհամարհեցուք զյարուցեալսն ՚ի
 վերայ մեր:

Այլ թէ յաղեղն իմ յուսացեալ եմ, և ոչ
 սուր իմ կեցուցանէ զիս:

Այլ դու փրկեցեր զմեզ ՚ի թշնամեաց մե-
 րոց, և զատելիս մեր յամօթ արարեր:

Աստուծով պարծեցուք զօրհանասպազ, և
 անուան նորա խոստովան եղիցուք յա-
 ւիտեան:

Իսաց արդ՝ մերժեցեր և անարդեցեր ըզ-
 մեզ. և ոչ ելեր աստուած ընդ զօրս մեր:

Վարձուցեր զմեզ յետս քան զԹշնամիս
մեր , և ատելիք մեր յափշտակեցին զմեզ :
Ետուր զմեզ որպէս զոչխար ՚ի զենու մն ,
և ընդ հեթանոսս ցրուեցեր զմեզ :

Ս աճառեցեր զժողովուրդս քո առանց
գնոյ , և ոչ գոյ թիւ աղաղակի մերոյ :

Ղրարեր զմեզ նախատինս դրացեաց մե-
րոց . ծաղբ և այսին կատականաց այնոցիկ՝
որք շուրջ էին զմեզ :

Ղրարեր զմեզ յառակս հեթանոսաց , ՚ի
չարժեղ զգլուխս ժողովրդոց :

Օ որ ամենայն նախատինք իմ առաջի իմ
են , և ամօթ երեսաց իմոց ծածկեաց զիս :
Ի ձայնէ նախատորդին և չարախօսի , յե-
րեսաց Թշնամւոյն և հարած չի :

Ղյս ամենայն եկն ՚ի վերայ մեր , և մեք
դքեզ ոչ մոռացայք և ոչ ստեցայք ուխտի
քում , և ոչ դարձայք յետս սրտիք մերովք :
Վարձուցեր զչաւիղս մեր ՚ի ճանապարհաց
քոց , խոնարհ արարեր զմեզ ՚ի տեղի չարչա-
րանաց , և ծածկեցին զմեզ ստուերք մահու
իմէ մոռացեալ իցէ մեր զանուն աստու-
ծոյ մերոյ , կամ ձգեալ իցէ զձեռս մեր
յաստուածս օտարս :

Սակայն աստուած խնդրէ զայս . զի նա
քննէ զգաղտնիս սրտից մերոց :

Ս ասն քո մեռանիմք զօրհանապաղ , հա-
մարեցաք որպէս զոչխար ՚ի զենու մն :

Օ արթիւր ընդէր ննջես տէր . արիւ և մի
մերժեր զմեզ խապառ :

Օ մէ՞ դարձուցանես զերեսս քո ՚ի մէնջ ,
մոռանաս զաղքատութիւն և զնեղութիւնս
մեր :

Խոնարհ եղեն մինչև ՚ի հող անձինք մեր .
և յերկիր կցեցան մէջք մեր :

Արի տէր օգնեա՛ մեզ , և փրկեա՛ զմեզ
վասն անուան քո :

Տունք . ին :

ՍՍՆՄՈՍ . ԽԴ

Ի կատարած . զառանցելոց ժամանակաց . որդւոցն
հորիաց իմաստութեան . Սաղմոս օրհնութեան վասն
սիրելւոցն :

Ի զխեղցէ սիրտ իմ զպատգամս քո բարի ,
և ասացից զգործս իմ թագաւորի :

Ս եզու իմ որպէս գրիչ արագագիր դպրի ,
գեղեցիկ տեսչեամբ քան զամենայն որդիս
մարդկան :

Սխտեցան շնորհք 'ի շրթանց քոց . վասն
այսորիկ օրհնեաց զքեզ ամ յաւիտեանս :
Ե՛՞ժ զուր ընդ մէջ քո հզօր , վայելչու-
թեան և գեղոյ քոյ :

Երբեան ուղղեան և թագաւորեան՝ վասն
ճշմարտութեան հեղութեան և արդարու-
թեան , և առաջնորդեսցէ քեզ սքանչելա-
պէս աջ քու :

Վեաք քո սրեալ են հզօր , և ժողովուրդք
'ի ներքոյ քո անկցին , 'ի սիրտս թշնամեաց
թագաւորի :

Եթոռ քո աստուած յաւիտեանս յաւի-
տենից , դաւազան ուղղութեան՝ դաւա-
զան արքայութեան քու :

Սիրեցեր զարդարութիւն , և ատեցեր զա-
նօրէնութիւն :

Ո՛ր անս այսորիկ էօժ զքեզ աստուած աստ-
ուած քո իւղով ուրախութեան , առաւել
քան զընկերս քու :

Օ մուս և ստաշին և կասիայ 'ի զգեատէ-
քումմէ , 'ի տաճարաց փղոսկրէից , ուստի
ուրախ արարին զքեզ դստերք թագաւո-
րաց 'ի պատիւ :

Կաղցէ դշխոյ ընդ աջմէ քումմէ , 'ի

Հանդերձս ոսկեհուռս զարդարեալ և պա-
ճուճեալ:

Դուք դուստր և տես՝ խոնարհեցո՛ զունկն
քո . մտաս՝ զժողովուրդ քո և զտուն հօր
քո . զի ցանկացաւ Թագաւոր գեղոյ քո:
Սա ինքն է տէր քո՝ երկիրպագցես սմա ,
և դուստր ծուրայ երկիրպագցէ սմա . և
պատարագօք զերեսս սորա պաշտեսցեն
մեծամեծք ՚ի ժողովրդոց:

Մենայն փառք դատեր Թագաւորի ՚ի ներ- 7
քոյ , ՚ի վերջաւորս ոսկեհուռն զարդարեալ
և պաճուճեալ:

Տարցին Թագաւորի կուսանք զհետ նորա ,
և զընկերս նորա տարցին նմա:

Սճցեն ցնծութեամբ և ուրախութեամբ
և տարցին ՚ի տաճար Թագաւորի , և փոխա-
նակ հարց քոց եղիցին որդիք քո:

Կացուցես զնոսա իշխանս ընդ ամենայն եր-
կիր , և յիշեսցի անուն քո ընդ ամենայն
ազգս ազգաց:

Ս ասն այսորիկ ժողովուրդք խոստովանե-
ղիցին առ քեզ , յաւիտեան՝ և յաւիտեանս
յաւիտենից:

Ի կատարած . որդւոցն կորխաց 'ի վերայ 'գաղանեաց :
Սաղմոս գաւթի :

Ըստուած մեր ապաւէն և զօրութիւն .
օգնական 'ի վերայ ներդութեանց՝ ուրք գտին
զմեզ յոյժ :

Մ անն այսորիկ ոչ երկիցուք մեք 'ի խռ-
վել երկրի , 'ի փոփոխիչ լերանց 'ի սիրտս
ծովու :

Գոչեցին և խռովեցան ջուրք նոցա , խռ-
վեցան լերինք 'ի զօրութենէ նորա :

Գնացք գետոց ուրախ առնեն զքաղաքն
աստուծոյ , և սուրբ արար զյարկս իւր
բարձրեալն :

Ըստուած 'ի մէջ նոցա և նորա մի սասա-
նեցին . օգնեսցէ նոցա աստուած 'ի վա-
ղորդենէ մինչև 'ի վաղորդեան :

Խռովեցան հեթանոսք , և խոնարհեցան
Թագաւորութիւնք . ետ զձայն իւր բարձ-
րեալն՝ և խռովեցաւ երկիր :

Տէր զօրութեանց ընդ մեզ , ընդունելի է
մեր աստուած յակորայ :

Եկայք և տեսէք զգործս նոյ , որ արար
զնշանս և զարուեստս 'ի վերայ երկրի :

Եւհար զպատերազմ 'ի ծագաց մինչև 'ի
 ծագս երկրի . զաղեղունս փշրեաց , զգէնս
 խորտակեաց և զասպարս այրեաց հրով :
 Կանխեցէք և ծաներուք՝ զի ես եմ աստ-
 ուած . բարձր եղէց 'ի հեթանոսս , և բարձ-
 րացայց 'ի վերայ երկրի :

Տէր զօրութեանց ընդ մեզ , ընդունելի է
 մեր աստուած յակոբայ :

Տունք . ծա : Գորղայս . ԾԱ :

ՍԱՂՄՈՍ . ԽԶ

Ի հատարած . վասն որդւոցն կորխայ :

Սաղմոս Դաւթի :

Շահա հարէք ամենայն հեթանոսք , աղա-
 զակեցէք առ Խժ 'ի ձայն ցնծութեան :

Տէր բարձրեալ և ահարկու , թագաւոր
 մեծ 'ի վերայ ամենայն երկրի :

Հնազանդ արար զժողովուրդս մեզ , և
 զհեթանոսս 'ի ներքոյ ոտից մերոց :

Ընտրեաց զմեզ իւր 'ի ժառանգութիւն ,
 զգեղեցիութիւն յակոբայ զոր և սիրեաց :

Համբարձաւ աստուած օրհնութեամբ , և

տէր մեր ձայնիւ փողոյ:

Սաղմնս ասացէք աստուծոյ մերում, սաղմնս ասացէք Թաղաւորին մերում սաղմնս ասացէք:

Թաղաւոր մեծ 'ի վերայ ամենայն երկրի
 Ի՞նչ է, սաղմնս ասացէք նմա իմաստութիւնք:

Թաղաւորեաց աստուած 'ի վերայ հեթաւ
 նոսաց . աստուած նստաւ յաթոռ սրբու-
 թեան իւրոյ:

Իշխանք ժողովրդոց ժողովեցան առ աստ-
 ուած արբահամու, զի աստուծոյ զօրու-
 թիւք յերկրէ յոյժ համբարձան:

Տունք . Թ:

ՍՆՆՄՈՍ . ԽԷ

Սաղմնս օրհնութեան որդւոցն կորխայ . երկրորդ
 շաբաթու:

Մեծ է տէր, և օրհնեալ է յոյժ 'ի քաղաք
 աստուծոյ մերոյ, 'ի լեառն սուրբ նորա
 Հաստարմատ ցնծասցէ ցնծութեամբ ամե-
 նայն երկիր . լերինք սիօնի՝ կողմանք հիւ-
 սիսոյ՝ քաղաք Թաղաւորին մեծի:

Մտտուած 'ի տաճարի իւրում յայտնի, 'ի
 Ժամանակի որպէս օգնական լինէր նոցա:

Մհաւասիկ թագաւորութիւնք երկրի ժողովեցան, և անցին ՚ի միասին:

Ինքեանք տեսին այսպէս և զարմացան, խռովեցան սասանեցան, և դողումն կարաւ զնոսա:

Մեղ երկունք որպէս ՚ի ծննդեան, և հողմն սաստիկ փշրեցէ զնաւս ՚ի թարսիս:

Որպէս լուաք՝ սոյնպէս և տեսաք, ՚ի քաղաք տեսան զօրութեանց ՚ի քաղսք աստուծոյ մերոյ:

Ստուած հիմունս էարկ նմա յաւիտեան ընկալաք աստուած զողորմութիւն քո՝ ՚ի մէջ ժողովրդեան քո:

Իստ անուան քում աստուած, սոյնպէս և օրհնութիւն քո ընդ ամենայն տիեզերս, և արդարութեամբ լի է աջ քո:

Աւրախ եղիցի լեառն սիօն, և ցնծացեն դստերք յուզայ՝ վասն իրաւանց քոց տէր: Եւ զնեցարնք զսիօնիւ պաշարեցէք զնա, և պատեցէք զաշտարակս նորա:

Ղեք զսիրտս ձեր ՚ի վերայ զօրութեանց նորա, բաժանեցէք զամուրս նորա, զի պատմել կարա՞լիք յազդ յայլ:

Ու է աստուած աստուած մեր յաւիտեանց:

յաւխտենից, և սա հովուեսցէ զմեզ մինչև
յաւխտեան:

Տունք. ԺԳ:

ՍԱՂՄՈՍ. ԽԸ

Ի հատարած որդւոցն կորխոյ. Սաղմոս արհնութեան
դաւթի:

Եւարո՛ւք զայս ամենայն ազգք, ունկն
դի՛ր լերուք ամենեքեան՝ ոյք բնակեալ
էք յաշխարհի:

Ճնունդք երկրի և որդիք մարդկան ՚ի մի-
ասին, մեծամեծք և անանկք:

Իերան իմ խօսեսցի զիմաստութիւն, և
խորհուրդ սրտի իմոյ զհանճար:

Խոնարհեցուցից յառակումն զունկն իմ.
բացից առակաւ զբերան իմ, և խօսեցայց
զառակս ՚ի սկզբանէ:

Ինդէ՛ր բնաւ երկնչիմ ես յաւուր չարի,
զի անօրէնութիւնք գնացից իմոց շուրջ
եղեն զինս:

Յուսացեալք ՚ի զօրութիւն իւրեանց, ՚ի
բազմութիւն մեծութեան իւրեանց պար-
ծեսցին:

Եղբայք ո՛չ փրկէ՛ և ո՛չ փրկէ մարդ և ո՛չ

տայ աստուծոյ զփրկանս իւր , և ոչ զգինս
փրկանաց անձին իւրոյ :

Վ) աստակեան յաւիտեան , և կեցցես մինչ
խապա , և ոչ տեսցես զասպականութիւն :
Յորժամ տեսցես թէ իմաստունք մեռա-
նին , 'ի միասին անզգամք և անմիտք կորի-
ցեն , և թողցեն օտարաց զմեծութիւն
իւրեանց :

Կերեզմանք նոցա տունք նոցա եղիցին
յաւիտեան , և յարկք նոցա ազգէ մինչև
յազգ , և կարգացին անուանք նոցա 'ի
հօղս իւրեանց :

Վ) արդ 'ի սպատուի էր և ոչ իմացաւ , հա-
ւասարեցաւ անասնոց անբանկոց և նմանե-
ցաւ նոցա :

Ն) յա ճանապարհ է գայթակղութեան նոցա
նոցին . յետ այսորիկ բերանօք իւրեանց
հաճեսցին :

Որպէս խաշն 'ի դժոխս մատնեսցին , և մահ
հովուեսցէ զնոսա , և տիրեսցեն նոցա ու-
ղիղք ընդ առաւօտս :

Օ) գնութիւնք նոցա մաշեսցին 'ի դժոխս ,
և 'ի փառաց իւրեանց անկցին :

Բայց սակայն՝ աստուած փրկեսցէ զանձն իմ

Ի ձեռաց դժոխոց, յորժամ ընդունին զիս
 Ս Ի երկնչիր յորժամ մեծանայ մարդ, և
 յորժամ բազում լինին փառք տան նորա:
 Օ Ի ոչ թէ Ի մեռանիլն իւրում առցէ
 ընդ իւր զամենայն, և ոչ թէ իջեն փառք
 տան նորա ընդ նմա:

Մ Ե անձն նորա Ի կեանս իւրում օրհնեացի,
 և խոստովան եղիցի քեզ յորժամ բարի
 արասցես դու նմա:

Ս Կցէ նա մինչև յազգ հարց իւրոց. մինչև
 յաւիտեան զլոյս մի տեսցէ:

Ս արդ Ի պատուի էր և ոչ իմացաւ, հաւ
 ւասարեցաւ անասնոց անբանից և նմանեացաւ
 նոցա:

Տունք. Ի. Գորգայս. ԻԲ:

ՍՆԱՄՈՍ. ԽԹ

Սաղմոս Դաւեթի:

Մտուած աստուծոց տէր խօսեցաւ, և
 կոչեաց զերկիր յարեւելից մինչև Ի մուտս
 արեու:

Ի սիօնէ մեծ վայելչութիւն փրկութեան
զեզոյ նորա:

Սատուած մեր յայանապէս եկեացէ, և
աստուած մեր մի դադարեացէ:

Հուր առաջի նորա բորբոքեցի, և շուրջ
դնովաւ մրրիկ յոժ:

Կոչեացէ զերկինս ՚ի վերուստ՝ և զերկիր ՚ի
դասել զժողովուրդ իւր, ժողովել առ ինքն
զսուրբս իւր. և ոյք զնեն զսլաւարագս
ուխտից ՚ի վերայ սեղանոյ նորա:

Պատմեցեն երկինք զարդարութիւն նորա,
զի աստուած դատաւոր է:

Սուր ժողովուրդ իմ և խօսեցայց ընդ քեզ,
և խորայէլ՝ քեզ վկայեցից. զի աստուած
աստուած քո ես եմ:

Ոչ թէ վասն սլաւարագաց քոց կշտամ
քեմ զքեզ. զի ողջակէզք քո առաջի իմ են
յամենայն ժամ:

Ոչ ընդունիմ ՚ի տանէ քումմէ զուարակս,
և ոչ ՚ի հօտից քոց նոխազ:

Իմ է ամենայն գազան անտառի, երէ լե-
րանց և ամենայն անասուն:

Վիտեմ ես զամենայն թռչունս երկնից,
զեղեցկութիւն վայրի ընդ իս է:

Թէ քաղցեայց, քեզ ինչ ոչ ասացից : զի
իմ է աշխարհ լինել իւրով :

Ո՛չ ուտեմ ես զմիս զուարակաց քոց, և ոչ
զարիւն նոխազաց քոց ըմպեմ :

Ստո՛ն աստուծոյ պատարագ օրհնութե՛ն,
կատարեա՛ւ բարձրելոյն զուխոս քո :
կարգացես առ իս յաւուր նեղութեան
քո, ես փրկեցից զքեզ՝ և դու փառաւոր
արացես զիս :

Սակայն մեղաւորին ասէ աստուած . իսկ
դու ընդէ՛ր բնաւ պատմես զարդարութիւն
իմ, կամ առնուս զուխոս իմ ՚ի բերան քո :

Օ ի դու ատեցեր զխրատ իմ, մերժեցեր
և յետս ընկեցեր զամ բանս բերանոյ իմոյ :

Թէ տեսանէիր զգողս՝ ընթանայիր ընդ
նոսս, և ընդ շունս դնէիր զբաժին քո :

Բերան քո յաճախէր զչարութիւն, և լե-
զու քո նիւթէր զնենդութիւն :

Վստեալ զեղբօրէ քու մէջ շարախօսէիր, և
՚ի վերայ որդւոյ մօր քո դնէիր զգայթակ-
ղութիւն :

Օ այս ամենայն արարեր և լուցի քեզ .
կարժեցեր անօրէնդ ՚ի մտի քում, թէ և ես
քեզ նմանիցեմ :

Մ.րդ յանդիմանեցից և կացուցից զայս
ամենայն առաջի քո . իմացարնոք ամենե-
քեան՝ որոց մտացեալ իցէ զաստուած :
Գուցէ երբէք յափշտակիցիք , և ոչ հք իցէ
որ փրկիցէ :

Պատարագ օրհնութեան փառաւոր ա-
րացէ զիս . և անդ է ճանապարհ՝ ուր ցու-
ցից նմա զփրկութիւն աստուծոյ :

Տունք . իհր :

ՍԱՂԽՈՍ . Ծ .

Ի կատարած . Սաղմոս դաւթի . 'ի ժամանակի զի եկն
առ նա նախնան մարգարէ , իբրև զի մտեալ էր նա առ
բերսաբէկ :

Ողորմեան ինձ աստուած ըստ մեծի ողոր-
մութեան քում . ըստ բազում գթութեան
քում քաւեան զանօրէնութիւնս իմ :

Մաաւել լուան զիս յանօրէնութենէ իմմէ .
և 'ի մեղաց իմոց սուրբ արա զիս :

Օ անօրէնութիւնս իմ . ես ինձէն դիտեմ ,
և մեղք իմ առաջի իմ են յամենայն
ժամ :

Իւեզ միայն մեղայ աէր , և չար առաջի
քո արարի :

Արպէս արդար եղիցիս 'ի բանս քո , և յաղ-
թող 'ի դատել դաս :

Անօրէնութեամբ յղացաւ , և 'ի մեղս ծնաւ
զիս մայր իմ :

Դու տէր զճշմարտութիւն սիրեցեր , զան-
յայտս և զճածկեալս իմաստութեամբ քով
յայտնեցեր ինձ :

Յօղեան յիս մշտիաւ և սուրբ եղէց , լուս
և քան զձիւն սպիտակ եղէց :

Դսերի արս ինձ զցնծութիւն և զուրա-
խութիւն , և ցնծացեն ոսկերք իմ տա-
ռապեալք :

Դարձն զերեսս քո 'ի մեղաց իմոց . և զա-
մենայն անօրէնութիւնս իմ քաւեան յինէն :

Միրս սուրբ հաստատեան յիս աստուած ,
և հոգի ուղիղ նորոգեան 'ի փոքի իմում :

Մի ընկենուր զիս տէր յերեսաց քոց , և
զհոգի քո սուրբ մի հաներ յինէն :

Տուր ինձ ցնծութիւն փրկութեան քոց , և
հոգւով պետութեան քոց հաստատեան զիս :

Աւուցից անօրինաց զճանապարհս քո , և
ամբարիշտք առ քեզ դարձցին :

Փրկեան զիս յարենէ աստուած աստուած
փրկութեան իմոց . ցնծացէ լեզու իմ

յարդարութեան քում:

Տէր եթէ զչրթունս իմ բանաս, բերանս
 իմ երդեցե՛ք զօրհնութիւնս քո:
 Թէ կամեցեալ էիր պատարագս մատու-
 ցանէսք. բայց դու ընդ ողջակէզս խկնիչ
 հաճեցար:

Պատարագ աստուծոյ հոգի խոնարհ, զսիրտ
 սուրբ, և զհոգի խոնարհ աստուածնիչ ար-
 համարէ:

Եւրի արա տէր կամօք քովք սիօնի, և
 շինեցցին պարխալքն երուսաղէմի:

Հայնժամ հաճեցցիս ընդ պատարագս ար-
 դարութեան. յորժամ ուխտից պատարագս
 հանցենն ՚ի սեղանս քո զուարակս:

Տունք. ՚ի:

ՍԱՂՄՈՍ. ԺԵ

Ի կատարան խնատութեան, Սաղմոս դաւթի. ՚ի ժա-
 մանակի զի եկն դովեկ եգովմայ, պատմեաց սաւուղայ,
 եւ անաւասիկ դաւթի ՚ի տանն աքիմեւելքայ է:

Ո՛ր պարծի ՚ի չարութեան հզօր զանօրե-
 նութիւն. զօրհանապազ զանիրաւութիւն
 խորհեցաւ ՚ի լեզուի իւրում:

Արպէս զածելի սուր սրեաց զնենդութիւն,

սիրեաց զչարութիւն քան զբարութիւն ,
 զանօրէնութիւն քան զկօսս արդարութիւն :
 Սիրեաց նա զամենայն խօսս կործանման ,
 և զլեզուս նենգաւորս :

Վասն սցտորիկ աստուած կործանեացէ զնա
 խապառ , խլեացէ և հանցէ զնա յարկաց
 իւրոց , և զարմատս նորա յերկրէն կեն-
 դանեաց :

Տեսցեն արդարք և երկիցեն , զնովաւ ծի-
 ճաղեսցին և ասասցեն :

Ըյս սյր է որ ոչ արար զաստուած իւր
 օգնական . սյլ յուսացաւ սա ՚ի բազում
 մեծութիւն իւր , և զօրացաւ ՚ի նանրու-
 թեան իւրում :

Ըյլ ես որպէս ձիթենի պտղալից ՚ի տան
 աստուծոյ . յուսացայ յոգորմութիւն աս-
 տուծոյ յաւիտեան և յաւիտեանս յա-
 ւիտենից :

Իտաստովան եղէց քեզ տէր յաւիտեան զի
 արարեր . և համբերից անուան քում , զի
 քաղցր ես առաջի սրբոց քոց :

Տունք . Ը . Գորգոյս . ծք :

ՍԱՂՄՈՍ . ԾԲ

Ի կատարան . վան մաղաղեթաց . իմաստութիւն
Դաւթի :

Մասց անզգամն ՚ի սրտի իւրում թէ՛ ոչ
զոյ աստուած . ապականեցան և պղծեցան
յանօրէնութեան իւրեանց , և ոչ ոք է որ
առնէ զքաղցրութիւն :

Մտուած յերկնից նայեցաւ յամենայն որ-
դիս մարդկան , տեսանել թէ իցէ որ իմաս-
տուն որ խնդրիցէ զաստուած :

Վնենեքեան խտտրեցան ՚ի միասին , և ան-
պիտանացան :

Ոչ ոք է որ առնէ զբարի , և չէ որ մինչև
՚ի մի :

Որպէս ոչ ծանիցեն ամենեքեան , ոչք գոր-
ծեն զանօրէնութիւն :

Ոչք ուտին զժողովուրդ իմ որպէս կե-
րակուր հացի , և առ աստուած ոչ կար-
գացին :

Նոգ երկիցեն զերկիւղ ուր ոչ իցէ եր-
կիւղ . զի աստուած ցրուեցէ զոսկերս
մարդահաճոյից :

Վճառեցեն և յամօթ լիցին , զի աստուած
անարդեաց զնոսա :

Մտացէ ՚ի սիօնէ զփրկութիւն իսրայէլի .
 ՚ի դարձուցանել տեսան զգերութիւն ժողովրդեան իւրոյ , ցնծացէ յակօք և ուրախ եղիցի իսրայէլ :

Տունք . Թ :

ՍԱՂՄՈՍ . ԺԳ

Ի կատարած . ընդ օրհնութիւնս իմաստութիւն դաւթի .
 ՚ի ժամանակի զի եկին զիփազիքն , և ասնն ցաւաւղ
 ահա ասիկ դաւթ թագուցեալ նստի առ մեզ :

Աստուած յանուան քում կեցն զիս , և ՚ի
 դօրութեան քում իրան արա ինձ :

Աստուած ընդ աղօթից իմոց , նւնկն դիր
 բանից բերանոց իմոց :

Օտարք յարեան ՚ի վերայ իմ , և հզօրք
 ինդրեցին զանձն իմ , և ոչ համարեցան
 զքեզ աստուած առաջի իւրեանց :

Ահա աստուած օգնական իմ , և տէր ընդ
 դուեօղ հոգւոյ իմոց :

Ի դարձուցանել զչարն . ՚ի թշնամիս իմ ,
 ճշմարտութեամբ քով սատակեան զնստա
 ւս կամօք իմովք պատարագս մատուցից
 քեզ . և խոստովան եղէց անուան քում
 տէր զի բարի է :

Յամենայն նեղութենէ իմէ փրկեցեք
զիս, և ՚ի թշնամիս իմ ետես ակն իմ:

Տուրք. Է:

ՍԱՂՄՈՍ. ԾԴ

Ի կատարած ընդ որհնութիւնս իմաստութեան.

Սաղմոս դաւթի:

Մենկն դիր աստուած աղօթից իմոց, և մի
անտես առներ զինդբուածս իմ:

Նայեա՛ առ իս և ընդ ինձ. զի արամեցայ
ես ՚ի ձանձրանալ իմում և խռովեցայ:

Ի ձայնէ թշնամւոյն և ՚ի նեղել մեղաւո-
րին՝ խտարեցան յիս անիրաւութեամբ,
բարկութեամբ ոխս պահէին ինձ:

Միտ իմ խռովեցաւ յիս, և երկիրդ մահու
անկաւ ՚ի վերայ իմ:

Մէ և դողումն եկն ՚ի վերայ իմ, և ծած-
կեաց զիս խաւար:

Մասցի տայր որ ինձ զթես որպէս զաղաւ-
նոյ. զի թռչէի վերանայի, և հեռացեալ
դադարէի յանապատի:

Մկն ունէի աստուծոյ որ փրկէր զիս ՚ի
կարճմտութենէ զայրանարոյ, և ՚ի մրկեալ
նեղարտութենէ:

Քնկր՛ աէր և բաժանեա՛ն զլեզուս նոցա ,
 զի աեսի զանօրէ՛նութիւն և զհակառակու-
 թիւն ՚ի քաղաքի :

Ի տուէ և ՚ի գիշերի շուրջ եղևն զպարսպօք
 նորա անօրէ՛նութիւնք . չարիք և մեղք են
 ՚ի մէջ նոցա . և ոչ պակասեաց ՚ի հրապա-
 րակաց նոցա վաչիս և նենդութիւն :

Օ ՚ի թէ թշնամւոյն նախատեալ էր՝ համ-
 բերէի արդեօք , կամ ատելւոյն մեծաբան-
 եալ էր ՚ի վերայ իմ՝ թագչէի արդեօք ՚ի
 նմանէ :

Իսկ դու մարդ հաւասար իմ , առաջնորդ
 իմ և ծանօթ իմ :

Վապքէն ՚ի նոյն քաղցրացուցեր ինձ և
 քեզ կերակուր , զի գնայաք միաբանու-
 թեամբ ՚ի տան աստուծոյ :

Եկեացէ մահ ՚ի վերայ նոցա , և կենդանւ-
 ոյն իջցեն ՚ի գժոխս . զի չարութիւն է ՚ի
 բնակութեան նոցա և ՚ի մէջ նոցա :

Ես առ աստուած կարդացի , և նա լուաւ
 ինձ յերեկոյս՝ ՚ի վաղօրդայն ՚ի հասարակ
 աւուր :

Պատմեցի և ասացի և լուիցէ ձայնի ի-
 մում . փրկեացէ խաղաղութեամբ զանձն

Լմ ՚ի մերձաւորաց խնոց , զի կարեօք հա-
սին ՚ի մերայ խմ :

Ղուիցէ աստուած և խոնարհ արասցէ ըզ-
նոսա , որ յառաջն է քան զյաւխտեանս :

Օ ՚ի ոչ գոյր նոցա փոխանակ , և ոչ եր-
կեանք յաստուծոյ :

Չգեաց զձեռն իւր ՚ի հատուցանել նո-
ցա , և նոքա պղծեցին զօրէնս նորա :
Նաժանեցան ՚ի սրամտութենէ երեսաց
նորա . և եհան ՚ի սիրտս նոցա :

Կակուղ էին բանք նոցա քան զձէ՛թ , և
ինքեանք որպէս սլաք :

Բնկեան ՚ի տէր զհոգս քո և նա կերակրէ
զքեզ , և ոչ տայ յաւխտեան սասանութիւն
արդարոյ :

Ղու աստուած իջուցես զնոսա ՚ի դուք
ապականութեան , արք արիւնահեղք և
նենգաւորք մի հասարակեցեն զաւուրս
իւրեանց . այլ ես ՚ի քեզ տէր յուսացայ :

Տունք . ի՛ն : Գորղայս . 119 :

Կանանս Գորղայս . է : Սաղմոս . ԺԺ : Տունք . 119 :



ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՄԵՃԻՆ ՄՈՂԱԼՍԻ ԱՍՏՈՒՆ
ԾԱՏԵՍ ՄԱՐԳԱՐԻՒ

Թ. Օրինաց. Ը.

Օ ի հուր բորբոքեցաւ ՚ի բարկութենէ
իմմէ . այրեցէ և իջցէ մինչ ՚ի դժոխս
ներքինս :

Կերկցէ զերկիր . և զամենայն բոյս երկրի
նոցա . վառեցին հրով , և բորբոքեցին
հիմունք լերանց նոցա :

+ Կուտեցից զչարիս ամենայն ՚ի վերայ նոցա ,
և նեախւք իմովք սպառեցից զնոսա :

9 Մաշեալք և հիւժեալք ՚ի սոխոյ , դաղա-
նաբեկ զեշ անկեալ ամ թռչնոց երկնից :
Լարս առանց բժշկութեան՝ արձակեցից
՚ի վերայ նոցա զգազանս անապատի . ուր
այսր և անդք քարշեցեն զնոսա ընդ երկիր :
Արտաքուստ մանկակոտորս արասցէ զնոսա
սուր , և ՚ի ներքուստ շտեմարանաց նոցա
անտի արհաւիրք ասից :

Օ երթաասարդս նոցա կուսանօք հանդերձ ,
և զաղայս հաստատելովք ծերովք հան-
դերձ :

Նսացի թէ ցրեցից զնոսա . և դադարեցուցից զխշատակս նոցա յազգաց :
 Թէ ոչ վասն բարկութեան սրամտութեան
 Թշնամւոյն , զի մի երկայնակեացք և զիցին .
 և մի բարձրացին հարտացեալ
 Թշնամիքն , և ասացեն :

Թէ ձեռն մեր բարձր է , և բազուկ մեր
 հզօր . և ոչ տէր աստուած արար զայս
 ամենայն :

Օ ի ազդ մի խորհրդակորոյսք են նորա .
 և ոչ գոյ ՚ի նոսա իմաստութիւն , և ոչ խորհեցան
 ՚ի միտ առնուլ զայս ամենայն . և արդ՝
 ընկալցին զամօթ յանձինս իւրեանց :
 Օ արմանք մի մեծ այս են . զխմբդ մին ըզհազարս
 հալածեցէ , կամ երկուք զբիւրս
 շարժեցեն :

Թէ ոչ տեառն աստուծոյ մատնեալ էր ըզնոսա ,
 և տուեալ իցէ զնոսա ՚ի ձեռս
 Թշնամեաց նոցա :

Օ ի ոչ են դիք նոցա որպէս զաստուած
 մեր . այլ թշնամիք մեր վատախորհուրդք :
 Հայդւոյն սողոմայ էր որթ նոցա , և
 տունք նոցա ՚ի դոմորայ :

Իսաղող նոցա խաղող դառնութեան , և

ողկոյզ նոցա 'ի դառնութեան լեղոյ :
 Արամտութիւն բարկութեան վիշապաց
 գինի նոցա . սրամտութիւն խից՝ անհնա-
 րին առանց բժշկութեան :

Ո՞չ այս ամենայն ժողովեալ է առիա , և
 կնքեալ պահի 'ի գանձի խնում :

Յաւուր վրիժուց հատուցման հատուցից
 նոցա , 'ի ժամանակի յորում հարցի դ. քա-
 րի ոտն նոցա :

Սերձ է օր կորստեան նոցա . հասեալ է
 պատրաստութեամբ տէր 'ի վերայ նոցա :
 Վատէ տէր զժողովուրդ իւր . և 'ի ծա-
 ռայս իւր մխիթարի :

Օ ի ետես զնոսա լքեալս լուծեալս , և
 մատնեալս 'ի գերութիւն :

Եւ ասիցէ տէր՝ ո՞ւր են դէքն ձեր՝ յորս
 յուսացեալ էիք դուք 'ի նոսա . զորոց ըզ-
 ճարպս սպանդիցն ուտէիք , և ըմպէիք ըզ-
 գինի զոհիցն :

Եւրդ՝ յարիցեն օգնեացեն , և եղիցին ձեզ
 թիկունք :

Նախներուք և տեսէք՝ զի ես եմ . և ոչ
գոյ այլ աստուած բաց յինէնս :

Ես սպանանեմ և ես կեցուցանեմ, հարկա-
նեմ և ես բժշկեմ . և ոչ որ իցէ որ հանիցէ
զձեզ ՚ի ձեռաց իմոց :

Համբարձի յերկինս զձեռս իմ . երդուայ
աջով իմով, և ասացի թէ կենդանի եմ ես
յաւիտեանս :


Արեցից որպէս փայլակն զսուսեր իմ, և ՚ի
խնդիր վրիժուց արձակեցից զաջ իմ :

Հատուցից զհատուցումն թշնամեաց ի-
մոց . և ատելեաց իմոց հատուցից զհատու-
ցումն նոցա նոցինս :

Արբեցուցից զնեռս իմ յարենէ նոցա, և
սուր իմ կերիցէ միս յարենէ վերաւորելոց
զերբելոց գլխոց իշխանաց՝ թշնամեաց նոցա :
Աւրախ եղիցին երկինք նովաւ, և երկիր-
պագցցեն նմա ամենայն որդիք աստուծոյ :
Աւրախ եղերուք հեթանոսք ընդ ժողովըր-
դեան նորա, և զօրացուցցեն զնա ամենայն
հրեշտակք աստուծոյ :

Ինդրելով խնդրեցաւ վրէժ արեան որդ-

ւոյ նոցա , և հատուցումն թշնամեաց
 նոցա՝ հատուցաւ նոցա
 Հատուցումն ասեղեաց նոցա հատուցաւ
 նոցա . և սրբեացէ տէր զերկիր ժողովրդեան
 իւրոյ :
 Փառք հօր և որդւոյ և :



ՄԱՂԹԱՆԻ

Դու ես տէր մեր՝ դու ես բրիտանս փրկիչ մեր ,
 զքեզ օրհնեն անձինք մեր :
 Սարգստէր տէր՝ վասն սր :

Քարոզ և աղօթք՝ Մի նախանձիր , և խոստովան
 կանոնացն :

Ս ասն ուղղելոյ զգնացս մեր ՚ի ճանապարհս
 խաղաղութեան՝ զտէր աղաչեսցուք :

Տէր ողորմեան :

Ս ասն ցրելոյ ՚ի մէնջ զամենայն խորհուրդս շա-
 րին՝ զտէր աղաչեսցուք :

Ս ասն պարգևելոյ մեզ առողջ խորհուրդս և
 առաքինի վարս՝ զտէր աղա :

Ս ասն սրահելոյ զմեզ ընդ հովանեաւ ամենա-
 զօր աջոյն իւրոյ՝ զտէր աղա :

Ս ան խորասկե լոյ զհակառակորդն վազվարդս
կի ընդ ոսիւք մերովք՝ զտէր աղա:

Ս ան հոգւոցն հանգուցելոց՝ որք ճշմարիտ
և ուղիղ հաւատով ՚ի բրիստոս ննջեցին՝ զտէր
աղաչեցուք:

Եւ ևս միաբան վասն: Օ անձինս մեր և:
Սղորակեաց:

ԱԴԹԲ:

Տէր երկնի և երկրի՝ արարիչ ամենայն արա-
րածոց երեւելաց և աներևութից: Առ քեզ
կարդանք յամենայն ժամ . զի ընդ ամենայն տե-
ղիս է տէրութիւն քո , և արքայութիւն քո ա-
մենեցուն տիրէ: Հնորէն մեզ երկիրդիւ ՚ի
պաշտօն քո կանխել հանապազ , սիրել զքեզ ՚ի
բոլոր սրտէ և ՚ի բովանդակ մտաց , և յամենայն
զօրութենէ մերմէ սրահել զպատուիրանս քո:
Համբառնալ առ քեզ զձեռս մեր ՚ի սրբութիւն
առանց բարկութեան և երկմտութեան . և գր-
տանել ՚ի քէն զհնորէս և զողորմութիւն , և զա-
ռաքինատէր գործոցն յաջողութիւն: Ս ան զի
դու ես տէր կենաց և աստուած ողորմութեանց .
և քեզ վայելէ՛ փառք իշխանութիւն և պա-
սիւ , այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից ,
ամէն:

Խաղաղութիւն՝ ամենեցունս
Աստուծոյ երկիրագեացուք:

Քում ամենագոր և յաղթող տէրութեանդ
կրկնի ամենայն ծունր յերկրագութիւն . և փա-
ռաւորի յամենեցունց թագաւորութիւն քոս
Վայեան յերկրագութիւնս մեր , և ուսն մեզ
առնել զարդարութիւն ճշմարտութեանս ॥ ան-
դի դու ես աստուած խաղաղութեան , որ բար-
ձեր զթշնամութիւն ՚ի միջոյ , և արարեր զխաղա-
ղութիւն յերկինս և յերկրի . հեռաւորաց և
մերձաւորաց աւետարանեցեր զնոր պարգևս
քոյնն բարեացդ : ॥ քում և զմեզ մեծի շնոր-
հացդ արժանաւորս արացես , դասելով ընդ
ճշմարիտ երկրագուս քո . աստուած մեր՝ և
տէր մեր , և փրկիչ յիսուս քրիստոս : ॥ ր ես օրհ-
նեալ ընդ հօր և ընդ սուրբ հոգւոյդ , այժմ և
միշտ և յաւիտեանս յաւիտենից , ամէնս

Մ աղ թ ա ն ք :

Յերգս օրհնութեան և ՚ի ձայն սաղմոսաց ան-
դադար փառաւորեմք զհայր և զօրդի և զսուրբ
հոգիդ , այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտե-
նից , ամէնս

() րհնեալ տէր մեր յիսուս քրիստոս , ամէնս
Հայր մեր որ յերկինս :



Es lebe der Jung!





ՍՆՂՄՈՍ . ԺԵ

Ի կատարած . վասն ժողովոցեանն , որ ՚ի սրբոյն հեռա-
ցեալ էին . ՚ի ժամանակի զի կտրան զնա այլազգիքն ՚ի
գլխ . Յարձանադիր .

Սաղմոս Դաւթի :

Որորմեա ինձ աստուած՝ զի կոխեաց զիս
մարդ . զօրհանապազ պատերազմուէր նե-
ղեցին զիս :

Կոխեցին զիս թշնամիք իմ զօրհանապազ ,
բազումք էին ոյք մարտնչէին ընդ իս ՚ի
բարձանց :

Ի տուէ ես ոչ երկեաց զի ՚ի տէր յուսա-
ցայ . աստուծով գոյեցից զբանս իմ . յաստ-
ուած . յուսացայ՝ և ոչ երկեաց , զի արաս-
ցէ ինձ մարդ :

Օրհանապազ զբանս իմ անարգեցին ,
զինէն էին խորհուրդք նոցա ՚ի չարութեանն :
Պանդուխտք եղիցին և թաքթաքուրք շր-
ջեցին . նոքա գարշապարի իմուճ սպասես :

ցեն՝ որպէս և սպասէին անձին խնայ
 Արպէս առ ոչնչէ մերժեացես զնոսա, բար-
 կութեամբ զժողովուրդս հնազանդեցուս-
 ցես:

Եստուած զկեանս իմ պատմեցից քեզ .
 եղից զարտասուս իմ առաջի քո՝ որպէս
 խոստացար դու ինձ:

Վարձցին թշնամիք իմ յետս իւրեանց .
 յաւուր յորում կարդայից առ քեզ:

Եհա ծանեայ զի աստուած իմ ես դու .
 զաստուած օրհնեցից ՚ի բանս իմ, և զտէր
 դոյնեցից ՚ի խօսս իմ. յաստուած յուսացայ
 և ոչ երկեացց՝ զի արասցէ ինձ մարդ:

Յինչն են ուխտք իմ, զոր տաց քեզ օրհ-
 նութեամբ աստուած աստուած իմ:

Փրկեցեր զանձն իմ ՚ի մահուանէ, զաչս
 իմ յարտասուաց, և զոտս իմ ՚ի դայթակ-
 դութենէ. հաճոյ եղէց առաջի տեառն
 յերկրին կենդանեաց:

Տունք . Ժես:

ՍԱԼՄՈՍ . Ծ. Զ

Ի կատարած մի ապականէր . Սաղմոս դաւթի յարձա-
նագիր . 'ի ժամանակի՛ զի փախուցեալ թաքուցեալ էր
նա յերեսաց սաւուզայ՝ յայրի անդ :

Ողորմեա՛ ինձ աստուած ողորմեա՛ ինձ , զի
'ի քեզ յուսացաւ անձն իմ :

Ի հովանի թևոց քոց յուսացայց , մինչև
անցցէ անօրէնութիւնս :

Ազազակեցի առ աստուած բարձրեալ , առ
աստուած բարերար իմ :

Առաքեաց յերկնից և կեցոյց զիս . եղ 'ի
նախատինս որք կոխէին զիս :

Առաքեաց աստուած զողորմութիւն և բզ-
ջմարտութիւն իւր , և փրկեաց զանձն իմ ,

'ի միջոյ դազանաց , զի ննջէի ես խռովեալ :

Որդւոց մարդկան ատամունք իւրեանց զէն
և նետք են , և լեզուք նոցա որպէս զսուր
սուսերի :

Բարձրեալ ես դու յերկինս աստուած , և
յամենայն երկրի են փառք քո :

Որոգայթք պատրաստեցին ոտից իմոց , խո-
նարհ արարին զանձն իմ . փորեցին առաջի

իմ խորխորատ , և անկան ինքեանք 'ի նոյն :

Պատրաստ է սիրտ իմ աստուած , պատ-

րաստ է սիրտ իմ օրհնել , և սաղմոս ասել
 քեզ փառք իմովք :

Օ արթիք փառք իմ , զարթիք սաղմոսիւք
 և օրհնութեամբ . և ես զարթեացց առաւօ
 տուց :

Խոստովան եղէց քեզ 'ի ժողովուրդս տէր ,
 և սաղմոս ասացից քեզ յազնես :

Մեծ եղև մինչև յերկինս ողորմութիւն
 քո . մինչև յամպս ճշմարտութիւն քո :

Բարձրեալ ես դու յերկինս աստուած , և
 յամենայն երկրի են փառք քո :

Տունք . Ժ Գ :

ՍԱԼՄՈՍ . Ժ Է :

Ի կատարած . մի ապականեր . յարձանագիր .
 Սաղմոս դաւթի :

Թե արդարև զարդարութիւն խօսէիք , և
 ուղիղս դատէիք որդիք մարդկան :

Քանզի և արդ իսկ 'ի սրտի ձերում զանօ-
 րէնութիւն գործէք յերկրի . զանիրաւու-
 թիւն ձեռք ձեր նիւթեն :

Օտար եղեն մեղաւորք 'ի մօրէ , խաբեցան
 յարգանդէ և խօսեցան սուտ :

Սրտմտութիւն նոցա ըստ նմանութեան

օձի, որպէս իժի և քարբի զի խցեալ է զա-
կանջս իւր:

Օ ի մի լուիցէ նա զձայն Թովչի ճար-
տարի, և մի առցէ զդեղ ՚ի դեղատուէ
խմասանոյ:

Ատուած փշրեսցէ զատամուճս նոցա ՚ի
բերանս իւրեանց, և զժանիս առիւծուց
խորտակեաց տէր:

Անարդ եղիցին նորա որպէս ջուր զի հե-
ղանի, ՚ի լարել աղեղան նորա տկարացին
որպէս մոմ զի հալի, և սպառեսցին:

Անկաւ հուր և ոչ տեսին զարև մինչև ՚ի
միտ առեալ էր զփուշս իւրեանց. որպէս
զժնիկ բարկութեամբ կենդանւոյն կիզցէ
զնոսա:

Աւրախ եղիցի արդարն յորժամ տեսցէ ըզ-
հատուցումն, և զձեռս իւր լուացէ յար-
եան մեղաւորի:

Լու սասացէ մարդ, թէ արդարև գուցէ
պտուղ արդարոյ, և է աստուած որ դատի
զնոսա յերկրի:

Տունք. Ժ: Գորդաց. 17:

Ի կատարած մի ապականեր · յարձանագիր · Սաղմոս
Դաւթի · Ի ժամանակի զի առաքեաց սաւուղ · և պաշա-
րեաց զտուն նորա, զի սպանցէ զնա:

Փրկեա՛ զիս Ի թշնամեաց իմոց աստուած,
յայնցանէ՛ ոյք յարուցեալ են Ի վերայ իմ՝
ապրեցո՛ զիս:

Փրկեա՛ զիս յայնցանէ՛ ոյք գործեն զանօ-
րէնութիւն, յարանց արիւնահեղաց ապ-
րեցո՛ զիս:

Որսալ զանձն իմ կամեցան, և հասին Ի
վերայ իմ հզօրք:

Ոչ մեղք իմ և ոչ յանցանք, առանց մեղաց
ընթացայ և ուղիղ եղէ:

Օ արթիր ընդ առաջ իմ և տես, գու տէր
զօրութեանց աստուած խորայէլի:

Նայեաց և այց արա ամենայն հեթանո-
սաց, մի ողորմիր ամենեցուն՝ ոյք գործեն
զանօրէնութիւն:

Գարձցին ընդ երեկոյս, սովեցցին որպէս
շունք և շրջեցցին զքաղաքաւ:

Նորա զօղանջեցեն բերանօք իւրեանց, և
սուր է Ի շրթունս նոցա:

Իսկ արդ ո՞վ լուաւ զայս, զի գու տէր

Ճիծաղեցիս զնորք , և արհամարհեցես
զամենայն հեթանոսս :

Օ զօրութիւն իմ առ քեզ պահեցից , զի
աստուած օգնական իմ է :

Աստուած իմ՝ ողորմութիւն նորա կան-
խեցէ առ իս , և աստուած իմ ցուցցէ ինձ
ի թշնամիս իմ :

Մի սպանաներ զնոսա , զի մի մոռացին
զժողովուրդս քու :

Յրուեալ զնոսա զօրութեամբ քով և ընկ-
ճեալ զնոսա . զի դու ես սլաշտպան իմ տէր :

Մեղք բերանոյ նոցա և բանք շրթանց
նոցա , ընկլցին նոքա յամբարտաւանու-
թեան իւրեանց :

Հանէ ծս և ի ստութիւնս մատնեցին , ի
կատարածի բարկութեան սպառեցին , և
մի դացին :

Ղիտացեն զի աստուած տիրէ յակօբայ ,
և ամենայն ծագաց երկրի :

Դարձցին ընդ երեկոյս , սովեցին որպէս
շունք և շղեցին զքաղաքաւ :

Նոքա սփռեցին յուտել , ապա թէ ոչ
յազեցին տրանջեցեն :

Եւ օրհնեցից զօրհնութիւնս տեառն . և

ցնծացայց առաւօտուց յողորմութեան
քում:

Օ ի եղեր իմ պաշտպան և տուն ապա-
ւինի, յաւուր նեղութեան իմոյ օգնա-
կան իմ:

Քեզ սաղմոս ասացից աստուած ապաւէն
իմ, աստուած ողորմութեան իմոյ:

Տունք - ին:

ՍԱՂՄՈՍ · ԺԹ

Սաղմոս դաւթի - արձանագիր - ՚ի կատարած - զառան-
ցելոց ժամանակաց առ ուսմանէ: ՚ի ժամանակի զի հրձիգ
արար նա զմիջագետս և զասորեստանն սոփոզայ, և ՚ի
դարձին հարկաներ յովաբ զձորն աղտից յերկոտասան
հազարս:

Աստուած մերժեցեր և աւերեցեր զմեզ,
բարկացար և զթասցիս ՚ի մեզ:

Շարժեցեր զերկիր և խառլեցուցեր զա-
բժշկեան զհարուածս սորա զի սասանեցաւ:

Յուցեր ժողովրդեան քում խատուժիւն,
և ետուր ըմպել զինի յիմարութեան:

Ետուր երկիւղածաց քոց նշան, զի ապ-
րեսցին յերեսաց աղեղան:

Արպէս վրկեցան սիրելիք քո, կեցն աջով
քով և լուր մեզ:

Աստուած խօսեցաւ ՚ի սրբութենէ իւրմէ .
 ցնծացայց , բարձր եղէց՝ բաժանեցից ըզ-
 սիւքէմ , և զհովիտսն յարկաց չափեցից :
 Իմ է գաղայադ և իմ է մանասէ , եփրեմ
 հզօրիչ գլխոյ իմոյ :

Յուդա թագաւոր իմ , մովաբ աւազանս
 յուսոյ իմոյ :

Յեդուսէ ուղղեցից զգնացս իմ , և ինձ
 այլազգիք հնազանդ եղեն :

Մտարցէ զիս ՚ի քաղաք ամուր , կամ ո՞վ
 առաջնորդեցէ ինձ մինչև ցեղոմ :

Եթէ ոչ դու աստուած որ մերժեցեր
 զմեզ , և ոչ ելեր աստուած ընդ զօրս
 մեր :

Տներ մեզ օգնութիւն ՚ի նեղութեան , զի
 ընդունայն է փրկութիւն մարդոյ :

Աստուծով արասցուք զօրութիւն , և նա
 արհամարհեցէ զայնտսիկ ոյք նեղին զմեզ :

Տունք . ԺԳ :

ՍՆՂՄՈՍ . Կ

Ի կատարած ընդ օրհնութիւն . Սաղմոս դաւթի :

Դէր աստուած աղօթից իմոց , և նայեա՛
 ակեր յաղօթս իմ :

Ի ծագաց երկրի կարդացի առ քեզ, մինչ
 Ի վաստակիլ սրտի իմոյ:

Ի վիմէ բարձր արարեր զլա, առաջնորդե-
 ցեր ինձ, և իմ եղեր յոյս և աշտարակ հզօր
 եղեր ինձ յերեսաց թշնամւոյն:

Բնակեցայց ես Ի յարկս քո յաւիտեան, և
 ծածկեցայց ընդ հովանեաւ թեոց քոց:

Դու աստուած լուար աղօթից իմոց. ետուր
 ժառանգութիւն՝ ոյք երկնչին յանուանէ
 քումմէ:

Մուրս յաւուրս յաւելեր թագաւորի
 ամաց նորա, աւուրս ազգաց մինչև յազգս
 կայ և մնայ յաւիտեան առաջի աստուծոյ
 ողորմութիւն, և ճշմարտութիւն ոյք խրնդ-
 րեն Ի նմանէ:

Մ. յապէս սաղմոս ասացից անուան քում
 յաւիտեանս յաւիտենից, և տաց քեզ զա-
 ղօթս իմ օր ըստ օրէ:

Տունք. ք. Գորզայս. խք.



ՍՆՂՄՈՍ • ԿՅ •

Ի կատարած • ՚ի վերայ իդիժովմայ •
Սաղմոս Դաւեթի :

Բայց միայն աստուծոյ հնազանդ լեր անձն
իմ, զի ՚ի նմանէ է ինձ փրկութիւն :

Ղա է աստուած իմ և փրկիչ իմ, ապաւէն
իմ զի մի սասանեցայց առաւել :

Մինչև յերբ յառնէք ՚ի վերայ մարդոյ՝
սպանանել ամենեքեան, որպէս յորմոյ
թիւրելոյ՝ և ՚ի ցանկոյ մերժելոյ :

Բայց միայն զպատիւ իմ խորհեցան
մերժել յինէն, և ընթացան ՚ի ծարաւս
իւրեանց :

Բերանօք իւրեանց օրհնէին, և սրտիւք
անիծանէին :

Բայց սակայն աստուծոյ հնազանդ լեր
անձն իմ, զի ՚ի նմանէ է ինձ համբե-
րութիւն :

Ղա է աստուած իմ և փրկիչ իմ, ապաւէն
իմ զի մի սասանեցայց :

Յաստուծոյ է զօրութիւն իմ և փառք իմ.
աստուած օգնութեան իմոյ, յոյս իմ առ
աստուած է :

Յուսացարիւք ՚ի նա ամենայն ժողովք

Ժողովրդոց, օրհնեցէք առաջի նորա զսիրտս
ձեր, զի աստուած օգնական է մեր յա-
ւիտեանս Ժամանակաց:

Սակայն ընդունայն են որդիք մարդկան,
սուտ են որդիք մարդկան, ՚ի կշիռս
խրեանց մեղանչեն, և ինքեանք յունայ-
նութեան են ՚ի միասին:

Սի յուսայք յանիրաւութիւն, յափշտա-
կութեան մի ցանկայք. և մեծութիւն թէ
առուիւ գայցէ, մի յօժարեցին սիրաք
ձեր:

Սիանգամ խօսեցաւ աստուած, և երկուս
զայս լուսք:

Հաստուծոց է զօրութիւն, և քո տէր ողոր-
մութիւն. և դու հասուցանես իւրաքան-
չիւր ըստ գործոց նոցա:

Տունք. ԺԴ:

ՍՍՂԿՈՍ. ԿԲ

Սաղմս դաւթի. մինչդեռ նստէր նա յանապատի անդ
հրէաստանի:

Ըստուած աստուած իմ ես առ քեզ առա-
ւօտ առնեմ. ծարաւեաց առ քեզ հոգի
իմ, քանիպատիկ ևս և մարմին իմ:

Արաբէս երկիր անապատ և անջուր, ուր ոչ
զոյ ՚ի նմա ճանապարհ:

Մ. յապէս ՚ի սուրբս երևեցայց քեզ, տեսա-
նել ինձ զգորութիւն քո և զփառս քո:

Ս. ասն զի լաւ է ինձ ողորմութիւն քո քան
զկեանս իմ, և շրթունք իմ զովեացեն զքեզ:

Մ. յապէս օրհնեցից զքեզ ՚ի կեանս իմ, և
յանուն քո համբարձից զձեռս իմ:

Արաբէս ՚ի ճարպոյ պարարտութենէ լոցի
անձն իմ, շրթամբք ցնծութեան օրհնեացի
զքեզ բերան իմ:

Օ ՚ի թէ յիշէի զքեզ յանկողնի իմում,
ընդ առաւօտս կանխեալ խօսէի ընդ քեզ:

Օ ՚ի եղեր իմ օգնական, ՚ի հովանի թեոց
քոց ցնծացայց:

Եկն զկնի քո անձն իմ, և զիս ընկարաւ աջ
քո. և նոքա ՚ի նանիր խնդրեցին զանձն իմ:

Ս. ացեն ՚ի ներքոյ անդնդոց երկրի, մատ-
նեացին ՚ի ձեռս սրոյ, և բաժինք աղուի-
սուց եզիցին:

Թագաւոր յուսացաւ ՚ի տէր, զովեացին ա-
մենեքեան ոյք երդնուն նովաւ, խոցին բե-
րանք այնոցիկ ոյք խօսէին զանիրաւութիւն:

Ի կատարած • Սաղմոս դաւթի:

Դ՛նըր աստուած աղօթից խնոց յաղաչել
ինձ առ քեզ, յերկիւղէ թշնամւոյն վրբ-
կեան զանձն իմ:

Ճածկեցես զիս 'ի ժողովոց չարաց, 'ի
բազմութենէ ոյք գործեն զանօրէնութիւն:
Ոյք սրեցին որպէս սուսեր զլեզուս
իւրեանց, լարեցին զաղեղունս իւրեանց
յիրս դաւնութեան:

Չգել 'ի դազանիս այնոցիկ ոյք ուղիղ են
սրտիւք, յանկարծակի ձգեցեն 'ի նոսա
և մի երկիցեն:

Ոյք զօրացուցին յանձինս իւրեանց զբանս
չարութեան, խորհեցան թագուցանել ինձ
որոգալթ և ասացին ոչ տեսանէ զայս տէր:
Քննեցին զանօրէնութիւն, պատրաստեցան
'ի քննել զքննութիւն:

Ս'ատիցէ այր 'ի խորութիւն սրտի իւրոյ,
և բարձր եղիցի աստուած:

Մեռք տղայոց եղեն վէրք նոցա, ակարա-
ցան 'ի նոսա լեզուք նոցա, և խառնեցան
ամենեքեան ոյք հայէին ընդ նոսա:

Երկեաւ ամենայն մարդ 'ի պատմել զգործ
 ծրա նոյ, և զարարածս նորա 'ի միա առին:
 Աւրախ եղիցի արդար 'ի տէր, և յուսացի
 'ի նա. նովաւ գովեսցին ամենեքեան՝ յ. ք
 ուղիղ են սրտիւք:

Տունք. Ժ. Գորդայս. 17:

ՍԱՂՄՈՍ. ԿԴ

Ի կատարած. Սաղմոս Գաւթի: Օրհնութիւն երե-
 մեացի՝ եղեկիւն՝ և ժողովրդեանն, յորժամ 'ի պան-
 գիտութենէն կամկին ելանել:

Քեզ վայելէ օրհնութիւն աստուած 'ի
 սիօն, և քեզ տացին աղօթք յերուսաղէմ:
 Ի՛նչ աղօթից խնց, զի առ քեզ ամենայն
 մարմին եկեսցէ:

Դանք անօրինաց զօրացան 'ի վերայ մեր,
 և զամբարշտութիւնս մեր դու քաւեսցես:
 Երանի զոր ընտրեցեր և ընկալար, և բնա-
 կեսցին 'ի դաւիթս քո:

Ի զոհք մեք 'ի բարութենէ տան քո, սուրբ
 է տաճար քո սքանչելի արդարութեամբ:
 Ի՛նչ մեզ աստուած փրկիչ մեր, յոյս ա-

մենայն ծագաց երկրի և որ ՚ի ծով հեռի
 || պատրաստէ զլերինա զօրութեամբ իւ-
 րով, և զգեցեալ է զօրութիւն:

|| խռովեցուցանէ զմեծութիւն ծովու, և
 զձայն ալեաց նորա ցածուցանէ:

Խռովեցոյին հեթանոսք, և երկիցեն բնա-
 կիչք երկրի ՚ի նշանաց քոց:

Յերս առաւօտու և ընդ երեկոյս զուար-
 ձացին. հայեցար յերկիր արբեցուցեր զնա,
 և բազում արարեր զմեծութիւն նորա:

Ղեան աստուծոյ լի եղև ջուրք. պատրաստ
 արարեր զկերակուր նորա, զի այսպէս է
 պատրաստութիւն:

Օ ահօս նորա արբեցուցեր, և բազում
 արարեր զարմօխ նորա:

† Ի ցօղել նորա զուարթ եղիցի բոյս նորա.
 օրհնեսցի պսակ տարւոյ քաղցրութեան քոց:

Ի աշտք քո լոցին պարարտութեամբ, պա-
 րարտացին զեղեցիութիւնք անապատի:

Ի ջուրք զցնծութիւն զգեցցին, և զգեցցին
 խոյք մաքեաց:

Հովիտք բազում արացեն զցորեան, աղա-
 զակեսցեն և օրհնեսցեն:

ՍԱՂՄՈՍ . ԿԵ

† Կատարած . Սաղմոս դաւթի . յօրութեան :

Մզաղակեցէք առ աստուած ամենայն երկիր . սաղմոս ասացէք անուան նորա , և տուք զփառս օրհնութեան նորա :

Սացէք աստուծոյ , որպէս զի ահեղ են զործքք քո , 'ի բազում զօրութեան քում ստեցին քեզ թշնամիք քո :

Մենայն երկիր երկիրպազցեն քեզ , սաղմոս ասացեն քեզ , և սաղմոս ասացեն անուան քում :

Եկայք և տեսէք զգործս աստուծոյ , որպէս զի ահեղ են խորհրդով՝ քան զամենայն որդւոց մարդկան :

Ո՞ր արձոյց զծովն 'ի ցամաք , և ընդ գետս անցին ոտանաւորք :

Մեզ ուրախ եղիցուք մեք 'ի նա , որ տիրեն զօրութեամբ իւրով յաւիտենից :

Մ.է.ք նորա 'ի հեթանոսս հային , ոչք զառնացուցին զնա , մի բարձրացին յանձինս իւրեանց :

() օրհնեցէք հեթանոսք զաստուած մեր , լսելի արարէք զձայն օրհնութեան նորա :

Այն որ ետ զանձն իմ 'ի կեանս, և ոչ ետ
դողութիւն. ոտից իմոց:

Փորձեցեր զմեզ աստուած և քննեցեր,
որպէս և քննի արծաթ:

Իջուցեր զմեզ յորոգայթ՝ եղեր զնեղու-
թիւն 'ի թիկունս մեր, և անցուցեր զմար-
դիկ 'ի վերայ գլխոց մերոց:

Անցաք մեք ընդ հուր և ընդ ջուր, և հաներ
զմեզ 'ի հանգիստ:

Ստից 'ի տուն քո պատարագօք. տաց քեզ
զուխա իմ՝ զոր խոստացան քեզ շրթունք
իմ, զոր բերան իմ խօսեցաւ 'ի նեղութեան:

Օ ողջակէզս ուղղայիցս մատուցից քեզ
խոյովք և խնկովք. և քեզ մատուցից զը-
ւարակս և նոխազս:

Եկայք լուարնւք ինձ, և պատմեցից ձեզ
ամենեքեան՝ ոչք երկնչիք յաստուծոյ, զոր
ինչ արար անձին իմոց:

Առ նա բերանով իմով կարգացի, և բարձր
արարից զնա լեզուաւ իմով:

Օ մեզս թէ տեսանեի 'ի սրտի իմում,
միթէ լսէր ինձ տէր:

Վասն այսորիկ լուաւ ինձ աստուած, և
նայեցաւ 'ի ձայն խնդրուածաց իմոց:

Օրհնեալ է ան որ ոչ ՚ի բացեաց արար
զաղօթս իմ, և ոչ զողորմութիւն իւր յինէն:

Տունք . ԺԹ:

ՍԱՂՄՈՍ . 42

Ի կատարած . ընդ օրհնութիւնս . Սաղմոս երգոց:

Մատուած ողորմեան մեզ և օրհնեան զմեզ,
երևեցն զերեսս քո ՚ի մեզ և ողորմեան մեզ:

Նանաչել յերկրի զճանապարհս քո, յա-
զինս ամենայն զփրկութիւնս քո:

Խոստովան եղիցին առ քեզ ժողովուրդք
աստուած, խոստովան եղիցին առ քեզ ժո-
ղովուրդք ամենայն:


Ուրախ եղիցին և ցնծասցեն ազինք . զի
դու դատես զժողովուրդս ուղղութեամբ,
և ազգաց երկրի դու առաջնորդես:

Խոստովան եղիցին առ քեզ ժողովուրդք
աստուած, դոհասցին զքէն ժողովուրդք
ամենայն:

Երկիր ետ զպտուղ իւր, և օրհնեաց ըզ-
մեզ աստուած աստուած մեր:

Մատուած մեր օրհնեսցէ զմեզ, և ՚ի նմանե-
երկիցեն ամենայն ծագք երկրի:

Տունք . Կ: Գորգայս . ԽԺ:



Գրաւոր ի ճիշտութեամբ յայնչապէս

ՍԱՀՄԱՆՍ ԿԷ

Ի հատարած . Սաղմոս Գաւթի

Յարիցէ աստուած և ջրուեացին ամենայն
Թշնամիք նորա , փախիցեն ասելիք նորա
յերեսաց նորա :

Արպէս պակասի ծուխ՝ պակասեացին , որ-
պէս հալի մոմ առաջի հրոյ՝ այնպէս կորի-
ցեն մեղաւորք յերեսաց աստուծոյ :

Մտարք ուրախ եղիցին՝ և շնծացեն ա-
ռաջի նորա , և զուարճացին յուրախու-
թեան իւրեանց :

() Բհնեցէք զաստուած մեր և սաղմոս ա-
սացէք անուան նորա . ճանապարհ արա-
բէք այնմիկ որ նստի ընդ արեւմուտս՝ և տէր
է անուն նորա :

Յնծացեն առաջի նորա , և խառնեացին
յերեսաց նորա :

Ար հայրն է որբոց և դատաւոր այրեաց ,
աստուած ՚ի տեղւոյ սրբութեան իւրոյ :

Մտուած բնակեցուցանէ զմիակրօնս ՚ի
տան , և հանէ զկապեալս քաջութեամբ
իւրով , սոյնպէս և զդառնացողս որք բնա-
կեալ են ՚ի զերեզմանս :

Աստուած ընդ երանելին քո առաջի ժողովրդեան քո . ընդ անցանելին քո ընդ անապատ՝ երկիր շարժեցաւ :

Քանզի և երկինք ցողեցցին յերեսաց աստուծոյ 'ի սինայէ՝ առաջի եյ խրայէ լի :
 Ընձրև կամաց պատրաստեցեր աստուած ժառանգութեան քում . թէպէտ և հիւանդացաւ՝ սակայն դու հաստատեցեր զնա ,
 և դազանք քո բնակեցցին 'ի նմա :

Պատրաստ արարեր քաղցրութեամբ քով աղքատի աստուած . տէր տացէ զբան ոյք աւետարանեն զօրութեամբ բազմաւ :

Թագաւոր զօրութեանց սիրելոյ , գեղեցկութիւն տան քո բաժանեալ յաւարի ,
 թէպէտ և ննջեաջիք 'ի մէջ փիճակաց :

Թեք աղանւոյ արժաթապատ , և թիկնա մէջ նորա 'ի գոյն ոսկւոյ :

Ի գումարել երկնաւորին զթագաւորս 'ի վերայ նորա , ձիւնացին 'ի սաղմոն :

Եւանն աստուծոյ լեան պարարտ՝ լեանն մաճեալ՝ լեանն պարարտ , և զի՛նչ կարծէք լերինք հպարտացեալք :

Եւանն ընդ որ հաճեցաւ աստուած բնակիլ 'ի նմա . քանզի և տէր խկ բնակեցցի

Կառք աստուծոյ բիւրապատիկք հաղարք
 ուղղիչք , և տէր 'ի նոսա 'ի սինէ սրբու-
 թեան իւրոյ :

Եւ 'ի բարձունս և գերեաց զգերութիւն .
 էառ անար՝ բաշխեաց պարգևս՝ և ետ
 որդւոց մարդկան . քանզի թերահաւատից
 ևս բնակեալ եղիցին 'ի նմա :

Տէր աստուած օրհնեալ՝ օրհնեալ տէր
 ջորհանապազ , առաջնորդեցէ մեզ աստ-
 ուած փրկիչ մեր :

Աստուած մեր աստուած կենարար , և 'ի
 տեսանէ են ելք մահու :

† Իսոյ սակայն աստուած փշրեցէ զգլուխս
 թշնամեաց մերոց , և զհերն կարճ նովին ,
 ոյք դնան յանօրէնութեան իւրեանց :

Ասաց տէր՝ 'ի խորոց անդնդոց դարձու-
 ցից , և 'ի միջոյ ժանեաց զայն 'ի դուրս
 կորզեցից :

Արպէս թացցի ոտն քո յարեան , և լեզուք
 շանց քոյ յարենէ թշնամեաց քոյ :

Երևեցան դնացք քո աստուած , դնացք
 աստուծոյ թագաւորին մերոյ սրբոյ :

Կանխեցին իշխանք հանել զօրհնութիւն ,

Ի մէջ գուսանաց և գովչաց:

Յեկեղեցիս օրհնեցէք զաստուած, և զտէր
յաղբերացն խորայէլի:

Ընդ բենիամին՝ Ի տղայութեան զարմա-
նայի, իշխանք յուգայ առաջնորդք նորա՝
Իշխանք զաբուղոնի և իշխանք ներփթա-
+ դիմայ:

Հրամայեա՛ս աստուած զօրութեամբ քով-
զօրացո՛ զայս զոր հաստատեցեր Ի մեզ
Ի տաճարէ քումմէ յերուսաղէմէ, քեզ
մատուցեն թագաւորք զպատարագս:

Սաստեա՛ս Ի գազան եղեգան, Ի ժողովս
զուարակաց՝ և Ի գասս երնջոց:

Խոտեցցին այնոքիկ ոյք ընտրեալ են ար-
ծաթով, ցրուեա՛ս զհեթանոսս ոյք կամին
ընդ պատերազմ:

Եկեացեն հրեշտակք յեգիպտոսէ. հնդիկք
յառաջագոյն ձեռնտու լիցին առ ւած:

Թագաւորութիք երկրի օրհնեցէք զաստ-
ուած, և սաղմոս ասացէք տեառն:

Ղանապարհ արարէք այնմիկ, որ նստի
յերկինս երկնից ընդ արեւելս:

Ըհա տացէ զձայն իւր Ի ձայն զօրու-
թեան, և տո՛ւք զփառս աստուծոյ:

Ի վերայ խորայելի մեծ վայելու թիւն նորա ,
 և զօրութիւն նորա մինչև յամպս երկնից :
 Աքանչելի է աստուած Ի վերայ սրբոց իւրոց ,
 աստուած խորայելի :

Նա տացէ զօրութիւն հաստատութեան
 ժողովրդեան իւրոց . օրհնեալ է աստուած :

Տունք . լ՛՛ :

ՍԱՂՄՈՍ . ԿԸ

Ի հատարած . Սաղմոս Դաւթի . վան զառանցելոցն :

Կեցո՛ զիս աստուած՝ զի հասին ջուրք
 յանձն իմ , ընկլայ ես Ի խորս անդնդոց ,
 ուր ոչ գոյ ինձ հանգիստ :

Լկի ես Ի խորս ծովու , և շրջանք ընկղմեցին
 զիս :

Ո՛ր աստակեցայ ես առ աղաղակել , և կերկերեցաւ
 կոկորդ իմ :

Նուաղեցան աչք իմ , առ յուսալ ինձ առ
 աէր աստուած իմ :

Բազումք եղեն քան զհեր գլխոյ իմոյ , ոչ
 առեին զիս Ի տարապարտուց :

Օ օրացան յիս թշնամիք իմ և առե լիք իմ

Ի նանիր . ինչ զորն ի յափշտակեալ էի
տուժէի նոցա :

Նստուած դու ծանեար զանգղամութիւն
իմ , և յանցանք իմ Ի քէնն ինչ ծածկեցան :

Ս Ի ամաչեացեն վասն իմ՝ ոյք համբերեն
քեզ տէր տէր զօրութեանց . մի պատկա-
ռեացին վասն իմ , ոյք խնդրեն զքեզ աստ-
ուած խրայէլի :

Ս ասն քո համբերի նախատանաց , և ծած-
կեաց ամօթ զերեսս իմ :

Օտար եղէ ես յեղբարց իմոց , և հիւր
որդւոց մօր իմոյ :

Նախանձ տան քո եկեր զիս . և նախատինք
նախատչաց քոց անկանն Ի վերայ իմ :

Խոնարհեցուցի պահօք զանձն իմ , և եղեն
ինձ այս նախատինք . արարի զհանդերձս
իմ քուրձ , և եղէ յառակ նոցա :

Օ ինէն խորհէին՝ ոյք նատէին առ դրու-
նքս . զիս այսին առնէին՝ ոյք ըմպէին զգինի :
Ես յաղօթս կայի առ քեզ տէր , Ի ժամա-
նակ ընդունելի :

Նստուած Ի բազում ողորմութեան քու
ընդ ինձ , Ի ճշմարտութիւն փրկութե քո :

Նպրեցո՞ զիս Ի կաւոց զի մի ընկլայց . ապ-

բնօրաց ես յատելեաց իմոց , և 'ի խորոց
 ջուրց բազմաց :

Մի ընկղցեն զիս ստոյտք ջուրց , և մի ըն-
 կղմեսցեն զիս անդունդք խորոց . և ջրհոր
 մի կափուսցէ զբերան իւր 'ի վերայ իմ :
] իւր ինձ տէր՝ զի քաղցր է ողորմութիւն
 քո , ըստ բազում գթութեան քում հայեան
 յիս , և մի դարձուցաներ զերեսս քո 'ի
 ծառայէ քումմէ . զի նեղեալ եմ ես՝ վաղ-
 վաղակի լուր ինձ :

Հայեան յանձն իմ և փրկեան զիս , և վասն
 թշնամեաց իմոց ապրեցն զիս :

Օ ի դու գիտես զնախատինս իմ , զամօթ
 իմ և զպատկառանս իմ :

Առաջի քո են ամենայն նեղիչք անձին
 իմոց . նախատանաց համբեր սիրտ իմ և
 թշուառութեան :

Ակն ունէի թէ որ տրամեսցի ընդ իս , և
 ոչ որ էր . և մտիթարիչ ինձ որ ոչ դատու :

Կտուն 'ի կերակուր ինձ լեղի , և 'ի ծարա-
 իմ արբուցին ինձ քացախ :

Եղիցին սեղանք նոցա առաջի նոցա յո-
 րոգայթ , 'ի հատուցումն և 'ի գայթակ-
 զութիւն :

Խաւարեացիս աչք նոցա՝ զի մի տեսցեն,
 և զթիկունս նոցա հանապազ կորացն:

Արկցես ՚ի վերայ նոցա զբարկութիւն
 քո, և սրամտութիւն բարկութեան քոյ
 հասցէ ՚ի վերայ նոցա:

Եղիցին բնակութիւնք նոցա աւերակ, և
 ՚ի յարկս նոցա մի որ իցէ որ բնակիցէ:

Օ ՚ի զոր դու հարեր՝ հալածեցին, և ՚ի
 վերս ցաւոց իմոց յաւելին:

Վեր զմեզս ՚ի վերայ մեղաց նոցա, զի մի
 մտցեն յարդարութիւն քո:

Սնչեացին նոքա ՚ի դպրութենէ քումմէ
 կենաց, և ընդ արդարս քո մի գրեացին:

Աղքատ և ցաւած եմ ես, փրկութիւն քո
 աստուած ընկալցի զիս:

Օրհնեցից զանուն աստուծոյ իմոյ օրհ-
 նութեամբ, և բարձր արարից զնա դո-
 վութեամբ:

Հաճոյ եղիցի աստուծոյ քան զորթ մա- + 470
 տաղ, որ բերէ զեղջիւրս և զկճղակս:

Տեսցեն աղքատք և ուրախ եղիցին, խընդ-
 բեցէք զաստուած և կեցցեն անձինք ձեր:

Օ ՚ի լուաւ տէր անանկաց, և զկապեալս
 իւր ոչ արհամարհեաց:

Օրհնեացեն զնա երկինք և երկիր, ծով և
ամենայն որ զեռայ ՚ի նոսա:

Լսաուած փրկէ զսխոն, և շինեացին քա-
ղաքք հրէաստանի. շինեացեն բնակեացեն
և ժառանգեացեն ՚ի նմա:

Օ աւակ ծառայից քոց հաստատեացի
անդ, և ոչք սիրեն զանուն քո բնակեացեն
՚ի նմա:

Տուճք. 171

ՄԱՂՄՈՍ. ԿԹ

Ի հատարած. Սաղմոս դաւթի՝ առ ՚ի յիշատակ փրկելով
զնա տեառն:

Լսաուած յօղներ ինձ նայեաց, և տէր
յրնկերել ինձ փութան:

Լմաչեացեն և յամօթ լիցին՝ ոչք խնդրէին
զանձն իմ. դարձցին յեռս և ամաչեացեն՝
ոչք խորհէին ինձ շար:

Դարձցին առ ժամայն ամաչեցեալք՝ ոչք
ասէին ինձ վաչ վաչ:

Յնծացեն և ուրախ լիցին ՚ի քեզ ամե-
նեքեան, ոչք խնդրեն զքեզ տէր:

Լսացեն յամենայն ժամ մեծ է ասա-
ուած, և ոչք սիրեն զփրկութիւնս քո:

Եւ աղքատ եւ տնանկ եւմ՝ աստուած օգնեալ ինձ . օգնական եւ փրկիչ իմ ես , եղու տէր իմ մի յամենայն :

Տունք . 4 : Գորդայս . 107 :

ՍԱՂՄՈՍ . 4

Ի կատարած . որդւոցն յոմնադարայ , յետ առաջնոց զերութեանն . Սաղմոս Դաւթի :

Ի քեզ տէր յուսացայ՝ մի ամաչեցից յաւիտեան , յարդարութեան քում փրկեալ եւ ապրեցն զիս :

Խոնարհեցն առ իս զունկն քո , ե կեցն զիս :

Եր իմ աստուած ապաւէն եւ տեղի ամուր կեցուցանել զիս . զի հաստատութիւն իմ եւ ապաւէն իմ դու ես :

Եստուած իմ փրկեալ զիս ՚ի ձեռաց մեղաւորի , ՚ի ձեռաց անօրինի եւ անիրաւի :

Դու ես համբերութիւն իմ տէր տէր , յոյս իմ ՚ի մանկութենէ իմմէ :

Ի քեզ հաստատեցայ ես յարգանդէ , յարուայնէ մօր իմոյ դու ես ապաւէն իմ , ե

առ ՚ի քէն է յօգնութիւն իմ յամ ժամ:
 Արպէս զի նշաւակ եղէ ես բազմաց , և
 դու օգնական իմ և հզօրիչ իմ:

Վցցի բերան իմ գոլութեամբ , որպէս
 օրհնեցից զփառս քո , զօրհանապաղ զմեծ
 վայելութիւնս քո:

Մի ընկենուր զիս տէր ՚ի ժամանակս ծե-
 բութեան , ՚ի պակասիլ զօրութեան իմոյ
 մի թողուր զիս:

Մասցին թշնամիք իմ ինձ , և որք պաշա-
 բեցին զանձն իմ , խորհեցան ՚ի միասին և
 ասացին:

Մտուած եթող զնա հալածեցուք և
 հասցուք նմա , զի ոչ ոք է որ վրիկէ զնա:
 Մտուած իմ , մի հեռի առնիր յինէն , և
 աստուած յօգնել ինձ նայեաց:

† Մտաչեցեն և պակասեցին ոյք չարախօս
 կային զանձնէ իմմէ , զգեցցին զամօթ և
 զպատկառանս՝ ոյք խնդրէին ինձ չար:

Ես յամենայն ժամ յուսացայց , և յաւե-
 լից յօրհնութիւնս քո:

Բերան իմ պատմեցէ զարդարութիւնս
 քո , զօրհանապաղ զգոլութիւնս քո:

Արպէս ոչ թէ խարդախութիւն ինչ զի:

տէի դպրութեան . այլ մտից ՚ի զօրութիւնս տեառն , և տէր յիշեցի զարդարութիւնս քո միայն :

Մտուած իմ ուսուցեր զիս ՚ի մանկութենէ իմմէ , և ցարդ ևս պատմեցից զարդարութիւնս քո :

Մինչև յալեորիլ և ՚ի ծերանալ , աստուած իմ մի թողուր զիս :

+ Մինչև պատմեցի բազուկ քո ազգի ամենայնի որ գալոցն է :

Օ զօրութիւնս քո և զարդարութիւնս քո մինչև ՚ի բարձունս , զոր արարեր մեծամեծս . աստուած օ նման է քեզ :

Արջալի ցուցեր ինձ նեղութիւն բազում և չարչարանս , դարձեալ մխիթարեցեր զիս , և ՚ի խորոց անդնդոց երկրի հաներ զիս :

Հաճախեցեր զզօրութիւնս քո , դարձար և մխիթարեցեր զիս , և ՚ի խորոց երկրի միւսանգամ հաներ զիս :

Արդ և ես խոստովան եղէց քեզ ՚ի պարաստութիւն սաղմոսաց ճշմարիտոյ աստուած . սաղմոս ասացից քեզ օրհնութեամբ սուրբոյ իսրայէլի :

Յնձացեն շրթուկք իմ յորժամ սաղմոս

ասիցեմքեզ, և անձն իմ զոր փրկեցեր:
 Եւս և լեզու իմ՝ զօրհանապազ խօսեցցի
 զարդարութիւնս քո:
 Ի ժամանակի որպէս յամօթ լիցին, և ամա-
 չեցենն ոյք խնդրէին ինձ չար:
 Տու՛ք ինչ:

ՍԵՂՄՈՍ. ՀԱ

Ի սողմանն սաղմոս:

Եւստեամ զիրաւունս քո արքայի տնւր,
 և զարդարութիւնս քո որդւոյ թագաւորի:
 Դատել զժողովուրդս քո արդարութեամբ,
 և զաղքատս քո իրաւամբք:
 Եւցեն լերինք զխաղաղութիւն ժողովւոր-
 դեան, և բլուրք զարդարութիւնս:
 Իրաւ արասցէ աղքատաց ժողովիւրդեան, և
 կեցուցէ զորդիս տնանկաց, և խոնարհե-
 ցուցէ զամբարտաւանս:
 Կացցէ և մնացէ ընդ արևու, յառաջ
 քան զլուսին ազգէ մինչև յազգ:
 Իջէ որպէս զանձրև ՚ի վերայ դեղման,
 որպէս ցօղ զի ցօղէ յերկիր:
 Դագեցցի յաւուրս նորա արդարութիւն՝

բազում խաղաղութիւն, մինչև կատարեալ
ցի լուսինս:

Տիրեացէ նա ՚ի ծովէ մինչև ՚ի ծով, ՚ի գե-
տոց մինչև ՚ի ծագս աշխարհի:

Մաշի նորա նախ հնդիկք անկցին, և
Թշնամիք նորա հող կորիցեն:

Թագաւորք Թարսի և կղզեաց պատա-
րագս մատուցեն նմա. Թագաւորք արա-

բայ և սաբայ պատարագս բերցեն նմա:

Լրկիրպագցեն նմա ամենայն Թագաւորք
Երկրի, և ամենայն ազգք ծառայեսցեն նմա:

Օ ի փրկեաց զաղքատն ՚ի ձեռաց հզորի.
Ղաղքատն և զանանկն՝ որոյ ոչ է իւր օգ-
նական:

Մխայեսցէ նա յաղքատն և ՚ի տնանկն,
և զանձինս տնանկաց կեցուցէ. ՚ի վաշխից

չարաց փրկեսցէ զանձինս նոցա:

Պատուական է անուն նորա առաջի նոցա.
կեցցէ և տայի նմա յոսկւոյն արարացւոց:

Հաղօթս կացցեն առ նա յամենայն ժամ,
և զօրհանապազ օրհներցեն զնա:

Լղիցի հաստատութիւն ընդ ամենայն եր-
կիր, և ՚ի վերայ գլխոց լերանց:

Բարձրացի քան զլիբանան պտուղ նորա:

արդար որպէս զաստուած մեր . և չիք
սուրբ բաց յաստուծոյ մերմէ :

Մի պարծիք և մի խօսիք զամբարտաւանս . և մի ելցէ ընդ բերանս ձեր բանս
հպարտ մեծաբանութեանս :

Նստուած գիտութեանց՝ տէր աստուած
պատրաստէ իւրով իմաստութեամբ զգիտութիւնս յարարածս իւր :

Հորաց հաստ աղեղունք թուլացան , և
տկարք վառեցան զօրութեամբ :

Յագք և լիք հացիւ նուաղեցան . և
քաղցեալք լցին զերկիր :

Մտու ըն ծնաւ եօթն , և բազմածինն նուաղեցաւ ՚ի ծննդոց :

Տէր մեռուցանէ , և տէր կեցուցանէ , իջուցանէ ՚ի դժոխս և հանէ :

Տէր աղքատացուցանէ , և տէր մեծացուցանէ . խոնարհ առնէ զամբարտաւանս մինչև յերկիր , և բարձր առնէ զտառապետարս յաղբեաց :

Նստուցանէ զնոսա իշխանս ընդ իշխանս ժողովրդեան , և զաթոռ փառաց ժառանգեցուցանէ նոցա :

Կատարէ զուխտս ուխտաւորաց . և օրհն

նեաց զամս արդարոց:

Օ ի ոչ թէ իւրով զօրութեամբ զօրանայ
հզօր, այլ տէր տկար առնէ զհակառակորդս
իւր. տէր սուրբ է:

Մի պարծեցի խորհրդականն ՚ի խոր-
հուրդս իւր, և մի պարծեցի հզօրն ՚ի զօ-
րութիւն իւր, և մի պարծեցի մեծն ՚ի
մեծութեան իւրում:

Այլ որ պարծին՝ ՚ի տէր պարծեցի, ՚ի
խորհուրդս գիտութեան զտէր ճանաչելէ
Վանել զիրաւունս, և գործել զարդարու-
թիւն ՚ի վերայ երեսաց երկրի:

Տէր ել յերկինս և որոտաց, և ինքն դատէ
առանց բարբառելոյ:

Տայ զօրութիւն թագաւորաց մերոց, և
բարձր առնէ զեղջիւր օծելոյ իւրոյ:
Փառք հօր և որդւոյ և:



ՄԱՆԹԱՆԲ

Բարձրացաւ եղջիւր իմ յսօժ փրկիչ իմ. հաստա-
տեցաւ սիրտ իմ ՚ի տէր՝ տերամբ և հաւատով:

Սարգասէր տէր՝ վասն սրբութեան:

Քարոզ և աղօթք՝ Ողորմեան , և Ի նեղութեան
կանոնացն :

Ս ան գասնելոյ մեզ զչնորհա և զողորմութիւն
Ի բարերար տեսանէ մերսէ՝ զտէր աղաչեա-
ցուք : Տէր ողորմեան :

Ս ան փրկելոյ զմեզ Ի զուարթութենէ մարդ-
կան և յորոգայթից սասանայի՝ զտէր աղաչ :

Ս ան ամենայն անձանց բրիստոնէից և սանց
հաւատացելոյ՝ զտէր աղաչ :

Ս ան որք Ի լերինս յայրս և Ի փապարս բնա-
կեալ են սուրբ հարբն մեր՝ զտէր աղաչ :

Ս ան որք սաղմոսիւք և օրհնութեամբ կատա-
րեն զամ ժամանակս կենաց իւրեանց՝ զտէր :

Ս ան հոգւոցն հանգուցելոյ՝ որք ճշմարիտ և
ուղիղ հաւատով Ի բրիստոս ննջեցին՝ զտէր աղաչ :

Եւ ևս միաբան վասն (Օ)անձինս մեր և է
Ողորմեանց :

Աղօթք :

Վահանմաք զբէն տէր աստուած մեր , որ զար-
թուցեր զմեզ Ի հանգստենէ բնոյ շնորհիւ ողոր-
մութեան քո : Օպրժն զմիտս մեր արդարու-
թեամբ առ քեզ տէր աստուած մեր , զի տեօցն են
աչք մեր զփրկութիւն քո : Եկեացէ և բնակեացէ
առ մեզ աստուածութիւն քո , և ողորմութիւն քո
հոյանի և պահապան լիցի Ի վերայ պաշտօնէից

քոց: Այլ զմեզ զծառայքս քո արժանի արա ՚ի
 ասուէ և ՚ի գիշերի և յամենայն ժամու միշտ խոր-
 հիլ ՚ի սէր պատուիրանաց քոց: Այլ գոհանալով
 փառաւորել զհայր և զորդի և զսուրբ հոգիդ,
 այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն:

Խաղաղութիւն ամենեցունս
 Աստուծոյ երկիրպագեսցուք:

Կենդանաբար զօրութիւն և աղբիւր անմահու-
 թեան, դու ես քրիստոս աստուած փրկիչ մեր:
 Որ շնորհեցեր մեզ ՚ի մէջ գիշերի յառնել և խոս-
 տովան լինիլ առ քեզ վասն իրաւանց և արդա-
 րութեան քո: Այլ այժմ աղաչեմք զքեզ տէր
 աստուած մեր, արա՛ զմեզ արթունս և պատ-
 րաստս ՚ի ժամ առաւօտու ընդ սուրբքս քո: Այլ
 ընդ նոսին գոհանալով փառաւորել զքեզ ընդ
 հօր և ընդ հոգւոյդ սրբոյ, այժմ և միշտ և յա-
 վիտեանս յաւիտենից, ամէն:


Մաղթանք:

Գոհութեամբ և ճշմարիտ խոստովանութեամբ
 անդադար փառաւորեմք զհայր և զորդի և զսուրբ
 հոգիդ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտե-
 նից, ամէն:

() Բհնեալ տէր մեր յիսուս քրիստոս, ամէն:
 Հայր մեր որ յերկինս:



Hy. w. h. m. s.
H. P. H. m. u. h. l.





ՍՄԱՆՈՍ . 48

Մազմուս յաստի . օրհնութեան :

Իբրև զի բարի է խրայելի աստուած , և
ոյք ուղիղ են սրտիւք :

Բայց զի իմ փոքր մի ևս սասանեալ էին
ոտք , սակաւիկ մի ևս զայլթակղեալ էին
զնայք իմ :

Ղախանձեցայ ես ընդ անօրէնս՝ զխաղա-
ղութիւն մեղաւորաց որպէս տեսանէի , զի
նչ գոյր վրէպ մահու նոցա :

Հաստատուն են տանջանք նոցա , ՚ի վաս-
տակս մարդկան շէն նոքա , և ըստ մարդ-
կան նչ տանջեացին :

Սկան այսորիկ կալաւ զնոսա ամբարտա-
ւանութիւն . արկին զիւրեամբք զամբարոջ-
տութիւն և զանիրաւութիւն իւրեանց :
Եւթ որպէս ՚ի ճարպոյ անիրաւութիւն

Նոցա • զի գնացին նոքա ըստ խորհրդոց
սրտից իւրեանց:

Խորհեցան և խօսեցան չարութեամբ • և
զապիրատութիւն ՚ի բարձունս խորհեցան •
Եղին յերկինս զբերանս իւրեանց • և ըզ-
լեզուս իւրեանց անէին զերկրաւ:

Ս ասն այսորիկ ժողովուրդ իմ դարձցի այս-
րէն • և աւուրք իմ լի կատարեալ գտցին
՚ի նոսա:

Ըսացին՝ զիսորդ գիտաց աստուած • կամ
գուցէ՞ արդեօք գիտութիւն առ ՚ի բարձ-
րելոյն:

Ըհա մեղաւորք են և յաջողեալ է նոցա •
կան և ունին զմեծութիւն աշխարհի:

Ըսացի ՚ի զհւր ուրեմն արդարացուցի ըզ-
սիրտ իմ • լուացից սրբութեամբ զձեռս իմ •
և եղէ ես խոշտանկեալ զօրհանապազ • և
կշտամբանք իմ ընդ առաւօտս:

Թէպէտ և ասէի թէ այսպէս պատմեցից՝
ահաւասիկ յազդ որդւոց քոց որոց և
ուխտեցից:

Ի մտի եղի՝ թէ սակայն և այս ջան է ա-
ռաջի իմ • մինչև մտից ՚ի սրբութիւնն աս-
տուծոյ և ՚ի միտ առից զկատարած նոցա:

Սահայն վասն նենդութեան նոցա տարազիր արացես զնոսա . և կործանեցես ըզնոսա յամբարտաւանութեան իւրեանց :
Իսկ զխորդ եղեն յաւեր յանկարծակի , սատակեցան պակասեցան կորեան վասն անօրէնութեան իւրեանց , և եղեն որպէս
երազք զարթուցելոց :

Տէր ՚ի քաղաքի քում զպատկերս նոցա աւարդեացես . զի հուր բորբոքեցաւ ՚ի սրտի իմում , և երիկամունք իմ այլադունեցան :
Եւ արհամարհեալ եղէ և ոչ գիտացի , որպէս զանասուն համարեցայ առաջի քո , և ես յամենայն ժամ ընդ քեզ եմ :

Կալար զաջոյ ձեռանէ իմէ , ՚ի խորհուրդս քո առաջնորդեցեր ինձ , և փառօք ընկալար զիս :

Օ ինչ կայ իմ բնաւ յերկինս , կամ ՚ի քէն զինչ ևս ինդրեցից յերկրի :

Կուաղեցաւ սիրտ իմ և մարմին իմ . աստուած սրտի իմոյ , բաժին իմ աստուած յաւիտեան :

† Բնաւասիկ ոչք հեռի արարին զանձինք իւրեանց ՚ի քէն կորիցեն . սատակեցես զամենեւեան ոչք սոպստամբ եղեն ՚ի քէն :

Ինձ մերձենալ առ աստուած բարի է , և
դնել առ տէր դոյս իմ :

Պատմել զամենայն օրհնութիւնս քո , 'ի
դրունս դասեր սիօնի :

Տունք . ինչ :

ՍԱՂՄՈՍ . ԷԳ

Իմաստութիւն յաստի :

Ինդէր մերժեցեր աստուած իսպառ . բար-
կացաւ սրտմտութիւն քո 'ի վերայ խաչին
արօտի քո :

Ելեա՛ զժողովուրդ քո՝ զոր ստացար 'ի
սկզբանէ . փրկեցեր զիլձակ ժառանգու-
թեան քո :

Ետան սիօն այս՝ ուր բնակեցար դու 'ի
սմա . համբարձ զձեռն քո 'ի վերայ ամբար-
տաւանութեան նոցա իսպառ :

Ար ինչ անիրաւեցաւ թշնամին 'ի սրբու-
թեան քում , պարծեցան ատելիք քո 'ի
մէջ բարեկենդանութեան իւրեանց :

Եդին զնշանս իւրեանց 'ի նշանս . և
ինքեանք ոչ ծանեան զելս 'ի վերուստ :

Արպէս յանտառի փայտատօք կոտորեցին

զգրուենս նորա , 'ի միասին փայտատօք և
մրձօք կործանեցին զնա :

Այրեցին 'ի հօւր զսրբութիւն քո յերկրի .
պղծեցին զխորան անուան քո :

Ասացին 'ի սիրտս իւրեանց ազգք նոցա 'ի
միասին , եկայք լռեցուցուք զամենայն
տօնս աստուծոյ յերկրէ :

Նշանս մեք ինչ ոչ տեսաք , և ոչ ևս դուցէ
մարգարէ . և զմեզ ինչ որ ոչ ճանաչիցէ :

Ս'ինչև յերբ աստուած՝ նախատէ թշնա-
մին , բարկացուցանէ հակառակորդն զա-
նուն սուրբ քո :

Ընդէր դարձուցանես զձեռն քո , և զաջ
քո 'ի միջոյ ծոցոյ քումմէ խաղառ :

Աստուած թաղաւոր մեր յառաջ քան
զսաւխտեանս , որ արարեր զփրկութիւն 'ի
մէջ երկրի :

Դու հաստատեցեր զօրութեամբ քով ըզ-
ծով . դու խորտակեցեր զգլուխ վիշապին
'ի վերայ Զուրց :

Դու վիշեցեր զգլուխ վիշապին , և ետուր
զնա կերակուր զօրացն հնդկաց :

Դու բղխեցուցեր զաղբիւրս և զվտակս ,
դու ցամաքեցուցեր զգետս սաստիկս :

Քո է տիւ և քո է գիշեր , զլոյս և զարև
 դու արարեր . և դու հաստատեցեր զամե-
 նայն սահմանս երկրի . զգարուն և զամառն
 դու ստեղծեր :

Եյս յուշ լիցի քեզ՝ զի Թշնամին նա-
 խատեաց զտէրդ . Ժողովուրդ անզգամ
 բարկացոյց զանուն սուրբ քո :

Մի մտաներ գազանաց զանձն որ խոս-
 տովան առնի առ քեզ , և զանձինս տնան-
 կաց քոց մի մտանար խաղառ :

Հայեաց յուխտ քո՝ զի լցան տունք ամի-
 շերոց յերկրի անիրաւութեամբ :

Մի դարձցի տնանկն ամաչեցեալ . այլ
 այլ քատք և տնանկք օրհնեացեն զանուն
 սուրբ քո :

Երի աստուած և դատեալ զդատաստանս
 քո . յիշեալ զնախատինս որ յանզգամէն
 զօրհանապաղ :

Մի մտանար զձայն պաշտօնէից քոց .
 ամբարտաւանութիւն աստիւեաց քոց վե-
 րացի հանապաղ :

Տունք . ինչ . Գորդոյս . խի :

ՍԱՂՄՈՍ • 27

Ի կատարած . մի ապականեր . ընդ օրհնութիւնս
Սաղմոս յաստի . երգ առ ասորեստանեացս :

Խոստովան եղիցուք առ քեզ աստուած ,
խոստովան եղիցուք և կարդացցուք զանուն
սուրբ քո :

Պատմեցից զամենայն սքանչելիս քո . յոր
ժամ ժամ առից՝ ես ուղիղ զատեցից :

Մաշեցաւ երկիր և նամ բնակիչք նորա ,
ես հաստատեցի զսիւնս նորա :

Նսացի անօրինաց՝ թէ մի անօրինիք . և
մեղաւորաց՝ թէ մի բարձրացուցանէք
զեղջիւրս ձեր :

Մի համբառնայք ՚ի բարձունս զեղջիւրս
ձեր , և մի խօսիք զաստուծոյ անկրա-
ւութիւն :

Օ ՚ի ոչ յարեւելից և ոչ յարեմտից և ոչ
յանապատէ լերանց . այլ աստուած դա-
տաւոր է :

Օ այս խոնարհ առնէ , և զոյն բարձրա-
ցուցանէ . բաժակ ՚ի ձեռսին տեառն զինի
լի անապակ արկեալ . և խոնարհեցուցանէ
յայսմանէ յայս :

Սակայն մրուր նորա ոչ սպառեցի , և

սրբցեն զնա ամենայն մեղաւորք երկրի :
 Եւ ցնծացայց յաւիտեան . սաղմոս ասացից
 աստուծոյ յակորայ :

Օ ամենայն եղջիւրս մեղաւորաց փշրեալ
 ցես , եւ բարձր եղիցի եղջիւր սրդարոյ :

Տունք . Ծ :

ՍԵՂՄՈՍ . ՀԵ

Ի կատարած ընդ օրհնութիւնս . մի ապականեր :
 Սաղմոս յաստի . երգ առ ասորեստանեացս :

Յայանի է ՚ի հրէաստանի աստուած , եւ
 յիսրայէլ մեծ է անուն նորա :

Եղև ՚ի խաղաղութեան տեղի նորա , եւ
 բնակութիւն նորա ՚ի սիօն :

Ընդ խորասկեաց տէր զգօրութիւն աղե-
 զան , զզէն զսուր եւ զճակատամարտ :

Եւ աստու ես դու սքանչելապէս լերանցն
 յաւիտենից . խառնեցին ամենեքեան որք
 անմիտք են սրաիւք , ննջեցին զբունս
 իւրեանց՝ եւ ինչ ոչ դատին :

Ըմենայն արք՝ ՚ի մեծութեան ձեռաց
 իւրեանց . ՚ի սաստէ քումմէ աստուած
 յակորայ ննջեցին , եւ ոչք հեծեալ էին
 ՚ի ձիս :

Դու ահաւոր ես և ո՞վ կարէ կալ առաջի
քո . որպէս երեւցար դու յերկնից , յայտ-
նի եղև բարկութիւն քո :

Երկիր երկեաւ և սարսեցաւ ընդ յառնելն
աստուծոյ ՚ի դատաստան . ընդ ապրեցու-
ցանել զամենայն հեզս երկրի :

Խորհուրդք մարդկան խոստովան առնին
առ քեզ , և ծածկեալք իմաստութեամբ
օրհնեցեն զքեզ :

Սէխոսս դիք և կատարեցէք տեառն տօյ
մերոյ , ամենեքեան որք շուրջ էք զնովաւ :

Սատուցէք պատարագս ահաւորին . ո՞
քաղէ զհոգիս իշխանաց , ահաւոր է նա
քան զամենայն թագաւորս երկրի :

Տուր . Ժ :

ՍՍԼՄՈՍ . ԷԶ

Ի կատարած . վան իջիթովմայ . Սաղմոս յասափ :

Չայնիւ իմով ես առ տէր կարդացի , ճայ-
նիւ իմով առ աստուած , և նայեցաւ առ իա-
նիստուր նեղութեան իմոյ զաստուած
կնդրեցի ձեռօք իմովք , և ՚ի գիշերի առաւ-
ջի նորա ոչ խաբեցայ :

Ոչ կամէր մխիթարել անձն իմ , յիշեցի

զաստուած և ուրախ եղէ . հոգայի , և նը-
լաղիւք յիս հոգի իմ :

Եւամանեցին սրահուց աչք իմ , խռովեցայ
և ոչ խօսեցայ . խորհեցայ զաւուրսն զա-
ռաջինս և զամսն յաւիտենից յիշեցի :

Խօսեցայ ՚ի գիշերի ընդ սրախ իմում , հո-
գայի և տառապէք յիս հոգի իմ :

Սի թէ յաւիտենից մերժեցղէ զիս տէր ,
և ոչ ևս յաւելցի ՚ի հաճիլ և ևս :

Կամ իսպա՞ռ արդելցէ զողորմութիւն իւր
յինէն , կամ կատարեաց զբան իւր ազգէ
մինչև յազգ :

Կամ մոռացի՞ գթալ աստուած իմ և ևս ,
կամ արդելցէ զգթութիւն իւր բարկու-
թեամբ իւրով :

Ըսացի թէ այժմ սկսայ . այս է նորոգումն
աջոյն բարձրելոյ :

Յիշեցի զգործս տեառն ՚ի սկզբանէ , յի-
շեցի զբանչելիս նորա :

Խորհեցայ յամենայն գործս քո , և ՚ի ձե-
ռագործս քո խորհեցայ :

Ըստուած՝ ՚ի սրբութեան են ճանապարհք
քո . ո՞վ է աստուած մեծ որպէս զիմ մեր .
դու ևս աստուած՝ որ անես զսքանչելիս :

Յուցեր ժողովրդեան քում զզօրութիւն
 քո . փրկեցեր բազկաւ քով զժողովուրդս
 քո՝ զօրդիան յակորայ և յովսեփու :

Տեսին զքեզ Ղուրբ աստուած , տեսին ըզ-
 քեզ Ղուրբ և երկեան , և խորք խռովեցան
 'ի ձայնէ Ղուրց բազմաց

Չայն ետուն ամպք , քանզի և նետք քո դը-
 նան 'ի ձայնէ որոտալոյ քո անուի :

Երևեցան փայլատակունք քո տիեզերաց ,
 խռովեցաւ և դողաց երկիր :

Ի ծովու են ճանապարհք քո , և շաւիղք քո
 'ի Ղուրս բազումս , և հետք քո ոչ երևին :

Սաաջնորդեցեր որպէս խաշին ժողովրդեան
 քո , 'ի ձեռն մոխէսի և ահարօնի :

Տունք . ԺԸ : Գորգայս . Ը :

ՍՅՂՄՈՍ . ԷԷ

Ի մատուցիւն յաստի :

Նայեցարուք ժողովուրդք յօրէնս իմ , խոնար
 հեցուցէք զունկն ձեր 'ի բանս բերանոյ իմոյ :
 Բացից առական զբերան իմ , և խօսեցայց
 զառակս 'ի սկզբանէ :

Արպէս լուաք և ծանեաք զայս , և հարքն
մեր պատմեցին մեզ :

Աչի՛նչ ծածկեցաւ յորդւոց նոցա յազգ-
յայլ , պատմել զօրհնութիւնս տեառն ըզ-
գօրութիւն և զսքանչելիս իւր զոր արար :
Հաստատեաց զվկայութիւն իւր առ յա-
կօք , և օրէնս եղ ՚ի վերայ խորայելի :

Ար ինչ միանգամ պատուիրեաց հարցն
մերոց , ցուցանել զայս որդւոց իւրեանց ,
զի ծանիցեն յազգ յայլ :

Արդէք որք ծնանին՝ յարիցեն և պատմես-
ցեն զայս որդւոց իւրեանց . զի դիցեն առ-
աստուած զյոյսս իւրեանց , և մի մտասցին
զդօրծս աստուծոյ :

Օ պատուիրանս նորա ինդրելով ինդրես-
ցեն , և մի եղիցին որպէս և հարքն իւրեանց :

Ըզգ չար և դառնացող , ազգ որ ոչ ուզ-
ղեաց զսիրտ իւր և ոչ հաստատեաց առ-
աստուած զհոգի իւր :

Արդէք եփրեմի լիաձիգք և պնտաձիգք ,
յաւուր պատերազմի կասպարձս դար-
ձուցին :

Ոչ կացին նորա յուխափ տեառն , և ըստ
իրաւանց նորա ոչ կամեցան գնալ :

- Ա՛ռաացան զերախափա նորա , և զքանչե-
 լիան զոր եցոյց նոցա :
- Ա՛ռաջի հարց նոցա զոր արար զքանչե-
 լիւր , յերկրին եղխպտացւոց և ՚ի դաշտին
 տայանու :
- Ա՛հերձ զծովն և անցոյց զնոսա , և կացոյց
 զջուրնն որպէս ՚ի տիկա :
- Ա՛ռաջնորդեաց նոցա ամպով ՚ի տուէ , և
 զամենայն գիշեր ՚ի լոյս հրոյ :
- Ա՛հերձ զվէմն յանապատին , և ետ ըմպել
 նոցա որպէս ՚ի խորոյ մեծէ :
- Ա՛հան զջուրնն ՚ի վիակն , և հոսեաց որպէս
 զգետս զջուրնն :
- Ա՛սկայն յաւելին ՚ի մեղանչել , և ևս բար-
 կացուցին զբարձրեալն յանջրդի :
- Փորձեցին զաստուած ՚ի սիրտս իւրեանց ,
 ՚ի խնդրել զկերակուր անձանց իւրեանց :
- Տրանջեցին զաստուածոյ և ասացին , մի՛ թէ
 կարօղ իցէ աստուած պատրաստել սեղան
 յանապատի :
- Քանզի հարկանէր զվէմն՝ և հոսէին ջուրք ,
 և վտակք խաղային ՚ի նմանէ :
- Ա՛ղէ՛ հա՛ց ևս կարացէ տալ նա մեզ , կամ
 պատրաստեցէ՞ սեղան ժողովրդեան իւրոյ :

1) անն այսորիկ լուաւ զայն տէր և յա-
պաղեաց . հուր բորբոքեցաւ ՚ի յակոբ , և
բարկութիւն ել ՚ի վերայ խորայէլի :

Օ ՚ի ոչ հաւատացին յաստուած , և ոչ
յուսացան ՚ի փրկութիւն նորա :

Հրաման ետ ամպոց ՚ի վերուստ , և զդրու-
նքս երկնից եբաց , և տեղեաց ՚ի նոսա ըզ-
մանանայ ՚ի կերակուր :

Օ հաց երկնից ետ նոցա , զհաց հրեշտա-
կաց կերին մարդիկ . և իջոց ՚ի նոսա զկե-
րակուր ՚ի լիութիւն :

Եհան զհողին հարաւոյ , և էած զօրու-
թեամբ իւրով զհիւսիսիւ :

Տեղեաց ՚ի նոսա միս որպէս զհող , որպէս
զաւազ ծովու զթռչունս թեաւորս :

Կարկ ՚ի մէջ բանակի նոցա , և շուրջ զվե-
րանօք նոցա :

Կերին և յագեցան յոյժ , և զցանկութիւն
նոցա ետ նոցա , և ոչինչ կարօտ եղեն ՚ի
ցանկութենէ իւրեանց :

Սինչդեռ կերակուրք ՚ի բերանս իւրեանց
էին , բարկութիւն յաստուծոյ ել ՚ի վերայ
նոցա :

Սպան զբազուճս ՚ի նոցանէ , և զընտիր ըն-



տիրս յարայելի աստուկեաց:

Յոցամ ամենայնի մեղան և ևս, և ոչ հաւա
տացին սքանչելեաց նորա:

Պակասեցան յունայնութեան աւուրք նո
ցա, և ամք նոցա փութապէս անցին:

Յորժամ սպանանէր զնոսա՝ խնդրէին ըզ
նա, դառնային և առաւօտ անկէին առ
աստուած:

Յիշեցին զի աստուած օգնական էր նո
ցա, աստուած բարձրեալ փրկիչ էր նոցա:

Միեցին զնա բերանօք իւրեանց, և ըզ
ուօք իւրեանց ստեցին նմա. և սիրտք նո
ցա ոչ էին ուղիղք ընդ նմա, և ոչ հաւա
տացին ուխտի նորա:

ՍԼ նա ինքն գժամ էր, քաւէր զմեզս
նոցա՝ և ոչ սպականէր:

Յաճախէր դարձուցանել զբարկութիւն
իւր, և ոչ բորբոքէր զամենայն սրամտու
թիւն իւր:

Յիշեաց թէ մարմին են նորա. հոգի որ
ելանէ՝ այլ ոչ ևս դառնայ:

Քանիցս անգամ դառնացուցին զնա յա
նապատի, և բարկացուցին զբարձրեալն
յանձրոզի:



Պարձան և փորձեցին զաստուած , և ըզ-
սուրբն խորայելի զայրացուցին :

Ոչ յիշեցին զձեռն նորա՝ յաւուր յա-
րուժ փրկեաց զնոսա ՚ի ձեռաց նեղաց
նոցա :

Որպէս արար զնշանս և զարուեստս իւր
յերկրին եգիպտացւոց , և ՚ի դաշտին տայա
նու :

Պարձոյց յարիւն զդեռս նոցա , և զանձ-
րես նոցա զի մի արբցին :

Ղաւքեաց ՚ի նոսա շանաճանձ և եկեր ըզ-
նոսա , և գորտիւ ապականեաց զնոսա :

Լա ժանկոյ զպտուղս նոցա , և զլաստակս
նոցա մարախոյ :

Լհար կարկառի զայգիս նոցա , և զթզենիս
նոցա եղեմամբ :

Ստանեաց ՚ի կարկուտ զանասունս նոցա ,
և զստացուածս նոցա հրով դատեաց :

Ղաւքեաց ՚ի նոսա զսրամտութիւն բար-
կութեան իւրոյ , զսրամտութիւն զբարկու-
թիւն և զնեղութիւն :

Ղաւքեաց ՚ի նոսա տանջանս ՚ի ձեռն հը-
րեշտակի չարի , և դիմեցոյց ՚ի նոսա զսրբ
մտութիւն բարկութեան իւրոյ :

Ոչ անխայեաց ՚ի մահաւանէ զանձինս նոցա, և զանասունս նոցա ՚ի մահ մատներաց: Եւ հար զամենայն անդրանիկս եզխպտացւոց, զսկիզբն ամենայն վաստակոց նոցա ՚ի յարկս քամայ:

Հորդան ետ որպէս խաշին ժողովրդեան իւրոյ. և եհան զնոսա որպէս զհօտ յանապատ:

Մաաջնորդեաց նոցա յուսով, և ոչ երկեան, և զԹշնամիս նոցա ծով ծածկեաց: Եւ հան զնոսա ՚ի լեառն սրբութեան իւրոյ, ՚ի լեառն այն զոր ստացաւ աջ նորա:

Սերժեաց յերեսաց նոցա զհեթանոսս, և վիճակեցոյց ՚ի նոսա զվիճակ ժառանգութեան իւրոյ, և բնակեցոյց ՚ի յարկս նոցա զազգն խրայելի:

Փորձեցին դառնացուցին զաստուած բարձրեալն, և զվկայութիւն նորա ոչ պահեցին: Դարձան խոտորեցան որպէս և հարքն իւրեանց, դարձան և եղեն որպէս զաղեզն թիւր:

Դարձեալ բարկացուցին զնա ՚ի բազինս իւրեանց, և դրօշելովք իւրեանց նախանձարկին նմա:

Եւ աւ աստուած եւ արհամարհեաց զնոս,
 աս, եւ անարդեաց յոյժ զխարայել:

Սերժեաց յիւրմէ զխորանն 'ի սելով, ըզ-
 խորանն զոր բնակեցոյց 'ի մէջ մարդկան:

Սառնեաց 'ի գերութիւն զգորութիւնս
 նոցա, եւ զգեղս նոցա 'ի ձեռս թշնամեաց
 նոցա:

Մրգել 'ի սուր զժողովուրդ իւր, եւ զժա-
 քանգութիւն իւր անտես արար:

Օ երբիտասարդս նոցա եկեր հուր, եւ վասն
 կուսանաց նոցա ոչ ոք սղացաւ:

Քահանայք նոցա անկան 'ի սուր, եւ զայ-
 րիս նոցա ոչ ոք էր որ լայր:

Օ արթեաւ որպէս 'ի քնոց ակեր, որպէս հը-
 զոր զի թափէ զգինի:

Եհար յետս զթշնամիս իւր, եւ նախատփնս
 յաւիտենից արար զնոսա:

Սերժեաց նա զխորանն յովսեփու, եւ
 զազգն եփրեմի նա ոչ ընտրեաց:

Եւ ընտրեաց նա զազգն յուգայ. ըզ-
 լեառն սիօն զոր եւ սիրեաց:

Ե քնեաց որպէս միեղջերուի զսրբութիւն
 նորա, յերկրի հաստատեաց զնա յաւիտ-
 եան:

Բնորեաց զդաւիթ ծառայ իւր, և ընկա-
լաւ զնա ՚ի հօտէ խաշանց, ՚ի վերջին ծը-
նելոցն ընկալաւ զնա:

Հովուել զյակօք ծառայ իւր, և զխորայէլ
ժառանգութիւն իւր:

Արածէր զնոսա իմաստութեամբ սրտի իւ-
րոց, յանմեղութիւն ձեռաց իւրոց առաջ-
նորդէր նոցա:

Տունք . 47:

ՍԱԳՄՈՍ . 2Ը

Սաղմոս յաստի:

Ատուած մտին հեթանոսք ՚ի ժառանգու-
թիւն քո . պղծեցին զտաճար սուրբ
քո:

Արարին զերուսաղէմ որպէս զհիւղս մըր-
դապահաց . արկին զդիակունս ծառայից
քոց գէշ թռչնոց երկնից, և զմարմինս սըր-
բոց քոց գազանաց երկրի:

Հեղին զարիւն նոցա որպէս ջուր շօւրջ
զերուսաղէմաւ, և ոչ ոք էր որ թաղէր զնա:

Լիզաք մեք նախատինք դրացեաց մերոց ,
 ծաղր և այսին կատականաց այնոցիկ՝ որք
 շուրջ էին զմեզք :

Մինչև յերբ տէր բարկանաս դու իս-
 պառ , բորբոքեսցի որպէս հուր նախանձ քո՝
 Հեղ զբարկութիւն քո ՚ի վերայ ազգաց
 որք զքեզ ոչ ճանաչեցին , ՚ի վերայ թա-
 գաւորաց որք զանուն քո ոչ կարդացին . զի
 կերին զյակոր և զտեղի նորա աւերեցին :
 Մի յիշեր զմեզս մեր զառաջինս , վաղ-
 վաղ եկեսցէ առ մեզ ողորմութիւն քո ին՝
 զի աղքատացաք յոյժ :

Օգնեա՛ մեզ աստուած փրկիչ մեր , վասն
 փառաց անուան քոյ :

Տէր փրկեա՛ զմեզ և քաւեա՛ զմեզս մեր
 վասն անուան քոյ :

Մի երբէք ասասցեն ՚ի հեթանոսս , թէ
 ուր է աստուած նոցա :

Եւ յայտնի ինչ լիցի ՚ի վերայ հեթանո-
 սաց առաջի աչաց մերոց , առ ՚ի խնդրել
 զփրէժ արեան ծառայից քոց որ և հեղաւ :
 Մտցէ առաջի քո հեծութիւն կապելոց .
 ըստ մեծութեան բաղկի քո շահեա՛ դու
 զորդիս սպանելոց :

Հատն դրացեաց մերոց եօթնպատիկ ՚ի
ծոց նոցա , զնախատինս իւրեանց զոր նա-
խատեցին զքեզ տէր :

Սեք ժողովուրդք և խաչն արօտիքոյ խոս-
տովան եղիցուք առ քեզ յաւիտեան , ազ-
գէ յազգ պատմեցուք զօրհնութիւնս քո :

Տունք . ժգ :

ՍՆՂՄՈՍ . ԷԹ

Ի կատարած . ՚ի վերայ դառանցելոցն վկայութիւնս .
Սաղմոս աստուայ , ՚ի վերայ եթովպացւոցն :

Ար հովուեաղ խորայելի նայեանց , որ ա-
ռաջնորդես որպէս խաչին յովսեփու :

Ար նստիս ՚ի քրովբէս յայանեանց առաջի
եփրեմի բենիամինի և մանասէի :

Չարթն զզօրութիւնս քո , և եկ ՚ի կեցու-
ցանել զմեզ :

Ստուած զօրութեանց դարձն զմեզ , ե-
րևեցն զերեսս քո ՚ի մեզ և կեցցուք :

Տէր աստուած զօրութեանց մինչև յերբ
բարկանաս յաղօթս ծառայից քոց :

Չամբեցեր մեզ հաց արտասուաց , և
արբուցեր մեզ արտասուս չափով :

Վարբեր զմեզ նախատինս դրացեաց մե-

րոց , այսին կատականաց թշնամեաց մերոց :
 Եստուած զօրութեանց դարձն զմեզ , ե-
 րևեցն զերեսս քո 'ի մեզ և կեցցուք :

Եւ յգի յեղիպտոսէ փոխեցեր . հաներ
 զհեթանոսս և զնոսս տնկեցեր , և առաջ-
 նորդեցեր նմա :

Հաստատեցեր զարմատս նորա և ելից զեր
 կիր . ծածկեաց զլերինս հովանի նորա , և
 բարունակ նորա զմայրս աստուծոյ :

Չգեաց զորթ իւր մինչև 'ի ծով , մինչև
 'ի գետս են շառաւիղք նորա :

Ի նդէր քակեցեր զցանկ նորա , և կթեն
 զնա անցաւորք ճանապարհի :

Եւ պականեաց զնա խող անտառի . և երէ-
 վայրի արածեցաւ 'ի նմա :

Եստուած զօրութեանց դարձ հայեանց
 յերկնից և տես , այց արա այգւոյս այս-
 միկ և զարման տանք սմա՝ զոր տնկեաց
 աջ քո :

Ի վերայ որդւոյ մարդոյ զոր զօրացուցեր
 զնա 'ի քեզ , այրեցեալ 'ի հուր և աւե-
 րեալ , 'ի սաստէ քումմէ կորիցէ :

Եւ զիցի ձեռն քո 'ի վերայ առն , աջ քո
 'ի վերայ որդւոյ մարդոյ զոր զօրացուցեր

զնա 'ի քերզ:

Ոչ ևս 'ի բացեայ եղիցուք մեք 'ի քէն .
կեցուցես դու զմեզ , և զանուն քո տէր
կարդասցուք:

Աստուած զօրութեանց դարձն զմեզ , և
բեկցն զերեսս քո 'ի մեզ և կեցցուք:

Տունք . ԺԷ

ՍՆՂՄՈՍ . 2

Ի կատարած . վան հնձանաց . Սաղմոս յաստի .
հինգերորդ շաբաթուց:

Յնձացէք առ աստուած՝ օգնական է
մեր , աղաղակեցէք առ աստուած յակու
բայ:

Ղաէք սաղմոս և տնւք օրհնութիւն , սաղ
մոս ասացէք նմա 'ի ձայն քաղցրութեան:
Փնղ հարէք 'ի դլութս ամսոց , յաւուր
նշանաւորի տարեկանաց մերոց:

Հրաման է այս իսրայէլի , և իրաւունք են
աստուծոյ յակորայ:

Ո կայութիւնն յովսեփու զոր էդ ընդ նը
մա . որպէս ելանէք նա յերկրէն եգիպտ
տացոց , լեզու զոր ոչ գիտէր լուա:

Ի բաց արար 'ի բեռանց զթիկունս նորայ:

և զձեռս նորա յորթ և ՚ի թի ծառայելոյ :
 Ի նեղութեան կարգացեր առ իս և վրկե-
 ցի զքեզ , լուայ քեզ ՚ի դաղանութենէ
 մրրկին , և փորձեցի զքեզ ՚ի վերայ ջուրցն
 հակառակութեան :

Դ՛հըր ժողովուրդ իմ և վկայեմ քեզ , և
 իսրայէլ թէ լուիցես ինձ :

Մ՛ի ևս եղիցին քեզ աստուածք առ ժա-
 մայնք . և մի՛ երկիրադանիցես դու աս-
 տուծոյ օտարի :

Եւ եմ տէր աստուած քո որ հանի զքեզ
 յերկրէն եգիպտացւոց , բայց զբերան քո
 և լցից զդա :

Եւ ժողովուրդ իմ ոչ լուաւ ձայնի իմում ,
 և իսրայէլ յիս ինչ ոչ նայեցաւ :

Բարձի թողի զնոսա երթալ զհետ կամաց
 սրտից իւրեանց , զի գնացին նորա ըստ
 կամս անձանց իւրեանց :

Սի թէ ժողովրդեան իմոյ լուեալ էր ինձ ,
 կամ իսէլի զձանապարհս իմ զնացեալ էր :
 Արպէս զոչինչ խոնարհ արարեալ էր իմ
 զթշնամիս նորա , և ՚ի վերայ նեղաց նո-
 րա արկեալ էր զձեռն իմ :

Թշնամիք տեսան տեցին նմա , և եղիցին

Ժամանակք նոցա յաշխարհի:
 Կերակրեաց զնոսա 'ի պարարտութենէ ցո-
 րենոց, և 'ի միմէ մեղք յագեցոց նոցա:

Տունք . ԺԷ:

ՍԵՂՄՈՍ . ԶԵ

Սաղմոս յասափ:

Աստուած եկաց 'ի ժողովս աստուծոց, և
 'ի միջի նոցա դատէր զնոսա:

Սինչև յերբ դատէք անիրաւութեամբ,
 և ակն առնուք մեղաւորաց:

Դատ արարէք որբոյն և այրւոց. իրաւունս
 արարէք տնանկին և խոնարհի:

Ապրեցուցէք զաղքատն և զտնանկն, 'ի
 ձեռաց մեղաւորի փրկեցէք զնոսա:

Ոչ խմացան և ոչ 'ի միտ առին, 'ի խաւարի
 գնացին, և շարժեցան իմ հիմունք երկրի:

Լա ասացի թէ աստուածք իցէք, կամ որ-
 դիք բարձրելոյն ամենեքեան:

Դուք ահաւաղիկ որպէս զմարդիկ մեռա-
 նիք, և որպէս զմի յիշխանաց անկանիք:

Արի աստուած և դատեան զերկիր, զի դու
 ժառանգեցես զամենայն հեթանոսա:

Տունք . Ը: Գորդայս . ԾԲ:

ՍԱԼՄՈՍ · 26

Օրհնութիւն · Սաղմոս յաստի

Աստուած ո՞ք եղ նմանիցի . մի լուեր և
մի դադարիիր աստուած :

Օ ի ահա թշնամիք քո դոչեցին , և ատելիք
քո համբարձին զգլուխս իւրեանց :

Ի վերայ ժողովրդեան քո խորամանկեցին
զգխտութիւն , խորհեցան ՚ի վերայ սրբոց
քոց և ասացին :

Եկայք աստակեցուք զնոսա յազդաց , և
մի յիշեցի անուն խրայէլի և ևս :

Խորհեցան միաբանութեամբ ՚ի միասին ,
և վասն քո ուխտ արարին :

Իանակք եղովմայեցւոց և խմայելացիք ,
մոխբ և հադարացիք :

Ի եբող՝ ամօն՝ ամաղէկ , և այլազգիքն ա-
մենայն բնակչօքն հանդերձ ծուրայ :

Նա՛ և ասուր եկեալ էր ընդ նոսա .
ամենեքեան սոքա զօրավիզն էին որդւոցն
զովտայ

Արա՛ զնոսա որպէս զմադիամ , որպէս
զսիսարայ , և որպէս զաբին ՚ի ծործորսն
կիսօնի :

Սատակեցան նոքա յականս դովրայ , և
 եղեն որպէս զաղբ երկրի :

Արա՛ դիշխանս նոցա որպէս զօրէքն , զէքն ,
 զզէքէէ , և զսաղմանս և զամենայն իշ-
 խանս նոցա :

Ուր ասացին՝ ժառանգեսցուք ՚ի մեզ ըզ-
 սրբութիւնն աստուծոյ :

Աստուած իմ արա զնոսա որպէս զանիւ ,
 և որպէս զեղէգն առաջի հողմոյ :

Որպէս հուր զի այրէ զանտառս , որպէս
 բոց զի կիզու զլերինս :

Այսպէս հալածեացես զնոսա միրկաւ քով ,
 և բարկութեամբ քով խռովեցուցես ըզ-
 նոսա :

Ի ից զերեսս նոցա անարգանօք , և խրնդ-
 րեցեն զանուն քո տէր :

Ամաչեացեն և խռովեցին յաւիտեանս յա-
 ւիտենից , և ամօթալից կորիցեն :

Օանիցեն զի անուն քո տէր է , և դու
 միայն բարձրեալ ես ՚ի վերայ ամենայն
 երկրի :

Տունք . ԺԸ :

Ի կատարած • վասն հնձանացն • որդւոցն կորխայ •
Սաղմոս դաւթի:

Որպէս սիրելիք են յարկք քո տէր զօ-
րութեանց , ցանկայ և փափագի անձն իմ
Ի դաւթիքս քո:

Սիրտ իմ և մարմին իմ՝ ցնծասցեն առ
աստուած կենդանի:

Քանզի ճնձղուկ եգիտ իւր տուն . և
տատրակ զբոյն ուր դիցէ զձագս իւր:

Սեղան քո տէր զօրութեանց , թագաւոր
իմ և աստուած իմ:

Լրանի ամենեցուն որ բնակեալ են ՚ի տան
տեառն , յաւիտեանս յաւիտենից օրհ-
նեսցեն զքեզ:

Լրանեալ է այր որոյ օգնութիւն իւր ՚ի
քէն է . ելս եղ ՚ի մտի իւրում ՚ի հովտէս
տրամութե՛ն՝ ՚ի տեղւոջ յորում ուխտեաց:

Օ օրհնութիւն ստասցի որ զօրէ՛նս դնէ ,
դնասցէ նա ՚ի զօրութենէ՛ն ՚ի զօրութիւն ,
և երեւոցի աստուած հրեշտակաց ՚ի սիօն:

Տէր աստուած զօրութեանց լուր աղօթից
իմոց , ունկնդիր աստուած յակորայ:

Ընդունող ես դու մեր , տես աստուած

և նայեալց յերեսս օծելոյ քոյ:

Վասն զի լաւ է ինձ մի օր 'ի դաւթիթս
քո , քան զհազարս:

Ի նորեցի ես ընդ աղբ գալ 'ի տան աս-
տուծոյ , առաւել քան բնականալ 'ի յար-
կրս մեղաւորաց:

Օղորմութիւն և զճշմարտութիւն սիրէ
տէր աստուած մեր , զշնորհս և զփառս
տացէ:

Տէր ոչ պակաս առնէ զօղորմութիւն իւր
յայնցանէ , որ գնան յամբժութեան:

Տէր աստուած զօրութեանց երանեալ է
այր՝ որ յուսայ 'ի քեզ:

Տունք . ժիջ:

ՍԱՂՄՈՍ . 27

Ի կտարած . որդւոցն կորխայ . Սողմոս դաւթի:

Հաճեցար տէր ընդ երկիր քո , և դար-
ձուցեր զգերութիւն յակօբայ:

Իողեր զանիրաւութիւն ժողովրդեան քոյ ,
և ծածկեցեր զամենայն մեղս նոցա:

Իւեցուցեր զամենայն սրտամտութիւնս քո ,
և դարձար 'ի բարկութենէ սրտամու-

Թեան քո:

Դորձ առ մեզ աստուած փրկիչ մեր , և
դարձն զսրտմտութիւնս քո 'ի մէնջ:

Ս'ի յաւիտեան բարկանար մեզ տէր , և
մի ձգեր զբարկութիւն քո ազդէ մինչև
յազդ:

Աստուած՝ դու դարձեալ կեցուցես ըզ-
մեզ , և ժողովուրդ քո ուրախ եղիցի 'ի
քեզ:

Յոյց մեզ տէր զողորմութիւնս քո , և ըզ-
փրկութիւնս քո տուր մեզ:

Սուաք զի՛նչ խօսի տէր աստուած մեր ,
խօսեցի զխաղաղութիւն ժողովրդեան իւ-
րոյ առ սուրբս իւր՝ և առ այնոսիկ ոյք
դարձեալ են առ նա սրտիւք:

Սակայն մերձ է առ երկիւղածս իւր փրկ-
կութիւն նորա , բնակիլ փառաց նր՝ յերկ-
րի մերում:

Ողորմութիւն և ճշմարտութիւն պատա-
հեցին . արդարութիւն և խաղաղութիւն
համբուրեցին:

Ճշմարտութիւն յերկրէ բուսաւ , ար-
դարութիւն յերկնից երևեցաւ:

Տէր ապցէ զբաղցրութիւն և երկիր մեր

տացէ զպատու իւր . արդարութիւն ա-
ռաջի նորա դնացէ , դիցէ 'ի ճանապար-
հի զգնացս իւր :

Տունք . ժբ : Գորգացս . խն :

ՍՄԱՐՈՍ . 26

Սաղմոս Գաւթի . Ազօթք երեկոյի :

Խոնարհեցն տէր զունկն քո և լուր ինձ .
զի աղքատ և տնանկ եմ ես :

Պահեա՛ զանձն իմ սուրբ տէր . և փրկեա՛
զձառայս քո աստուած իմ որ 'ի քեզ յու-
սացայ :

Ոչորմեա՛ ինձ տէր զի առ քեզ աղաղակե-
ցի զօրհանապաղ , ուրախ արա զանձն ծա-
ռայի քո , զի առ քեզ տէր համբարձի
զանձն իմ :

Օ ի դու տէր քաղցր և ուղիղ ես . բա-
ղումողորմ առ ամենեսեան որք կարգան
առ քեզ :

Ունկնդ իր տէր աղօթից իմոց , և նայեա՛
'ի ձայն ինդրուածաց իմոց :

Յաւուր նեղութեան իմոց կարդացի առ

քեզ , և լուար ինձ :

Ոչ ոք է նման քեզ յաստուածս տէր , և
ոչ ոք է որպէս զգործս քո :

Օ ամենայն ազգս զոր արարեր՝ եկեացեն
և երկիրպագցեն առաջի քո , և փառաւոր
արասցեն զանուն քո յաւիտեան :

Ս՛եծ ես դու տէր և առնես սքանչելիս ,
և դու միայն ես աստուած :

Ղաաջնորդեալ ինձ ՚ի ճանապարհի քում , և
գնացից ՚ի ճշմարտութեան քում , և ուրախ
եղիցի սիրտ իմ՝ երկնչիլ յանուանե
քումսկ :

Խոստովան եղէց առ քեզ տէր աստուած
իմ բոլորով սրախ իմով . փառաւոր արա
րից զանուն քո յաւիտեան :

Ս՛եծ եղև ՚ի վերայ իմ ողորմութիւն քո
տէր , և փրկեցեր զանձն իմ ՚ի դժոխաց
ներքնոց :

Ղստուած՝ անօրէնք յարեան ՚ի վերայ իմ ,
և ժողովք հզօրաց ինդրեցին զանձն իմ ,
և ոչ համարեցան զքեզ աստուած առա
ջի իւրեանց :

ՂՂԼ դու տէր աստուած իմ՝ գթած ես
և ողորմած , երկայնամիտ բազումողորմ

և ճշմարիտ , նայեա՛ս առ իս և որորմեա՛ս ինձ :
 Տուր զօրութիւն ծառայի քո , կեցո՛ւ զոր-
 դի աղախնոյ քո , և արա՛ս առ իս նշան բա-
 րութեան :

Տեսցեն՝ ատելիք իմ և ամաչեսցեն՝ , զի
 դու տէր օգնեցեր ինձ և մխիթարեցեր
 զիս :

Տունք . Ժ Գ :

ՍԱՂՄՈՍ . 22

Սաղմոս օրհնութեան . որդւոցն կորխայ :

Հիմունք նորա ՚ի լեառն սուրբ նորա . սի-
 րէ տէր զդրունս սիօնի առաւելքան զա-
 մենայն յարկան յակօբայ :

Փառաւորեալն խօսեցաւ մասն քո , ահա-
 ւաղիկ քաղաքդ աստուծոյ :

Նիշեցի զաահաբ և զբաբելոն ոյք ճանա-
 շեն զիս . ահա այլազգիք և ծուր և ժո-
 զովուրդք հնդկաց՝ սոքա եղեն անդ :

Սիօնի ասի մայր , և մարդ ծնաւ ՚ի նմա ,
 և ինքն հիմունս էարկ ՚ի նմա բարձրեալն :

Տէր պատմեցէ զբովք ժողովրդեան , իշ-
 խանացս այսոցիկ ոյք եղեն անդ :

Արպէս զի ուրախ լիցին 'ի քեզ ամենեւ
քեան . որոց բնակութիւն 'ի քէն է :

Տունք . 42 :

ՍԱԼՄՈՍ . 21 :

Ի կատարած . վասն մաղաղեթաց խնատութիւն . զի
ես պատասխանի եման խնատութեամբ խորայելի :

Տէր աստուած փրկութեան խնոյ , 'ի տը
ւէ կարգացի և գիշերի առաջի քո :

Մացեն աղօթք իմ առաջի քո տէր , խո
նարհեցցի ունկն քո 'ի խնդրուածս իմ :

Օ ի լցաւ չարչարանօք անձն իմ , և կեանք
իմ 'ի դժոխս մերձեցան , և համարեցայ
ես ընդ այնոսիկ որք իջանն 'ի գուբ :

Լիցէ ես որպէս մարդ առանց օգնականի ,
և 'ի մեռեալս ազատ :

Արպէս զփիրաւորս , որք ննջեն 'ի գերեզ
մանս :

Օ որս դու ոչ յիշեցեր , նորս 'ի ձեռանէ
քումմէ մերժեցան :

Լիցին զիս 'ի գբի ներքնումն , 'ի խաւարի
և 'ի ստուերս մահու :

Յիս հաստատեցաւ սրտմտութիւն քո ,
զամենայն զբօսանս քո աներ 'ի վերայ իմ :

Հեռի արարեր յինէն զճանօթս իմ , և եր
դին զիս նշաւակ իւրեանց :

Ստանեցայ և ոչ ելանէի , աչք իմ տկա-
րացան յազքատութենէ :

Աղաղակեցի առ տէր զօրհանապազ , և
համբարձի առ քեզ զձեռս իմ :

+ Սի թէ մեռելոց առնիցեն զսքանչելիս
քո , կամ բժշկիք յարուցեալ խոստովան
առնիցին առ քեզ :

Սի թէ պատմեցէ որ երբէք ՚ի գերեզ-
մանի զողորմութիւնս քո , կամ զճշմար-
տութիւնս քո ՚ի կորստեանս :

Սի թէ ճանաչիցին ՚ի խաւարի սքանչե-
լիք քո , կամ արդարութիւն քո յերկիր
մոռացեալ :

Ես առ քեզ տէր աղաղակեցի , առաւօ-
տու աղօթք իմ ժամանեցեն առ քեզ :

Նդէր տէր մերժես զանձն իմ , կամ դար-
ձուցանես զերեսս քո յինէն :

Տնանկ և վաստակաւոր եմ ես ՚ի մանկու-
թենէ իմմէ . ՚ի բարձրութենէ խոնարհե-
ցայ և ամչեցայ :

Եիս հաստատեցաւ բարկութիւն քո , ար-
հաւիրք քո խոտկեցուցին զիս :

Շրջեցան զինև որպէս ջուր , զօր ամե-
նայն պաշարեցին զիս 'ի միասին :
Հեռի արարեր յինէն զբարեկամս իմ և
զծանօթս իմ , վասն թշուառութե իմոյ :
Տունք . եւ Գորղայս . խք :

ՍԱԼՄՈՍ . 2Ը

Իմաստութիւն եմանաց յեզրայելացւոյ :

Օ ողորմութիւնս քո տէր յաւիտեան օրհ-
նեցից , ազգէ յազգ պատմեցից զճը-
մարտութիւնս քո բերանով իմով :

Եսացեր թէ աշխարհս ողորմութեամբ շի-
նեցի , յերկինս պատրաստ եղիցի ճշմար-
տութիւն քո :

Լիլի ուխտ ընտրելոց իմոց , երդուաց դաւ-
թի ծառայի իմոյ :

Հաւիտեան հաստատեցից զգաւակ քո , և
շինեցից ազգէ յազգ զաթոռ քո :

Խոստովան եղիցին երկինք սքանչելեաց քոց
տէր , և ճշմարտութիւն քո յեկեղեցիս
սրբոց :

Ով է յամպս որ հաւասարի քեզ , կամ

Ո՞վ նմանիցի տեսան յորդիս աստուծոյ:
 Աստուած փառաւորեալ է 'ի խորհուրդս
 սրբոց իւրոց , մեծ և ահաւոր 'ի վերայ
 այնոցիկ ոյք շուրջ են գնովաւ:

Տէր աստուած զօրութեանց ո՞ նմանի
 քեզ . հզօր ես դու տէր՝ և ճշմարտաւ
 թիւն քո շուրջ է զքեւ:

Դու տիրես զօրութեանց ծովու , և բզ-
 խաովութիւն այլեաց նորա դու ցածու-
 ցանես:

Դու խոնարհեցուցանես որպէս վիրաւորս
 զամբարտաւանս , 'ի զօրութիւն բազկի քո
 ցրուեցեր զթշնամիս քո:

Քո են երկինք և քո է երկիր , զաշխարհս
 լիւ իւրով դու հաստատեցեր , զհիւօսս
 և զհարաւ դու արարեր , թաքօր և հեր-
 մօն յանուն քո ցնծացեն:

Քո է բազուկ և քո է զօրութիւն , զօ-
 րացի աջ քո և բարձր եղիցի ձեռն քո:

Յարդարութիւն և յիրաւունս հաստա-
 տալ է աթոռ քո . ողորմութիւն և ճշ-
 մարտութիւն գնացեն առաջի երեսաց քո:

Կրանի ժողովրդեան որ գիտեն զօրհու-
 թիւնս քո տէր , 'ի լոյս երեսաց քոց գնա-

ցեն , և յանուն քո ցնծասցեն զօրհանա-
պազ , և յարդարութեան քում բարձր
եղիցին :

Պարծանք զօրութեանց մերաց դու ես
տէր , և 'ի կամս քո բարձր եղիցի եղջիւր
մեր :

Ի տեսանէ է օգնութիւն սրբոյն խորայէ լի
Թագաւորին մերոյ :

Յայնժամ խօսեցար տեսլեամբ ընդ որդիս
քո , և ասացեր եղից զօգնութիւն իմ 'ի
վերայ հզօրին , և բարձր արարից զըն-
արեալն 'ի ժողովրդենէ իմմէ :

Դաքի զդաւիթ ծառայ իմ , և իւղով սրբով
իմով օծի զնա :

Չեան իմ ընկալցի զնա , և բազուկ իմ
զօրացուցէ զնա :

Ս'ի մեղիցէ նմա թշնամի , և որդի անօ-
րէնութեան մի չարչարեացէ զնա :

Չարից ասացի նորա զթշնամիս նորա , և
դատելիս նորա 'ի պարտութիւն մասնեցից :

Ոչմարտութիւն իմ և ողորմութիւն իմ ընդ
նմա , և յանուն իմ բարձր եղիցի եղջիւր
նորա :

Եղից 'ի ծովու զձեռն նորա , և 'ի վերայ

դետոց զաջ նորա:

Նա կարդասցէ առ իս՝ հայր իմ ես դու ,
աստուած ընդունօղ փրկութեան իմոյ:

Նա անդրանիկ արարից զնա , և բարձր
քան զամենայն թագաւորս երկրի:

Յաւիտեան պահեցից նմա զողորմութիւն
իմ , և ուխտ իմ հաւատարիմ ընդ նմա:

Հաստատեցից յաւիտեանս յաւիտենից ըզ
զաւակ նորա , և զաթոռ նորա որպէս զա
ւուրս երկնից:

Թէ թողցեն որդիք նորա զօրէնս իմ , և
յիրաւունս իմ ոչ կամեսցին զնալ:

Թէ զարդարութիւնս իմ անարգեցեն , և
զպատուիրանս իմ ոչ պահեցեն:

Հարից դաւազանաւ զանօրէնութիւնս հո
ցա , և ամենջանօք զանիրաւութիւնս նոցա:

Իսկ զողորմութիւն իմ ոչ արդելից ՚ի նո
ցանէ , և ոչ նենգեցից ճշմարտութեան

իմում , և ոչ անարգեցից զուխտ իմ , և
ինչ որ ելանէ ընդ շրթունս իմ՝ զայն ոչ

արհամարհեցից:

Սխանդամ երդուայ ՚ի սրբութիւն իմ ,
թէ դաւթի ես ոչ ստեցից:

Չաւակ նորա յաւիտեան կացցէ , և ա

Թոռ նորա որպէս զարեգակն առաջի իմ .
 և որպէս զլուսին զի հաստատեալ է յաւի
 տեան վկայ հաւատարիմ յերկինս :
 Իսկ արդ դու մերժեցեր և անարգեցեր ,
 և ընդ վայր հարեր զօժեալ քո :
 Դարձուցեր զուխտ 'ի ծառայէ քումմէ ,
 պղծեցեր յերկրի զսրբութիւն նորա :
 Քակեցեր զամենայն պարխապս նորա , և
 եղեր զամուրս նորա 'ի դողումն :
 Հասիշտակեցին զնա անցաւօրք ճանապարհի ,
 և եղև նա նախատ դրացեաց իւրոց :
 Իարձր արարեր զաջ նեղչաց նորա . և ու
 րախ արարեր զամենայն թշնամիս նորա :
 Դարձուցեր զօգնութիւն 'ի սրոյ նորա ,
 և ոչ ընկալար զնա 'ի պատերազմի :
 Անարգեցեր զսրբութիւն նորա , և զա
 թոռ նորա յերկիր կործանեցեր :
 Աւազ արարեր զամուրս ժամանակաց
 նորա , և հեղեր զնովաւ զամօթ :
 Այնչև յերբ դարձուցանես զերեսս քո
 իսպառ , բորբոքեացի որպէս հուր բար
 կութիւն քո :
 Իսկ արդ յիշեա՛ և տես թէ՛ ով է իմ հան
 դիսա . մի թէ՛ 'ի զուր ինչ ստեղծեր զա

մենայն որդիս մարդկանս

Այլ է մարդ որ կեցցէ և ոչ տեսցէ զմահ,
կամ փրկեսցէ զանձն իւր 'ի ձեռաց դը-
ժոխոց

Աւր են ողորմութիւնք քո տէր առաջինք,
զոր երդուար դաւթի ճշմարտութեամբ
քով:

{ } Իշեան զնախատինս ծառայի քոյ, զոր ըն-
կալայ 'ի ծոց իմ յազգաց բազմաց:


{ } որ նախատեսցին թշնամիք քո տէր, նա-
խատեսցին փոխանակ օժելոյ քոյ:

{ } Բհնեալ տէր աստուած յաւիտեանս յա-
ւիտենից . եղիցի եղիցի:

Տունք . իսր:

Կանոնս Գորգայս . է: Սաղմոս . ԺԷ:

Տունս . իսր:



ՕՐԸՆՈՒԹԻՒՆ ԵՍՍՅԵԱՅ ՈՐԴԻՈՅՆ

ԵՄՈՎՍԱՅ

Եսայեայ . իԷ:

Ի զիշերաց կանխէ հողի իմ առաւօտ առ-
նել առ քեզ աստուած:

Ո՛ր ասն զի լոյս են հրամանք քո 'ի վերայ
երկրի . ուսարժւք զարդարութիւն բնա-
կիւք երկրի:

Կարկեացի ամբարիշտն , և այլ ո՛չ ևս ուս-
յի առնել յերկրի զարդարութիւն ճշմար-
տութեան:

Բարձցի ամբարիշտն յերկրէ , և մի տես-
ցէ զփառս աստուծոյ:

Տէր բարձր ես և բազուկ քո հզօր . և
նոքա ո՛չ գիտացին:

Օ՛րանիցեն՝ ամաշեացեն , և նախանձ անկ-
ցի անխրատ ժողովրդեան . և արդ հուր
զլծշնամբս քո կերիցէ:

Տէր աստուած մեր տուր մեզ զխաղաղու-
թիւն քո . զի ըստ ամենայն գործոց մերոց
հատուցաւ մեզ:

Տէր աստուած մեր ստացիր զմեզ . զի
բաց 'ի քէն զայլ որ ո՛չ գիտեմք , և զա-
նուն քո անուանեմք զօրհանապաղ:

Իսկ արդ՝ մեռեալք զկենդանութիւն այլ
ո՛չ տեսանիցեն , և ո՛չ բժիշկք յարուցա-
նիցեն:

Ո՛ր ասն այսօրիկ ամեր հարեր սատակեցեր
և ջնջեցեր զամենայն արու մանուկ նոցա:

Յաւել տէր զչար ՚ի վերայ չարի նոցա ,
 և ան զչար ՚ի վերայ անօրինաց երկրի :

Տէր ՚ի նեղութեան յիշեցաք զքեզ . զի
 փոքր մի նեղութիւն է խրատ քո ՚ի վերայ
 մեր :

Որպէս երկունք յուց զի հասեալ իցէ
 ժամանակ ծննդեան , և առ ցաւս իւր
 ճշիցէ :

Ընպէս եղաք սիրելոյ քում տէր , յահ
 և յերկիւղ քո յղացեալ երկնեցաք՝ և
 ծնաք զհոգի փրկութեան քո :

Ոչ և ս կործանեսցուք մեք , այլ կործա-
 նեսցին անօրէնք երկրի :

Յարիցեն մեռեալք՝ և կենդանացին ամե-
 նեքեան , որք եղեալ են ՚ի գերեզմանա-

՝ արթիցեն ցնծացեն , և ուրախ եղիցին
 դարարեալք յերկրի :

Ս ան զի ցողդ որ ցողի ՚ի քէն , այդ բը-
 ժշկութիւն է նոցա . բայց երկիրն ամ-
 բարշտեալ սատակեսցի :

Խնյս աուր ժողովուրդ իմ , զնա՛ մուտ ՚ի
 շտեմարանս քո . և փակեա՛ զդրունս քո ա-

ռաջի երեսաց քոց :
 Փախիր և թազիր առ ժամանակ մի , մինչև

անցցէ բարկութիւն տեսանի
Փառք հօր և որդւոյ և :



ՄԱՂԹԱՆՔ

Խաղաղութեանց տաւօղ քրիստոս՝ զխաղաղութիւն և զերկնային սղարմութիւն քո պարգևեան յարարածս բո :

Սարդասէր տէր՝ վասն սրբուհւոյ անարատի մօր քոյ և կուսի , և վասն խաչի քոյ պատուահանի , տէր ընկալ զաղաչանս մեր , և կեցն՝ զմեզ :

Ձքարոզն և զազօթս 'ի վերջն Երանեալ կանոնին
բացես 'ի 34 . երեսն :

ՀԱՅՐԱՆՈՒԿՆԵՐ





ԲՅ. Կրօնք. Յայն:



Տեր ապաւէն եղեր մեր ազգէ՛ մինչև
 յազգ . մինչև լերինք հաստատեալ էին ,
 և մինչև ստեղծեալ էիր զերկիր և զամե-
 նայն օրերս :

Յաւիտենից մինչև յաւիտեանս դու ես .
 մի դարձուցաներ զմարդ ՚ի տառապանս .
 և սաացեր դարձարնւք առ իս որդիք
 մարդկան :

Հազար ամ յաչս տեառն որպէս օր երե-
 կի զի էանց . որպէս պահ մի գիշերոյ .
 և ամբ նոցա անարգութեամբ եղիցին :
 Նոգ առաւօտս որպէս դալարի բուսցին ,
 ընդ առաւօտս որպէս դալարի զուարճա-
 ցին և ծաղկեացին , ընդ երեկոյս թարշա-
 մեացին չորացին և անկ ցին :

Նուաղեցաք մեք ՚ի բարկութենէ բումմէ ,

և ՚ի սրամտութենէ քումմէ խառնեցաք :
 Եւդեր զմեզս մեր առաջի քո , և զկեանս
 մեր ՚ի լոյս երեսաց քոց :

Եւմենայն աւուրք մեր նուաղեցան , և ՚ի
 բարկութենէ քումմէ խառնեցաք :

Դաժանակ ամաց մերոց անդադար որպէս
 օարդի , և թիւ աւուրց ամաց մերոց ՚ի
 նոսա՝ եօթանասուն ամ :

Եւպա թէ առաւել ևս՝ ութսուն ամ . և
 որ ինչ աւելի է քան զայն ցաւօք և հե-
 ծութեամբ :

Եկն ՚ի վերայ մեր հեծութիւն , և խրա-
 տեցաք . իսկ արդ օ՞ դիտասցէ զգօրու-
 թիւն բարկութեան քո , և կամ յահէ
 քումմէ զսրամտութիւն քո համարեցի :

Եւյապէս ցոյց ինձ զաջ քո . և որ խոնարհ
 են սրտիւք զիմաստութիւնս քո :

Դարձ աէր մինչև յերբ , մի ի թարեաց ՚ի
 ծառայս քո :

Եւցաք առաւօտու ողորմութեամբ քով .
 ցրնձացաք և ուրախ եղաք զամենայն ա-
 ւուրս կենաց մերոց :

Ուրախ եղաք փոխանակ աւուրցն՝ յորս
 խոնարհ արարեր զմեզ , և ամացն՝ յորս

տեսաք զչարչարանս :

Հայեա՛ տէր 'ի ծառայս քո և 'ի գործս ձե
ռաց քոց , և առաջնորդեա՛ որդւոց նոցա .

Եղիցի լոյս տեսան աստուծոյ 'ի վերայ մեր :

Օ գործս ձեռաց մերոց ուզի՛ղ ալա 'ի
մեզ տէր . և զգործս ձեռաց մերոց յա-

ջողեա՛ մեզ :

Տունք . Ժ Գ :

ՍԵՂՄՈՍ . Զ

Օրհնութիւն գովութեան դաւթի :

Որ բնակեալն է յօրհնութիւն բարձրելոյն ,
ընդ հովանեաւ նոյ յերկինս հանգիցէ :

Նսասցէ տեսան ընդունեող իմ ես , ապա-
ւէն իմ աստուած , և ես յուսամ 'ի նա :
Նա փրկեցէ զիս յորոգայթէ որսողին , և
'ի բանիցն 'ի խռովութենէ :

Ի թիկնամէջս իւր ընկալցի զքեզ , 'ի հո-
վանի թեոց նորա յուսացիա :

Որպէս զէն՝ շուրջ եղիցի զքե ճշմարտու-
թիւն նորա :

Ոչ երկիցես դու յերկիւղէ գիշերի , և
նչ 'ի նեակ որ թռչի 'ի ասուէ :

Յիրէ որ շքի 'ի խաւարի , 'ի գայթակղու-

Թե՛նէ դիւին ՚ի հասարակ աւուր:
 Մնկցին ՚ի կողմանէ քումմէ հազարք և
 բիւրք ընդ աջմէ քումմէ, և առքեզ ինչ
 ոչ մերձեցին:

Իայց միայն աչօք քովք հայեցիս դու,
 և զհասուցումն մեղաւորաց տեսցես. զի
 դու տէր յոյս իմ ես:

Օ քարձրեալն արարեր քեզ ապաւէն.
 զի ոչ հասցեն առ քեզ չարք, և տանջանք
 մի մերձեցին ՚ի յարկս քո:

Հրեշտակաց իւրոց պատուիրեալ է վասն
 քո, ՚ի պահել զքեզ յամ ճանապարհս քո:
 Ի բազուկս իւրեանց ընկալցին զքեզ, զի
 մի երբէք հարցես զքարի զօտն քո:

Ի վերայ իժից և քարբից գնացես դու.
 և առ ոտն կոխեսցես զառիւծն և զխշապն:
 Վանզի յիս յուսացաւ և փրկեցից զնա,
 հովանի եղէց նմա՝ զի ծանեաւ զանուն իմ:
 Կարդացէ առ իս՝ և ես լուայց նմա, և
 առ նմա եղէց ՚ի նեղութեան:

Փրկեցից և փառաւոր արարից զնա, եր-
 կայն աւուրբք լցուցից և ցուցից նմա
 զփրկութիւն իմ:

ՍԱՀՄՈՍ . ՂԱ

Սաղմոս օրհնութեան առուր շարձուց 'ի դաւիթ :

Բարի է խոստովան լինիլ տեառն , և սաղ
մոս ասել անուան քում բարձրեալ :

Պատմել առաւօտու զողորմութիւնս քո ,
և զճշմարտութիւնս քո 'ի գիշերի :

Տանաղեալ սաղմոսարանաւ , 'ի ձայն
օրհնութեան գովել :

Ուրախ արարեր զիս տէր յարարածս քո ,
և 'ի գործս ձեռաց քոց ցնծացայց :

Որպէս զի մեծ են գործքքո տէր , և յոյժ
խոր են խորհուրդք քո :

Եւր անդգամ զայս ոչ ծանկեղ , և ան-
միտն զայս ոչ աւնու 'ի միտ :

Ի բուսանիլ մեղաւորաց որպէս խոտ , 'ի
ձաղկիլ այնոցիկ ոչք գործեն զանօրէնութի

Ստտակեցին յաւիտեանս յաւիտենից ,
և դու բարձրեալ ես յաւիտեանս տէր :

Օ 'ի ահա թշնամիք քո տէր , զի ահա
թշնամիք քո կորիցեն . ցրուեցին ամենե-
քեան ոչք գործեն զանօրէնութիւն :

Բարձր եղիցի որպէս միեղջերուի եղջիւր
իմ , և ձերութիւն իմ 'ի ձեթ սպարա-

տութեանս

Լատես ակն իմ 'ի թշնամիս իմ՝ ոչք յարուցեալ են 'ի վերայ իմ չարութեամբ , 'ի նոսա լուիցէ ունին իմ :

Մտղարքն որպէս զարմաւենիս ծաղկեացին . որպէս զմայրսն լիբանանու բազումք եղիցին :

Տնկեալք եղիցին 'ի տան տեսանն , և 'ի գաւթիս աստուծոյ մերոյ ծաղկեսցին :

Լւս՝ և բազումք եղիցին 'ի ծերութիւն պարարտութեան , գիրգք և փափուկք եղիցին 'ի պատմել , ուղիղ է տէր աստուած մեր՝ և ոչ գոյ 'ի նմա անիրաւութիւն :
Տունք . ժգ : Գորգացս . իգ :

ՍԱՂՄՈՍ . ԼԲ

Տաւուրն առաջին շարածու , յոր հաստատեցաւ երկիր . որհնութիւն գոգութեան Դաւթի :

Տէր Թաղաւորեաց վայելչութիւն զգեցաւ , զգեցաւ տէր զօրութիւն՝ ընդ մէջ իւր էած :

Հաստատեաց զաշխարհ զի մի սասանես :

ցի . պատրաստ է աթոռ քո 'ի սկզբանէ
յաւխտեանս դու ես :

Ամբարձան գետք տէր , և ամբարձին
գետք զձայնս իւրեանց . և յարիցեն գետք
'ի գնացս իւրեանց :

Ի ձայնէ ջուրց բազմաց , սքանչելի եղևն
գբօսանք ծովու :

Աքանչելի ես դու տէր 'ի բարձունս , վը-
կայութեանց քոց մեք յոյժ հաւատացար :
Տան քում վայելէ սրբութիւն տէր՝ ընդ
երկայն աւուրս :

Տունք . 4 :

ՍԱՂՄՈՍ . 127

Սաղմոս դաւթի . չորեքշաբաթու :

Աստուած վրէժխնդիր , տէր աստուած
վրէժխնդիր յայտնեցար :

Բարձր ընր որ դատես զերկիր , հատն
զհատուցումն ամբարտաւանից :

Աինչև յերբ մեղաւորք տէր , մինչև
յերբ մեղաւորք պարծեցին :

Բարբառեալ խօսէին զանիրաւութիւն ,
խօսեցին ամենեքեան՝ ոչք գործեն զանօ-
րէնութիւն :

Օ ժողովուրդս քո տէր խոնարհ արարին ,
 և զժառանգութիւն քո չարչարեցին :

Օ արին և զպանդուխտն սպանին , զորք-
 սին կոտորեցին , և ասացին ոչ տեսանէ
 զայս տէր , և ոչ ՚ի միտ առնու աստուած
 յակորայ :

Ի մացարհօք անդգամք ժողովորդոց , և ան-
 միտք մինչև յերբ ոչ առնուք ՚ի միտ :

Արպէս զի թէ որ անկեաց զունկն՝ ինքն ոչ
 լուիցէ , կամ որ ստեղծ զակն՝ ինքն ոչ
 տեսանիցէ :

Ար խրատէ զազինս՝ որպէս թէ ոչ յանդի-
 մանեացէ . որ ուսուցանէ մարդոյ զգիտու-
 թիւն . տէր ճանաչէ զխորհուրդս մարդ-
 կան զի են ընդունայնք :

Կրանի մարդոյ՝ զոր խրատես դու տէր ,
 և յօրինաց քոց ուսուցանես դու նմա :
 Հաճուցանես դու նմա զաւուրս չարու-
 թեան , մինչև փորեցի խորխորատ մե-
 զաւորի :

Ոչ մերժէ տէր զժողովուրդ իւր , և զժա-
 ռանգութիւն իւր ոչ առնէ անտես :

†

Սինչև դարձցին իրաւունք յարդարու-
 թիւն . ընկալցին զնա ամենեքեան ջք

ուղիղ են սրտիք:

Ո՛վ յարիցէ ընդ իս 'ի վերայ չարաց , կամ
 ո՛վ հաւասարեսցի ինձ 'ի վերայ այնոցիկ՝
 ոչք դորժեն զանօրէնութիւն:

Եթէ ոչ տեսան օգնեալ էր ինձ , փոքր
 մի ևս բնակեալ էր անձն իմ 'ի դժոխս:
 Ի՞նչ ասէի՝ թէ ահա սասանեցան ոտք իմ ,
 ողորմութիւն քո տէր օգնէր ինձ:

Ըստ բազում ցաւոց սրտի իմոյ , մխիթա-
 րութիւն քո ուրախ առնէր զանձն իմ:

Ս'ի հաւասարեսցի քեզ ա՛մբու անօրէնու-
 թեան , ո՛ սպառնաէ զվաստակս ընդ
 դէմ հրամանի:

Արսացին զանձն արդարոյ , և զարիւն ան-
 բիծ պարտաւոր առնէին:

Եղև տէր ապաւէն իմ , աստուած օգնա
 նական յուսոյ իմոյ:

Վատուցէ նոցա տէր ըստ անօրէնութեան
 նոցա , և ըստ չարութեան նոցա կործա-
 նեսցէ զնոսա տէր աստուած մեր:

Տունք . ին:

Օրհնութիւն գովութեան դաւթի:

Լկայք ցնծացուք ՚ի տէր , աղաղակեցուցուք առ աստուած փրկիչ մեր:

Կանխեսցուք առաջի նորա խոստովանութեամբ , և սաղմոսիք աղաղակեսցուք առ նա:

Ղօտուած մեծ է , տէր թագաւոր մեծ ՚ի վերայ ամենայն երկրի:

Ի ձեռս նորա են ամենայն տիեզերք երկրի , և բարձրութիւնք լերանց նորա են: Նորա է ծով և նա արար զնա , և զցամաք ձեռք նորա ստեղծին:

Լկայք երկիրպագցուք նմա , անկցուք և լացցուք առաջի տեառն արարչին մերոյ: Նա ինքն է տէր աստուած մեր . մեք ժողովորդք ձեռին նորա , և խաչն արօտի նորա:

Ղյօօր եթէ ձայնի նորա լսիցէք , մի խըստացուցանէք զսիրտս ձեր որպէս ՚ի դաւնութեան:

Յաւուրն փորձութեան յանապատին՝ ուր փորձեցին զիս հարքն ձեր , քննեցին զիս

և անսին զգործս իմ զքառասուն ամ:

Սանացի ընդ ազգին ընդ այնմիկ և ասացի՝ միշտ մոլորեալ են սրտիւք . և նոքա ոչ ծանեան զճանապարհս իմ:

Արդէս երգուայ ՚ի բարկութեան խնամ ,
Թէ մտցեն ՚ի հանգիստ իմ:

Տունք . Ժա : Գորգայս . ԼԵ :

ՍԱՂՄՈՍ . Դ :

Սաղմոս Գաւթի . ՚ի ժամանակի զի տանարն շինեցաւ :

() Երհնեցէք զտէր յօրհնութիւն նոր ,
օրհնեցէք զտէր ամենայն երկիր :

() Երհնեցէք զտէր և օրհնեցէք զանուն նորա ,
աւետարանեցէք օր ըստ օրէ զփրկութիւն նորա :

Պատմեցէք ՚ի հեթանոսս զփառս նորա ,
յամենայն ժողովուրդք զսքանչելիս նորա :

Սեծ է տէր և օրհնեալ է յոյժ ,
ահարկու է նա ՚ի վերայ ամենայն կողմ :

Մենայն կուռք հեթանոսաց զեք են ,
այլ տէր զերկինս արար :

Իստատուլանու թիւն և վայելչու թիւն է առաջի նորա , սրբութիւն և մեծ վայելչութիւն ՚ի սրբութեան նորա :

Սատուցէք տեառն տոհմք ազանց , մատուցէք տեառն զփառս և զպատիւ , մատուցէք տեառն զփառս անուան նորա :

Մեկք պատարագս և մեկք ՚ի սրահս նորա , երկիրպագէք տեառն ՚ի դաւիթս սրբութեան նորա . և խառնեցի յերեսաց նորա ամենայն երկիր :

Մտացէք ՚ի հեթանոսս թէ տէր թագաւորեաց , հաստատեաց զաշխարհ զի մի սասանեցի , և դատէ զժողովուրդս իւր ուղղութեամբ :

Սերսիս եղիցին երկինք՝ և ցնծացէ երկիր . զուարճացի ծով լրիւ իւրով . ցրնծացեն դաշտք և ամենայն որ է ՚ի նոսա :
 Հայնժամ ցրնծացեն ամենայն ծառք անտառի յերեսաց տեառն՝ զի դայ , և դայ նա ՚ի դատել զերկիր :

Ղատէ զտիկեղերս իրաւամբք , և զժողովուրդս ամենայն ճշմարտութեամբ իւրով :

ՍԱՂԽՈՍ . ԴԶ

Սաղմոս դաւեթի . ՚ի ժամանակի զի երկիրն հաստատե-
տեցաւ :

Տէր Թագաւորեաց՝ ցնծասցէ՛ երկիր, ու-
րախ եղիցին կողիք բազումք :

Ըմպ և մեզ շուրջ են զնովաւ, յիրաւունս
և յարդարութիւն ուղղեալ է աթոռ նորա :
Շուք առաջի նորա զնասցէ, և այրեսցէ
շուրջ զթշնամիս նորա :

Երեւցան փայլատակունք նորա տիեզե-
րաց, ետես և սասանեցաւ երկիր :

Երկինք որպէս մոմ հալեսցին յերեսաց
տեսան, յերեսաց տեսան ամենայն եր-
կիր :

Պատմեսցեն երկինք զարդարութիւն նո-
րա . և տեսցեն ամենայն ժողովուրդք ըզ-
փառս նորա :

Ընաչեսցեն ամենեքեան ոյք երկիրպագա-
նեն կոտց, և ոյք պարծին ՚ի դրօշեալս
իւրեանց :

Երկիրպագցեն նմա ամենայն հրեշտակք
նորա, զի լուաւ և ուրախ եղև սիօն, և
ցնծասցեն դստերք յուղայ վասն իրաւանց
քոց տէր :

Ս ի դու բարձրեալ ես ՚ի վերայ ամենայն երկրի , յոյժ բարձրացար ՚ի վերայ ամենայն կռոց :

Այք սիրէք զտէր՝ ասեցէ՛ք զչարութիւն . պահէ տէր զանձինս սրբոց իւրոց , ՚ի ձեռաց մեղաւորի փրկեացէ զնոսա :

Եղև ծագեաց արդարոց , ուղղոց սրտից եղև ուրախութիւն :

Աւրանի եղերուք արդարք ՚ի տէր , և խոտովան եղերուք յիշատակի սրբութեան նորա :

Տունք . ԺԴ :

ՍԱՂՄՈՍ . ԴԵ

Սաղմոս դաւթի օրհնութեան :

() Ըհնեցէ՛ք զտէր յօրհնութիւն նոր , զի սքանչելիս արար :

Փրկեաց զնա աջ իւր , և բազուկ սուրբ իւր :

Լ : ցոց տէր զփրկութիւն իւր , առաջի ազգաց յայտնեաց զարդարութիւն իւր :

Յիշեաց ողորմութեամբ իւրով զյակոբ , ճշմարտութեամբ իւրով զառնն իսրայէլի :

և տեսին ամենայն ծագք երկրի զփրկու-
թիւն աստուծոյ մերոյ:

Սղաղակեցէք առ տէր ամենայն երկիր ,
օրհնեցէք ցնծացէք և սաղմոս ասացէք:
Սաղմոս ասացէք աստուծոյ մերոյ օրհնու-
թեամբ , օրհնութեամբ և ՚ի ձայն սաղ-
մոսաց:

Ի ձայն օրհնութեան կաածոյ փողոյ . օրհ-
նութեամբ ցնծութեամբ և ՚ի ձայն եղջեր
փողոյ . աղաղակեցէք առաջի թագաւո-
րին տեառն:

Խառնեցի ծով լրիւ իւրով , տիեզերք և
ամենայն բնակիչք նորա . և դետք ծափս
հարցեն ՚ի միասին ձեռամբ:

Երբնք ցնծասցեն առաջի տեառն , զի
դայ զի հասեալ է տէր ՚ի դաաել զերկիր:
Դատէ զաշխարհս արդարութեամբ , և
զժողովուրդս իւր ուղղութեամբ

Տունք . Ժ . Գորդայս . 17:

Տէր Թաղաւորեաց բարկացան ժողովուրդք . որ նստիս 'ի բրովբէս , սասանեցաւ երկիր:

Տէր 'ի սիօն մեծ է , և բարձր է 'ի վերայ ամենայն ժողովրդոց:

Խոստովան եղիցուք անուան քում մեծի , զի ահաւոր և սուրբ է , և պատիւ Թաղաւորի զիրաւունս սիրէ:

† Դու պատրաստեցեր զուղղութիւն , զիրաւունս և զարդարութիւն յակօբաց դուարարեր:

Նորձր արարէք զաւեր աստուած մեր . երկիրպագէք պատուանդանի ոտից նորա զի սուրբ է:

Սոխէս և ահարօն երիցունք նորա . սամուէլ ընդ այնտիկ՝ ոչք կարդան զանուն նորա:

Կարդային առ տէր և նա լսէր նոցա , և 'ի սիւն ամպոյ խօսէր ընդ նոսա:

Պահէին զվկայութիւնս նորա , և զհրամանս զոր Եւս նոցա:

Տէր աստուած մեր դու լսէիր նոցա ,
 աստուած դու քաւիչ լինէիր նոցա , և
 վրէժխնդիր 'ի վերայ ամենայն գործոց նոցա :
 Քանք արարէք զտէր աստուած մեր ,
 երկիրսդագէք 'ի լեառն սուրբ նորա՝ զի
 սուրբ է տէր աստուած մեր :

Տունք . Ժ :

ՍԱՂՄՈՍ . ԴԹ .

Սաղմոս խոստովանութեան դաւթի :

Ղաղակեցէք առ տէր ամենայն երկիր ,
 ծառայեցէք տեառն ուրախութեամբ :

Ստէք առաջի նորա ցնծութեամբ , ծա-
 ներուք զի նա է տէր աստուած մեր :

Նա արար զմեզ և ոչ մեք էաք , մեք ծո-
 զովուրդք և խաչն արօտի նորա :

Ստէք ընդ գրունս նորա խոստովանու-
 թեամբ . և օրհնութեամբ 'ի յարկս նորա :
 Խոստովանեղերուք տեառն , և օրհնեցէք
 զանուն նորա :

Քաղցր է տէր , յաւիտեան է ողորմու-
 թիւն նորա . ազգէ մինչև յազգ է ճշշ-
 մարտութիւն նորա :

Տունք . Է :

Հողորմութիւն և յիրաւունս օրհնեցից
 դքեղ տէր . սաղմոս ասացից և ՚ի միտ
 ասից :

Ճանապարհ ամբիծ մինչև եկեացէ առ իս .
 զի գնայի ես յամբժութեան սրտի իմոյ ՚ի
 մէջ տան իմոյ :

Ոչ եղի առաջի աչաց իմոց զիրս անիրա-
 ւութեան . ոչք առնէին զանօրէնութիւն ,
 ատեցի :

Ոչ մերձեցաւ առ իս որ թիւրն էր սրբ-
 տիւ . խոտորեալ յինէն անզգամին , և
 ես ինչ ոչ փոյթ առնէի :

Ար խօսէր գաղտ զընկերէ իւրմէ , զնա
 բացէ ՚ի բաց հարածէի :

Ար ամբարտաւան էր աչօք՝ և ազան սրբ-
 տիւ , ընդ նմա և հաց ոչ ուտէի :

Մէք իմ ՚ի հաւատացեալս երկրի , զի
 նստցին նոքա ընդ իս :

Ար գնայր ՚ի ճանապարհ ամբիծ , նա սաշ-
 տէր զիս :

Ոչ բնակէր ՚ի մէջ տան իմոյ՝ որ առնէք

զամբարտաւանութիւն . որ խօսէր զա-
նիրաւութիւն , չէր յաջողեալ նմա ա-
ռաջի աչաց խնոց :

Ինչ առաւօտս սպանանէի զամենայն մե-
ղաւորս երկրի . զի սասակեցից ՚ի քաղա-
քի տեառն զամենեւեան ոյք գործեն զա-
նորէնութիւն :

Տունք . Գ : Գորդացս . Ի՛նչ :

ՍԱԼՄՈՍ . ԺԱ

Ազօթք ուրիւ . իբրև ճանձրացի՝ առաջի տեառն
սփռեցէ գինորուածս իւր :

Տէր լուր ազօթից խնոց՝ աղաղակ իմ
առքեզ եկեացէ , և մի դարձուցաներ զե-
րեսս քո յինէն :

Յաւուր նեղութեան խնոյ խոնարհեցն՝ առ
իս զունկն քո . յորում աւուր կարդամ առ
քեզ՝ վաղվաղակի լուր ինձ :

Ապառեցան որպէս ծուխ աւուրք իմ , և
ոսկերք իմ որպէս խաիւ չորացան :

Հարայ ես որպէս խոտ և ցամաքեցաւ
սիրտ իմ , մոռացայ ուտել զհաց իմ ՚ի

Ճայնէ հեծութեան խնայ:

Կցեցաւ ոսկր իմ 'ի մարմին իմ . նմանեցայ ես հաւարասան անապատի:

Լիզէ ես որպէս բու յաւերակի , տքնեցայ և եղէ ես որպէս ճնճղուկ միայն 'ի տանիս:

'Նախատեցին զիս թշնամիք իմ զօրհանապազ , և գովիչք իմ ինե երդնուին:

Օ մոխիր որպէս զհաց կերի , և զըմպելին իմ արտասուօք խառնեցի:

Յերեսաց բարկութեան սրամտութեանքո , զի դու բարձրացուցեր և խոնարհեցուցեր զիս:

Մուրք իմ որպէս հովանի անցին , և ես որպէս խոտ ցամաքեցայ:

'Դու տէր յաւիտեան կաս , և յիշատակքոյ ազգէ մինչև յազգ:

'Դու յարուցեալ գթասցիս 'ի վերայ սիօնի , ժամանակ գթարոյ նորա հասեալ է ժամ:

Հաճեցան ծառայքքո ընդ-բարինս նորա , և 'ի հոգս նորա գթասցին:

Կրկիցեն հեթանոսք յանուանէ բուժմէ , և ամենայն թաղաւորք երկրի 'ի փառաց

քոց:

Շինե տէր զսիօն , և երևեացի փառօք
իւրովք ՚ի նմա:

Հայեցաւ նա յաղօթս խոնարհաց , և ոչ
արհամարհեաց զխնդրուածս նոցա:

Ղրեացի այս յազգ յայլ , ժողովուրդ զոր
ստացեալ է օրհներցէ զտէր:

Հայեցաւ նա ՚ի բարձանց ՚ի սրբութենէ
իւրմէ . տէր յերկնից յերկիր հայեցաւ:

Եւսել զհեծութիւն կապելոց , և արձա-
կել զօրդիս մահապարտաց:

Պատմել ՚ի սիօն զանուն տեառն , և
գորհնութիւնս նորա յերուսաղէմ:

Ժողովիլ ժողովրդոց ՚ի միասին , և թագա-
ւորաց ծառայել տեառն:

Պատասխանի ետ նմա ՚ի ճանապարհի զօ-
րութեան իւրոց . զնուազութիւն աւուրց

իմոց ասա՛ ինձ , և մի հաներ զիս ՚ի կէս
աւուրց իմոց . զի ազգէ յազգ են ամքքոս

ի սկզբանէ տէր զհիմունս երկրի հաստա-
տեցեր , և գործք ձեռաց քոց երկինք են:

Ղորա անցանեն , և դու կաս և մնաս յա-
ւիտեան:

Ղննեքեան որպէս զձորձս մաշեացին . և

որպէս զվերարկուս փոխեցես զնոսա և
փոխեցին:

Եւ այց դու նոյն ինքն ես և ամբ քո ոչ ան-
ցանեն . որդիք ծառայից քոց բնակեցին
ի նմա , և զաւակի նոցա յաւիտեան
յաջողեցին:

~~Եւ այց դու նոյն ինքն ես և ամբ քո ոչ անցանեն . որդիք ծառայից քոց բնակեցին ի նմա , և զաւակի նոցա յաւիտեան յաջողեցին:~~
Տունք . ինչ և այլն:

ՍԱՂՄՈՍ . ՃԲ

Սաղմոս դաւթի:

() Բհնեա՛ անձն իմ զտէր , և ամենայն ու-
կերբ իմ զանուէն սուրբ նորա:

() Բհնեա՛ անձն իմ զտէր , և մի մոռա-
նար զամենայն սուրս նորա:

|| քաւէ զմեղս քո , բժշկէ զամենայն հի-
ւանդութիւնս քո:

|| փրկէ յապականութենէ զկեանս քո ,
պսակէ զքեզ ողորմութեամբ և զթութիւնք:

|| լնու ՚ի բարութենէ զցանկութիւն քո ,
նորոգեցի որպէս արժւոյ մանկութիւն քո:

Եւ անէ ողորմութիւնս տէր , և իրաւունս
ամենայն զրկելոց:

Եւ այց տէր զճանապարհս իւր մոխտօք ,
և որդւոցն իսրայէլի զկամս իւր:

Գլխած ողորմած է տէր , երկայնամիտ և
բազումողորմի :

Մէ խապա բարկանայ մեզ տէր , և ոչ
յաւխտեան պահէ ռխա :

Մէ ըստ մեղաց մերոց արար մեզ տէր , և
ոչ ըստ անօրէնութեան մերում հատոյց
մեզ :

Մ. յ. որպէս բարձր են երկինք յերկրէ ,
այնպէս զօրացոյց տէր զողորմութիւն իւր
ի վերայ երկիւղածաց իւրոց :

Որչափ հեռի են արեւելք յարեւմտից ,
այնչափ հեռի արար ի մենջ զանօրէնու-
թիւնս մեր :

Որպէս գլխայ հայր ի վերայ որդւոց իւ-
րոց , այնպէս գլխացի տէր յերկիւղածս
իւր :

Օ ի նա գիտաց զստեղծուածս մեր , և
յիշեաց թէ հող եմք :

Մարդոց որպէս խոտոյ են աւուրք իւր ,
որպէս ծաղիկ վայրի այնպէս ծաղիկ :

Շնչէ ի նմա հողմ և ոչ է , և ոչ ևս երեխ
տեղի նորա :

Բաց ողորմութիւն տեառն մնայ յաւի-
տեանս յաւիտենից ի վերայ երկիւղածաց

իւրոց , և արդարութիւն նորա յորդւոց
մինչև յորդիս :

Այք պահեն զուխտս նորա , յիշեն ըզ
պատուիրանս նորա և առնեն զնա :

Տէր յերկինս պատրաստեաց զաթոռ իւր ,
արքայութիւն նորա ամենեցուն տիրէ :

Օրհնեցէք զտէր ամենայն հրեշտակք նո
րա , հզօրք զօրութեամբ ոյք առնէք ըզ
բան նորա , 'ի լսել ձայնի պատգամաց
նորա :

Օրհնեցէք զտէր ամենայն զօրութիւնք
նորա , պաշտօնեայք և արարողք կամաց
նորա :

Օրհնեցէք զտէր ամենայն գործք նորա ,
զի ընդ ամենայն տեղիս է տէրութիւն նո
րա . օրհնեա՛ անձն իմ զտէր :

Տունք . էր : Գորդայս . ԽԸ :

ՍԱՂՄՈՍ . ԺԴ

Սաղմոս Գաւթի . 'ի վերայ աշխարհագործ արարածոց :

Օրհնեա՛ անձն իմ զտէր , տէր աստուած
իմ մեծ եղեր յոյժ :

Իստատուլանութիւնն և մեծ վայելչութիւնն
զգեցար , արկեալ զլոյս որպէս զօթոց ,
ձգեցեր զերկինս որպէս զխորանն , և ար-
կեր 'ի վերայ ջուրց զվերնայարկս նորա :

Ո գնէ՛ յամպս զգնացս իւր , և շքի նա
'ի վերայ Թեոց հողմոց :

Ո արար զհրեշտակս իւր հոգիս , և զպաշ-
տօնեսոյս իւր 'ի հուր կիզելոյ :

Հաստատեաց զերկիր 'ի վերայ հաստա-
տութեան իւրոյ , զի մի սասանեսցի յա-
ւիտեանն :

Իտրք որպէս զգեստ վերարկու է նորա ,
'ի վերայ լերանց կացցեն ջուրք :

Ի սասառէ քումմէ փախիցենն , և 'ի ձայնէ
որոտալոյ քումմէ սարսիցենն :

Ելանենն լեռնանան և իջանենն դաշտանանն ,
'ի տեղի յոր հաստատեցեր զնոսա :

Սահման եղեր և ոչ անցանենն , և ոչ ևս
դառնան 'ի ծածկել զերկիր :

Եաքեցեր զաղբիւրս ընդ ծործորս , 'ի
միջոյ լերանց գնացցեն ջուրք :

Եբբուցանել զամենայն գազանս վայրի ,
յազեցինն ցիւք 'ի ծարաւս իւրեանց :

Ենդ Թաշուրք երկնից բոյնս դիցենն , և

Ի միջոյ փիմաց տացեն զձայնս իւրեանց :
 Արբուցանէ զլերինս Ի շտեմարանաց իւ-
 րոց , Ի պաղոյ գործոյ իւրոց լցցի երկիր
 Ռուսուցեր զխոտ Ի լերինս , զգալարի Ի
 ծառայութիւն մարդկան :

Հանէր զհաց յերկրէ , գինի ուրախ առ-
 նէ իւզ զուարթ , և հաց հաստատէ ըզ-
 սիրտ մարդոյ :

Յագեցցին ծառքն անտառի , և մայրքն
 իբանանու զորս դու անկեցեր :

Անդ թաշունք երկնից ձաղս հանցեն , և
 բոյն արագի ապաւէն է նոցա :

Երկնք բարձունք են եղջերուաց , և վէճք
 ապաւէնք նապաստակաց :

Արարեր զուսին վասն ժամանակի , արե-
 գակն ծանեաւ զժամ մտանելոյ իւրոյ :

Արարեր զխաւար և եղև գիշեր . Ի նմա
 գնան ամենայն զաղանք անտառի :

Կորիւնք առիւծուց մանչեն և յափշտա-
 կեն , և խնդրեն յաստուծոյ զկերակուրս
 իւրեանց :

Ի ծագել արևու ժողովին , և Ի մօրիս
 իւրեանց դադարին :

Ալանէ մարդ Ի գործս իւր , և Ի վասն

տակս ձեռաց իւրոց մինչև յերեկոյ :

Որպէս զի մեծ են գործք քո տէր , զամենայն ինչ իմաստութեամբ արարեր , և լցաւ երկիր ստեղծուածովք քովք :

Եւ յս ծով մեծ և անդորր . ՚ի սմա են սողունք՝ որոց ոչ գոյ թիւ , գազանք մեծամեծք և մանունք . ՚ի սմա և նաւք գրնան . վիշապն զոր ստեղծեր խաղալ նովա :

Եւ մենեքեան քեզ սպասեն , և դու տաս զկերակուր նոցա ՚ի ժամու :

Տաս դու նոցա և կերակրին , բանաս բզձեան քո և կերակրես զամենեւեան կամօք քովք :

Իարձուցանես զերեսս քո ՚ի նոցանէ և խառնին , հանես զողի ՚ի նոցանէ , պակասին և ՚ի հող դառնան :

Եւ աքես զողի քո և ստանաս զնոսս , և նորոգես զերեսս երկրի :

Եւ դիցին փառք տեան յաւիտեան , և տէր ուրախ եղիցի յարարածս իւր :

Ո հայի յերկիր և տայ դողալ սմա , մերձեացի ՚ի լերինս և ծխեացին :

(Ը) Բհնեցից զտէր ՚ի կեանս իմ , սաղմոս ա :

սացից տատուծոյ խմոյ մինչև եմ ես
 Քաղցր եղեցի նմա օրհնութիւն իմ , և
 ես ուրախ եղեց ՚ի տէր :

Պակասեցին մեղաւորք յերկրէ , և սմ-
 բարիչաք մի ևս գտցին ՚ի նմա . օրհնեալ
 անձն իմ զտէր :

Տունք . ԼԴ :

ՍՅՂՄՈՍ . ԶԴ

Անլուխա :

Խոստովանն եղերուք տեառն՝ և կարգա-
 ցէք զանուն նորա . և պատմեցէք ՚ի հե-
 թանոսս զգործս նորա :

() օրհնեցէք և սաղմոս ասացէք նմա . պատ-
 մեցէք զամենայն սքանչելիս նորա . և գո-
 վեցարուք յանուն սուրբ նորա :

Ուրախ եղիցին սիրաք այնոցիկ ոյք խընդ-
 րեն զտէր , խնդրեցէք զտէր և հզօրք ե-
 Ղերուք , և խնդրեցէք զերեսս նորա յա-
 մենայն ժամ :

() Ելեցէք զսքանչելիս նորա զորս արար ,
 զարուեստս և զիրաւունս բերանոյ նորա :

() աւակք արբահամեան ծառայք նորա ,
 որդիք յակորայ ընտրեալք նորա :

Մա ինքն է տէր աստուած մեր , յամե-
 նայն երկրի են իրաւունք նորա :
 Յիշեաց յաւիտենից զուխա իւր , և ըզ-
 բանն զոր պատուիրեաց մինչ ՚ի հազար ամ :
 Օ ուխտն զոր եղ ընդ արբահամու , և
 զերդումն իւր ընդ սահակայ :
 Հաստատեաց առ յակոբ զհրաման իւր ,
 և առ իտրայէլ զուխա իւր յաւիտենից :
 Մտէ՛ ձեզ տաց զերկիրն քանանու , զիւ-
 ճակ ժառանգութեան ձերոյ :
 Օ ի էին նոքա թուով սակաւք , նուազք
 և պանդուխտք ՚ի նմա :
 Մնցին նոքա ազդէ յազգ , ՚ի թագաւո-
 րութենէ ՚ի ժողովուրդ յայլ :
 Սէ եթող մարդկան մեղանչել նոցա , և
 կշտամբեաց զթագաւորս վասն նոցա :
 Ս ՚ի մերձենայք ասէ յօծեալս իմ , և
 ՚ի մարգարէս իմ մի մեղանչէք :
 Կոչեաց սով յերկիր նոցա , և զամենայն
 զօրութիւն հացի երեկ :
 Մաքեաց առաջի նոցա այր , ՚ի ծառայ-
 ութիւն վաճառեցաւ յովսէփ :
 Խոնարհ արարին ՚ի կապանս զոտս նորա ,
 և էանց ընդ երկաթ անձն նորա :

Մինչև եկեացէ բան նորա , և բան տեառն
փորձեաց զնա :

Առաքեաց թագաւորն և ելոյժ զնա , իշխան
խան ժողովրդեան եթող զնա :

Կացոյց զնա տէր տան իւրոյ , իշխանն ՚ի
վերայ ամենայն ստացուածոց իւրոց :

Խրատել զիշխանս նոցա որպէս զինքն , և
զձերս նոցա իմաստունս արասցէ :

Եմուտ խրայել յեղիպտոս , և յակոբ
պանդխտեցաւ յերկիր քամայ :

Նճեցոյց զժողովուրդ իւր յոյժ , և զօրա-
ցոյց զնոսա քան զթշնամիս իւր :

Վարձոյց զսիրտս նոցա ատել զժողովուրդ
իւր , և ՚ի նենդել զճառայս իւր :

Առաքեաց զմովսէս ծառայ իւր , և զա-
հարօն ընտրեալ իւր :

Ես նոցա զբան նշանաց իւրոց , և զար-
ուեատս իւր յերկիր քամայ :

Առաքեաց զխաւար և խաւարեցոյց զնա-
սա , զի դառնացուցին զբան նորա :

Վարձոյց յարիւն զգետս նոցա , և սպան
զամենայն ձկունս նոցա :

Եսաց յերկիր նոցա գորտ , և ՚ի շտեմա-
բանս թագաւորաց նոցա :

Մտաց և եկն շանաճանճ՝ , և մժեխ ընդ ա-
մենայն սահմանս նոցա :

Մարձոյց զանձրեւս նոցա ՚ի կարկուտ , և
հուր յերկիր նոցա բորբոքեցաւ :

Լահար զայդիս և զթղենիս նոցա , և փրչ-
րեաց զամենայն ծառս սահմանաց նոցա :

Մտաց և եկն մարախ , և խառնիճ՝ զի ոչ
գոյր նոցա թիւ :

Եկեր զամենայն խոտ երկրի նոցա , և
սպառեաց զամենայն պտուղ անդոյ նոցա :

Լահար զամենայն անդրանիկս եղիպտաց-
ւոց , զսկիզբն ամենայն վաստակոց նոցա :

Լահան զնոսա ոսկւով և արծաթով , և ոչ
գոյր յազգի նոցա հիւանդ :

Աւրախ եղև եղիպտոս ընդ երանել նոցա ,
զի անկաւ աս տեառն ՚ի վերայ նոցա :

Սիռեաց ամոյ հովանի առնել նոցա ՚ի
տուէ , և հրով լոյս տայր նոցա ՚ի գիշերի :

Ինդրեցին և եկն լորամարդի , և հացիւ
երկնից լցոյց զնոսա :

Լահար զվէմն և բղխեցին ջուրք , և գնա-
ցին գետք ընդ անջրդիս :

Յիշեաց զբան իւր սուրբ , որ ընդ արբա-
համու ծառայի իւրոյ :

Եւհան զժողովուրդ իւր ցնծութեամբ , և
զընտրեալս իւր ուրախութեամբ :

Եւս նոցա զգաւառս հեթանոսաց , ՚ի
վաստակս ժողովրդոց ժառանգեցոյց զնոսա :
Օ ի պահեսցեն զվկայութիւնս նորա , և
զօրէնս նորա խնդրեսցեն :

Տունք . խնդ . Գորզայս . հը :

ՍԱՂՄՈՍ . 36

Աւելու խա :

Խոստովան եղերո՞ւք տեառն զի քաղցր է ,
զի յաւխտեան է ողորմութիւն նորա :

Ո՛ր խօսեսցի զզօրութիւնս տեառն , լսե-
լի արասցէ զամենայն օրհնութիւնս նորա :
Երանի ոչք պահեն զիրաւունս , և առնեն
զարդարութիւն յամենայն ժամ :

Յիշեա՛ զմեզ տէր ընդ հաճոյս ժողովրդեան
քոյ , և այց արա մեզ ՚ի փրկութեան քում :
Տեսցո՞ւք մեք զքաղցրութիւն ընտրելոց
քոց . ուրախ եղիցուք մեք յուրախու-
թիւն ազգի քոյ , և գովիցուք մեք ՚ի ժա-
ռանգութեան քում :

Սեղաք մեք ընդ հարսն մեր, անօրինեցաք
և յանցեաք:

Հարքն մեր յեգիպտոս ոչ իմացան զսքան-
չելիս քո, և ոչ յիշեցին զբազում ողոր-
մութիւնս քո:

Նարկացուցին զքեզ յանցանելն իւրեանց
ընդ ծով կարմիր. փրկեաց զնոսա վասն ան-
ուան իւրոյ՝ զի ծանիցեն զզօրութիւնս
նորա:

Սաստեաց ՚ի ծով կարմիր և ցամաքեցաւ,
առաջնորդեաց նոցա ընդ անդունդս որ-
պէս ընդ անապատս:

Կեցոյց զնոսա ՚ի ձեռաց ատելեաց նոցա,
և փրկեաց զնոսա ՚ի ձեռաց թշնամեաց
նոցա:

Չաճկեաց ծով զնեղիչս նոցա, և մի ՚ի
նոցանէ ոչ ապրեցաւ:

Հաւատացին բանի նորա, և օրհնեցին
զօրհնութիւնս նորա:

Սաղվաղեցին և մոռացան զզօրծս նորա,
և ոչ անսացին խորհրդոց նորա:

Յանկացան զցանկութիւն յանապատի,
և փորձեցին զաստուած յանջրդի:

Եւ նոցա զխնդրուածս նոցա, առաքեաց

- զլիութիւն յանձինս նոցա :
 Բարկացուցին զմովսէս ՚ի բանակի , և զա
 հարօն սուրբ տեառն :
 Բացաւ երկիր և եկուլ զգադան , և ծած
 կեաց զբանական զարիրօնի :
 Հուր վառեցաւ ՚ի ժողովս նոցա , և բոց
 մաշեաց զմեղաւորս :
 Արարին զորթն ՚ի քորեք և երկիրպաղին
 պատկերի , և փոխեցին զփառս իւրեանց
 ՚ի նմանութիւն որթուցիտտակերի :
 Առաջան զաստուած կենարարն իւր
 եանց , որ արար զմեծամեծս յեգիպտոս ,
 և զսբանչելիս իւր յերկիր քամայ , և զահ
 իւր ՚ի վերայ կարմիր ծովուն :
 Ասաց սատակել զնոսա , եթէ ոչ մովսէս
 ընտրեալն կայր առաջի նոցա :
 Գարձաւ առ տէր և անցոյց զբարկութիւն
 նորա , զի մի սատակեացին նոքա :
 Անարգեցին զերկիրն ցանկալի , և ոչ հա
 ւատացին բանի նորա :
 Տրանջեցին ՚ի բանակս իւրեանց , և ոչ
 լուան ձայնի տեառն :
 Համբարձ զձեռն իւր ՚ի վերայ նոցա ,
 հարկանել զնոսա յանապատի :

Յրուեսցի զաւակ նոցա ընդ հեթանոսս .

ցրուեսցի զաւակ նոցա ընդ դաւաաս :

Պղծեցան նոքա ՚ի բէլլիեգոլլը , զի կերին
զզոհեալ և զմեռելոսի :

Բարկացուցին զնա ՚ի գործս իւրեանց , և
յաճախեաց ՚ի վերայ նոցա բեկումն :

Մտա եկաց ՚ի մէջ փենեհէս , քաւեաց և
արգելաւ մահ . համարեցաւ նմա յար-
դարութիւն ազգէ յազգ մինչև յաւի-
տեան :

Բարկացուցին զնա ՚ի վերայ Զուրցն հակա-
ռակութեան . շարչարեցաւ մոխէս վասն
նոցա , զի դառնացուցին զհոգի նորա :

Հրամայեաց շրթամբք իւրովք , և ոչ սա-
տակեցին զազգն զոր ասաց նոցա տէր :

Խառնակեցան ընդ հեթանոսս և ուսան
զգործս նոցա . ծառայեցին կողմ նոցա ,
և եղև նոցա ՚ի դայթակողութիւն :

Սոհեցին զուստերս և զդաստերս իւրեանց
դիւաց , և հեղին զարիւն ամբիծ :

Մբիւն ուստերաց և դաստերաց իւրեանց ,
զոր զոհեցին կողմն քանանու :

Հազախեցաւ երկիր յարենէ նոցա և պրզ-
ծեցաւ ՚ի գործոց նոցա , զի պոռնկեցան

Ի դնացս իւրեանց:

Քարկացաւ սրտմտութեամբ տէր Ի վերայ
ժողովրդեան իւրոյ, և գարշեցոյց զժա-
ռանդութիւն իւր յոյժ:

Ստանեաց զնոսա Ի ձեռս հեթանոսաց,
տիրեցին նոցա ատելիք իւրեանց, և թըշ-
նամիք իւրեանց ներդեցին զնոսա, և խո-
նարհ եղեն Ի ներքոյ ձեռաց նոցա:

Քաղում անգամ փրկեաց զնոսա, և նոքա
դառնացուցին զնա Ի խորհուրդս իւր-
եանց, և կորացան յանօրէնութեան իւր-
եանց:

Հայեցաւ տէր Ի նեղութիւնս նոցա, Ի
լսել ձայնի աղօթից նոցա:

Յիշեաց զուխտ իւր և զղջացաւ ըստ բա-
ղում ողորմութեան իւրում. և ետ զնոսա
Ի դթութիւնս առաջի ամենայն գերջաց
նոցա:

Փրկեա՛ զմեզ տէր աստուած մեր, և ժո-
ղովեա՛ զմեզ Ի հեթանոսաց:

Խոստովան եղիցուք անուան քում սրբոյ,
և պարծեցուք յօրհնութիւնս քո:


Օրհնեալ տէր աստուած իօրայէլի, յա-
ւիտեանս յաւիտենից:

Եւ ասացի ամենայն ժողովուրդն , եղիցի եղիցի :

Տունք . խիք :

Կանոնս Գորգայս . է : Սաղմոս . ԺԷ :

Տունս . յժիք :



ԱԳՈԹ-Բ ԵԶԷԿԻԱՅԻ ԱՐ-ԲԱՅԻ ԼՐԷԱՍՏԱՆԻ .
Ի ԺԱՄԱՆԱԿԻ ՅՈՐՈՒՄ ԷԻՒԱՆԴԱՅՅԱԻ . ԵՒ
ՅԱՐԵԱՒ Ի ԷԻՒԱՆԴՈՒԹԵՆԷ ԻԻՐՄԷ :

Եացեայ . ԼԷ :

Ես ասացի ՚ի վերանալ յինե՛ն աւուրց իմոց , թէ գնացի ես ՚ի դրունս դժոխոց : Թողի զամենայն յետին իմ , և ասացի թէ այլ ո՛չ ես տեսից զփրկութիւն տեսաւրն յերկրին կենդանեաց , և ո՛չ ես տեսից զմարդ բնակչօք իւրովք հանդերձ :

Պակասեցայ ես յազգատոհմէ իմմէ , այսուհետեւ թողի լքի զամենայն զկեանս իմ :

Եւ գնաց մեկնեցաւ յինե՛ն հողի իմ , որպէս զայն որ քակէ զտաղաւար , և եղէ ես որպէս զոստայն սատարաց մերձ ՚ի հա-

տանիլ :

{աւուր յայնմիկ մատնեցայ ես յառաւօ-

տէ որպէս ՚ի ձեռս առիւծու , այնպէս
խորտակեաց մանրեաց զոսկերս իմ՝ զի յա
ռաւօտէ մինչ ՚ի գիշեր մատնեցայ :

Որպէս ծիծառն այնպէս ճչեցի , որպէս
զազաւնի այնպէս մնչեցի , զի նուազե-
ցան աչք իմ ՚ի տեսանելոյ :

Հայեցայ ՚ի բարձունս առ տէր աստուած
իմ , որ փրկեաց զիս և փարատեցոյց յի-
նէն զցաւս անձին իմոյ :

Տէր վասն այսորիկ պատմեցաւ քեզ , զար-
թուցեր զանձն իմ , դարձուցեր զհոգի
իմ , մխիթարեցայ և կեցի :

Մհա ՚ի խաղաղութիւն դարձաւ դաւնու-
թիւն իմ , փրկեցեր զանձն իմ զի մի կոր-
եաց . և ընկեցեր յետոյ զամենայն ըզ-
մեղս իմ :


Օ ՚ի հչ թէ որք ՚ի դժոխս են՝ խաստովան
առնին առ քեզ , և հչ մեռեալք օրհնե-
ցեն զքեզ , և հչ յուսացին ՚ի ճշմար-
տութիւնս քո ամենեքեան՝ ոչք իջանեն ՚ի
դժոխս :

Մ. Մ. կենդանիքս օրհնեցուք զքեզ տէր ,
որպէս և ես այսուհետե մանկունս ծնայց
որք պատմեցին զարդարութիւնս քո տէր :

փրկութեան խնայ:

Լս ոչ ևս դադարեցից օրհնել զքեզ
յօրհնութիւն նոր, զամենայն աւուրս
կենաց խնոց յանդիման տաճարիդ աստու-
ծոց:

Փառք հօր և օրդոց և:



ՄԱՂԹԱՆԲ

Յոյս կենդանութեան, յոյս և ապաւեն փրկ-
ութեան աէր յաւուս փրկիչ, փրկեան և փա-
րասեցո՛ զցաւս անձին խնոց:

Մարդասէր աէր՝ վասն սրբա՛հւոյ անարատի մօր-
բոյ և կուսի, և վասն խաչի՛քոյ պատուականի,
աէր ընկալ զաղաչանս մեր, և կեցո՛ զմեզ:

Չբարոզն և զաղօծես, ի մերն Երկնքստանն կա-
նանի գոցես ի 77. երեսն:

Հա՛ ի Գիշերի՛



Fig. Maria Zeyher





Ստատովան եղերուք տեառն զի քաղցր է ,
զի յաւիտեանն է ողորմութիւն նորա :
Նսասցենն փրկեալք տեառն , զորս փրկեաց
ի ձեռաց թշնամեցն :

Յամենայն գաւառաց ժողովեաց զնոսա ,
յարկելից և յարկմախց ՚ի հիւսիսոյ և ՚ի
ծովէ :

Սողորեցան նորա յանապատի յանջրդի
ճանապարհի , և քաղաք բնակութեանն ոչ
դաին :

Քաղցեան և ծարաւեցան , և անձինք նոցա
ի նոսին նուաղեցան :

Նղաղակեցին առ տէր ՚ի նեղութեան իւրեանց ,
և ՚ի վշտաց նոցա փրկեաց զնոսա :

Նաաջնորդեաց նոցա ՚ի ճանապարհ ուր
վեր , զի երթիցենն ՚ի քաղաք բնակութեան
իւրեանց :

Խոստովան եղիցին տեառն ողորմութեանց
Նորա , և սքանչելեաց նորա որդիք մարդ-
կան :

Օ ի յաղեցոյց զանձինս քաղցեալս , և
զանձինս կարօտեալս լի արար բարութիւն :
Ոչք նստէին ՚ի խաւարի և ՚ի ստուերս
մահու , կապեալ էին յաղքատութեան
որպէս յերկաթս :

Օ ի դառնացուցին զբանն աստուծոյ , և
զխորհուրդս բարձրելոյն բարկացուցին :

Խոնարհ եղեն ՚ի ցաւոց սիրտք նոցա , տկա-
րացան և ոչ ոք էր որ օգնէր նոցա :

Եղաղակեցին առ տէր ՚ի նեղութեան իւր-
եանց , ՚ի վշտաց նոցա եհան զնոսա :

Փրկեաց զնոսա ՚ի խաւարէ և ՚ի ստուերաց
մահու , և խղեաց զկապանս նոցա :

Խոստովան եղիցին տեառն ողորմութեանց
Նորա , և սքանչելեաց նորա որդիք մարդ-
կան :

Օ ի փշեաց զգրուես պղնձիս , և զնիզս
երկաթիս խորտակեաց :

Ոգնեաց նոցա ՚ի ճանապարհի անօրէնու-
թեան իւրեանց , զի վասն մեղաց իւր-
եանց խոնարհ եղեն յոյժ :

Յամենայն կերակրոց դարչէին սիրաք նո-
ցա , մերձեցան մինչև ՚ի դրունս մահու :
Ղաղակեցին առ տէր ՚ի նեղութեան իւր-
եանց , ՚ի վշտաց նոցա ապրեցոյց զնոսա :
Ղուարեաց զբան իւր և բժշկեաց զնոսա ,
և փրկեաց զնոսա յապականութենէ իւր-
եանց :

Խոստովան եղիցին տեառն ողորմութեանց
նորա , և սքանչելեաց նորա որդիք մարդ-
կան :

Մատուցեն նմա պատարագ օրհնու-
թեան , և պատմեսցեն զգործս նորա ցըն-
ծութեամբ :

Աբ իջանէին ՚ի ծով նաւուք , և առնէին
զգործս ՚ի ջուրս բազումս :

Նոքա տեսին զգործս տեառն , և զսքան-
չելիս նորա ՚ի խորս անդնդոց :

Ղսաց և յարեաւ հողմ և մրրիկ , և բարձ-
րացան ալիք նորա :

Լչանէին յերկինս և իջանէին յանդունդս ,
և անձինք նոցա յանձինս իւրեանց մաշե-
ցան :

Խառլեցան սասանեցան որպէս արբեալք ,
և ամենայն իմաստութիւն նոցա ընկլա :

Աղաղակեցին առ տէր 'ի նեղութեան իւրեանց , 'ի վշտաց նոցա կեցոյց զնոսա :
 'Իարձոյց զմրրիկն յօդս՝ և դադարեցան արիք նորա . ուրախ եղին զի դադարեցան , և առաջնորդեաց նոցա 'ի նաւահանգիստ կամաց իւրեանց :

Իստատլան եղիցին տեառն ողորմութեանց նորա , և սքանչելեաց նորա որդիք մարդկան :

'Իարձր արասցեն զնա 'ի ժողովս ժողովւորոց , և յաթուս ծերոց օրհնեցեն զնա :
 Օ 'ի դարձոյց զդեան 'ի ցամաք , և ըզգնացս ջուրց յերկիր ծարաւուա :

Արար զերկիրն պողաբեր յաղտաղտուկս , վան չարութեան բնակչաց նոցա :

Արար զանապատն 'ի ճահիճս ջուրց , և զերկիրն ծարաւուա 'ի գնացս ջուրց :

'Ինակեցոյց 'ի նմա քաղցեալս , և շինեցին քաղաք բնակութեան իւրեանց :

Վարեցին արտա և տնկեցին այգիս , և արարին պտուղ արմատեաց իւրեանց :

Օրհնեաց զնոսա և բազմացան յոյժ , և անասուիք նոցա ոչ նուաղեցան :

Նուաղեցան նոքա և չարչարեցան , 'ի նե-

դու թե՛նէ չարեաց և ՚ի վշտաց :
 Եկին անարդու թիւն ՚ի վերայ իշխանաց նո-
 ցա , մոլորեցոյց զնոսա յանապատի և ոչ
 ՚ի ճանապարհի :

() Գնեաց տնանկին յաղքատութեան , և
 առաջնորդեաց որպէս խաչին ազգի նոցա :
 Տեսցեն ուղիղք և ուրախ եղիցին , և ա-
 մենայն անօրէն խցցէ զբերան իւր :
 Այլ է իմաստուն՝ որ պահեացէ զայս , և
 ՚ի միտ ապցէ զողորմութիւնս տեառն :
 Տունք . ԽԶ :

ՍԱՂՄՈՍ . ՃԷ

Օրհնութիւն Սաղմոսաց Դաւթի :

Պատրաստ է սիրտ իմ աստուած , պատ-
 րաստ է սիրտ իմ օրհնել և սաղմոս ասել
 քեզ փառօք իմովք :

Օ շրթիք փառք իմ , զարթիք սաղմոս-
 իւք և օրհնութեամբ , և ես զարթեացց
 առաւօտուց :

Իտաստիան եղէց քեզ ՚ի ժողովուրդս ակր ,
 և սաղմոս ասացից քեզ յազնայ :

• Ս՛եճ եղև մինչև յերկինս ողորմութիւն
քո , մինչև յամսս է ճշմարտութիւն քո :
Բարձրեալ ես դու յերկինս աստուած ,
և յամենայն երկրի են փառք քո :
Քրտէս փրկեցան սիրելիք քո , կեցո՛ւ աշու
քով և լուր մեզ :

Ըստուած խօսեցաւ ՚ի սրբութենէ իւր
մէ , բարձր եղէց՝ բաժանեցից զսիւքէմ
և զհոյժասն յարկաց չափեցից :

Իմ է դաղայադ և իմ է մանասէ , եփրեմ
հզօրիչ գլխոյ իմոյ :

Յուդայ թաղաւոր իմ , մովաբ աւազան
յուսոյ իմոյ :

Յեդուիմէ ուղղեցից զգնացս իմ , և ինձ
այլազգիք հնազանդ եղեն :

Ս՛ տարցէ զիս ՚ի քաղաք ամուր , կամ ո՛
առաջնորդեցէ ինձ մինչև յեդուիմէ :

Լ՛ծէ ոչ դու աստուած որ մերժեցեր ըզ
մեզ , և ոչ ելեր աստուած ընդ զօրս մեր :

Տուր մեզ օգնութիւն ՚ի նեղութեան ,
զի սուտ է փրկութիւն մարդոյ :

Ըստուծով արասցուք զօրութիւն , և նա
յամօթ արասցէ՛ զթշնամիս մեր :

ՍՅՆՄՈՍ • ՃԸ

Ի հատարած • Սաղմոս Դաւթի:

Նստուած օրհնութեան խմոյ մի լուեր ,
 զի բերան մեզաւորի բերան նենգաւորի
 բացաւ 'ի վերայ իմ:

Իօսեցան զինէն լեզուաւ նենգաւորաւ ,
 և բանիւ ատելութեան պաշարեցին զիս :
 Սարտեան ընդ իս 'ի տարապարտուց , փո-
 խանակ սիրոյ խմոյ մատնէին զիս , այլ ես
 յաղօթս կայի :

Հատուցին ինձ շար փոխանակ ընդ բար-
 ւոյ , ատելութիւն փոխանակ սիրոյ խմոյ :
 Կացն 'ի վերայ նորա մեզաւոր , սատանայ
 կացցէ ընդ աջմէ նորա :

Ի դատաստանէ իւրմէ ելցէ դատապարտ-
 եալ , և աղօթք նորա 'ի մեղս դարձ
 ցին :

Եղիցին աւուրք նորա նուազ , և զայցե-
 լութիւն նորա զայն այլ տարցէ :

Եղիցին որդիք նորա որք և կին նորա այ-
 ըի • սահեցին փոփոխեցին , որդիք նո-
 րա մուրօղք եղիցին , և ելցեն 'ի բնակու-
 թենէ իւրեանց :

† Քննեսցէ փոխառու զամենայն ինչս նորա , և յափշտակեսցեն օտարք զվատակս նորա :

Մի գտցի օգնական նմա , և մի ոք ողորմեսցի ՚ի վերայ որքոց նորա :

Եղիցին որդիք նորա ՚ի սատակումն , և յազգէ ջնջեսցի անուն նորա :

Յիշեսցին մեղք հօր նորա առաջի տեառն . և մեղք մօր նորա մի ջնջեսցին , և եղիցին առաջի տեառն յամենայն ժամ :

Սատակեսցի յերկրէ յիշատակ նորա . փոխանակ զի ոչ յիշեաց անել զողորմութիւնս :

Հարածեաց զայր աղքատ և զանանկ , սպանանել զայն որ խոնարհ է սրտիւ :

Սիրեաց զանէծս և ելցէ նմա . ոչ կամեցաւ զօրհնութիւն , հեռի եղիցի ՚ի նմանէ :

Օ գեցաւ զանէծս որպէս հանդերձ , մտցէ որպէս ջուր ՚ի փոր նորա , և որպէս ձէթ ընդ ոսկերս նորա :

Եղիցի նմա որպէս հանդերձ զի ազանի , որպէս դօտի որ ամի հանապազ ընդ մէջ :

Եյս գործ է այնոցիկ՝ ոյք չարախօս կային զինէն առ տէր , և ոյք խօսէին չար զանձ :

Նե՛ իմմէ՛ :

Մ. Մ. դու տէր տէր՝ արա՛ ընդ իս ըստ ան-
ուան քում, զի քաղցր է ողորմութեան քո,
և փրկեան զիս զի աղքատ և տնանկ եմ ես :
Մերտ իմ խռովեցաւ ՚ի փորի իմում, և ես
որպէս սառուեր ՚ի խուսափիլ իմում պակա-
սեցայ և թօթափեցայ որպէս մարախ :

Սուսնկք իմ տկարացան ՚ի պահոց, և մար-
մին իմ այլադունեցաւ յիւղոյ :

Եղէ ես նախատ նոցա, տեսին զիս և
չարժեցին զգլուխս իւրեանց :

() զնեան ինձ տէր աստուած իմ, և փրկ-
կեան զիս ըստ ողորմութեան քում :

Սանիցեն զի ձեռն քո այս է, և դու
տէր արարեր զայս :

Նոքա անիծանեն և դու օրհնեսցես . ոչք
յարուցեալ են ՚ի վերայ իմ զամօթ կրես-
ցեն . այլ ծառայ քո ուրախ եղիցի ՚ի քեզ :

Ս զեցցին զամօթ ոչք չարախօս կային
զանձնէ իմմէ, և արկցեն որպէս կրկնոց
զամօթ իւրեանց զիւրեամբք :

Մ. Մ. ես խոստովան եղէց առ տէր յոյժ
բերանով իմով, և ՚ի մէջ բազմաց օրհնե-
ցից զքեզ :

Օ ի եկաց նա ընդ աջմէ տնանկին , ՚ի
 փրկել զիս յայնցանէ՝ ոյք հալածեն զան-
 ձքն իմ:

Տուօք . ել:

ՍԱՂՄՈՍ . ձԹ

Ի կատարած . Սաղմոս դաւթի:

Ըսաց տէր ցտէր իմ նիստ ընդ աջմէ իմ
 մէ , մինչև եդից զթշնամիս քո պատուան,
 դան ոտից քոց:

Պաւազան զօրութեան առաքեսցէ քեզ
 տէր ՚ի սիօնէ , և տիրեսցես դու ՚ի մէջ
 թշնամեաց քոց:

Ինդ քեզ է սիրզքն աւուր զօրութեան .
 ՚ի վայելութիւն սրբոց քոց յարգանդէ
 յառաջ քան զարուսեակ ծնայ զքեզ:

Լրդուաւ տէր և ոչ ևս զզջացի , թէ դու
 ես քահանայ յաւիտեան ըստ կարգին մեզ
 քիսեդեկի , և տէր ընդ աջմէ քումմէ:

Խորտակեսցէ յաւուր բարկութեան զթա-
 դաւորս . դատէ զհեթանոսս և բազում
 առնէ զհարուածս , և խորտակեսցէ զզը-
 լուխս բազմաց յերկրի:

Օ ուղիս 'ի ճանապարհի արբուսցէ . վասն
այսորիկ և բարձր արասցէ զգլուխս .
Տունք . Դ . Գորդայս . Խը :



ՍԵՂՄՈՍ . ՀԺ

Ալլուխս :

Խոստովան եղէց քեզ տէր բոլորով սրբ-
տիւ իմով , 'ի խորհուրդս ուղղոց 'ի ժո-
ղովուրդս մեծ են գործք տեառն , և
քննեալ են յամենայնի կամք նորա :

Խոստովանութիւն և վայելչութի են գործք
նորա . արդարութիւն նորա մնայ յաւիտ-
եանս յաւիտենից :

Յիշատակ արար սքանչելեաց իւրոց ուղ-
ղոց . ողորմած զթամ է տէր , կերակուր
տայ երկիւղածաց իւրոց :

Յիշեաց յաւիտենից զուխա իւր , զգո-
րութիւն գործոց իւրոց պատուիրեաց ժո-
ղովորեանս իւրում :

Տալ նոցա զժառանգութիւն հեթանոսաց ,
և գործք ձեռաց նորա արդարութիւն և
իրաւունք են :

Հաւատարիմ են յամենայնի պատուիրանք
նորա , հաստատեալ են յաւիտեանս յա-
ւիտենից , արարեալ են ճշմարտութեամբ
և ուղղութեամբ :

Քրկութիւն առաքեաց տէր ժողովրդեան
իւրում . պատուիրեաց յաւիտենից զուխտ
իւր , սուրբ և ահեղ է անուն նորա :
Սկիզբն զգօնութեան երկիւղ տեառն , ի-
մաստութիւն բարի ամենեցուն ոյք առ-
նեն զնա , և օրհնութիւն նորա մնաց յա-
ւիտեանս յաւիտենից :

Տունք . Ը :

ՍԱԼՄՈՍ . ՃԺԱ

Աւելուիա . Ի վերայ ապաշխարութեան , անդեաց է
զարարիաց :

Երանեալ է այր որ երկնչի Ի տեառնէ ,
զպատուիրանս նորա նա կամի յոյժ :
Հզօր եղիցի յերկրի զաւակ նորա , և ազգ
ուղղաց օրհնեացի :

Փառք և մեծութիւն են Ի տան նորա ,
արդարութիւն նորա մնաց յաւիտեանս
յաւիտենից :

Օւազեաց Ի խաւարի լոյս ուղղոց , ողոր-

մած գթած և արդար է տէր:

Քաղցր այր ողորմի և տայ փոխ , յօրինէ
զբան իւր 'ի դատաստանի , զի յաւիտեան
նա մի սասանեացի:

Յիշատակ յաւիտենից եղիցի արդարն , 'ի
համբաւէ չարէ նա մի երկկիցէ:

Պատրաստ է սիրտ նորա յուսալ առ ԾԾ:
Հաստատեալ է սիրտ նորա և նա մի եր-
կիցէ , մինչև տեսցէ 'ի թշնամիս իւր:

Սիտեաց և ետ աղքատաց , արդարու-
թիւն նորա մնայ յաւիտեանս յաւիտե-
նից , և եղջիւր նց բարձր եղիցի փառօք:
Սեղաւորն տեսցէ և բարկացի , զատա-
մունս իւր կրճտեացէ և հալեացի , և ցան-
կութիւն մեղաւորաց կորիցէ:

Տունք . . Գ

ՍԱՂԽՈՍ . ՃԺԲ

Աւելութա:

() Բհնեցէք մանկունք զտէր , և օրհնեցէք
զանուն տեառն:

Եղիցի անուն տեառն օրհնեալ , յայսմ
հետէ մինչև յաւիտեանս:

Յարեւելից մինչև 'ի մուտս արևու , օրհ-

Նեալ է անուն տեառն:

Բարձր է ՚ի վերայ ամենայն ազգաց տէր,
և յերկինս են փառք նորա:

Ո՞վ է որպէս տէր աստուած մեր ՚ի բար-
ձունս բնակեալ, և զխոնարհս տեսանի:
յերկինս և յերկրի:

Յարուցանէ զաղքատս յերկրէ, և բարձր
առնէ զտառապեալս յաղբեաց:

Նստուցանէ զնոսա իշխանս, ընդ իշխանս
ժողովրդեան իւրոյ:

Բնակեցուցանէ զամուլն ՚ի տան ուրախա-
միա, որպէս մայր որդւովք բերկրեալ:

Տունք . Ը.

ՍՍՂՄՈՍ . ՃԺԳ.

Աւելուիա:

Յերանելն իորայէլի յեգիպտոսէ . տանն
յակորայ ՚ի ժողովրդենէ այլազգեաց:

Նղև հրէաստան սրբութիւն նորա, և իս-
րայէլ իշխանութիւն նորա:

Ո՞ով ետես և փախեաւ, և յորդանան
անդրէն դարձաւ:

Երկնք ցնծացելն որպէս խոյք, և բլուրք
որպէս դառինք մայրեաց:

Օ ի է քեզ ծով , զո՞ տեսեր և փախեալ ,
 կամ դու յորդանան զի՞ դարձար անդրէն :
 Երկնք՝ ցնծացէք որպէս խոյք , և բլուրք
 որպէս դառինք մաքեաց :

Յերեսաց տեսան՝ սասանեցաւ երկիր ,
 յերեսաց աստուծոյ յակորայ :

Ս դարձոց զվէմն ՚ի վտակս ջուրց , և զա-
 պառածն յաղբերակունս :

Ս ՚ի մեզ տէր՝ մի՞ մեզ . սյլ անուանքում
 տներ զփառս , վասն ողորմութեան և ճշ-
 մարտութեան քոյ :

Ս ՚ի երբէք ասացեն ՚ի հեթանոսս , թէ
 ուր է աստուած նոցա :

Աստուած մեր յերկինս և յերկրի , զա-
 մենայն զոր ինչ կամեցաւ և արար :

Կուրք հեթանոսաց ոսկի և արծաթ են ,
 ձեռագործ են որդւոց մարդկան :

Իերան ունին՝ և ոչ խօսին , աչս ունին՝
 և ոչ տեսանեն :

Վհանջս ունին՝ և ոչ լսեն , ունչս ունին՝
 և ոչ հաստանեն :

Չեսս ունին՝ և ոչ շօշափեն , ոսս ունին՝
 և ոչ գնան . և ոչ գոյ բարբառ ՚ի կո-
 կորդս նոցա :

- Վճան նոցա եղիցին՝ ոյք արարին զնոսա-
ամենեքեան ոյք յուսացեալ են ՚ի նոսա:
Տունն խորայէլի յուսացաւ ՚ի տէր , օգ-
նական և ընդունեօղ է նոցա:
Տունն ահարօնի յուսացաւ ՚ի տէր , օգ-
նական և ընկերօղ է նոցա:
Լրկիւղածք տեառն յուսացան ՚ի տէր ,
օգնական և փրկիչ է նոցա:
Յիշեաց զմեզ տէր և օրհնեաց զմեզ . օրհ-
նեաց տէր զտունն խորայէլի . օրհնեաց
տէր զտունն ահարօնի:
() օրհնեաց տէր զերկիւղածս իւր , զփոքրը-
կունս և զմեծամեծս:
() աւելցէ ՚ի ձեզ տէր , ՚ի ձեզ և յոր-
դիս ձեր:
() օրհնեալ էք դուք ՚ի տեառնէ , որ արար
զերկինս և զերկիր:
Լրկինք երկնից տեառն են , և զերկիրս եւ
որդւոց մարդկան:
Մէթէ մեռեալք օրհնեսցեն զքեզ տէր ,
և ոչ ամենեքեան՝ ոյք իջանեն ՚ի դժոխս:
ՄԼ կենդանիքս օրհնեսցուք զքեզ տէր ,
յայսմ հեռէ մինչև յաւիտեան:

ՍԱՂՄՈՍ · ՃԺԴ

Աէլուխա

Արեցի զի լուիցէ տէր զձայն աղօթից իւ
մոց . զի խոնարհեցոյց զունկն իւր առ իս ,
և ես յաւուրս իմ կարգացի առ նա :

Երջեցան զինև երկունք մահու , և միշտք
դժոխոց գտին զիս :

Օ նեղութիւն և զանձկութիւն գտի , և
զանուն տեառն կարգացի :

Մ տէր փրկեա՛ զանձն իմ . ողորմած ասա
ուած մեր , ողորմի և պահէ զազայս տէր :
Ես խոնարհ եղէ և տէր կեցոյց զիս , դարձ
անձն իմ ՚ի հանգիստ քո զի ինր օգնեաց քեզ :
Փրկեաց զանձն իմ ՚ի մահուանէ , զաչս
իմ յարտասուաց , և զոտս իմ ՚ի գայթակ
ղութենէ , հաճոյ եղէց առաջի տեառն
յերկրին կենդանեաց :

Տունք · 4

ՍԱՂՄՈՍ · ՃԺԵ

Աէլուխա

Հաւատացի զոր և խօսեցայ , և ես խոնարհ
եղէ յոյժ :

Եւ ասացի ՚ի զարմանալ խնում, թէ ամե-
նայն մարդ սուտ է:

Օ ինչ տաց արիտուր տեառն, ընդ ամե-
նայնի զոր և ետ ինձ:

Օ բաժակ փրկութեան ընկալաց, և զա-
նուն տեառն կարդացից:

Օ աղօթս իմ տեառն տաց առաջի ամե-
նայն ժողովրդեան նորա:

Պատուական է առաջի տեառն մահ սրբ-
բոց իւրոց . ո՞ տէր ես ծառայ քո եմ,
ծառայ և որդի ազախնոց քո:

Հասեր զկապանս իմ, քեզ մատուցից
պատարագ օրհնութեան, և զանուն տն
կարդացից:

Օ աղօթս իմ տեառն տաց առաջի ամե-
նայն ժողովրդեան նորա, ՚ի գաւթս տան
տեառն, և ՚ի մէջ քո երուսաղէմ:

Տունք . Ը:

ՍՆՆՄՈՍ . ՃԺԶ

Անբախ:

(Օրհնեցէք զտէր ամենայն ազնիք . գո-
վեցէք զնա ամենայն ժողովուրդք:

(Օ սրացի ողորմութիւն նորա ՚ի վերայ

մեր . և Տշմարտութիւն տեառն մնացէ
յաւխտեան

Տունք . Բ:

ՍԱԼՄՈՍ . ճժէ:

Աւելուիա:

Խոստովան եղերուք տեառն զի բարի է ,
զի յաւխտեան է սղորմութիւն նորա:

Մասցէ տունն խորայելի , զի յաւի:

Մասցէ տունն ահարօնի , զի յաւի:

Մասցեն երկիւղածք տեառն , զի յաւի:

Ի նեղութեան իմում ես առ տէր կարդա-
ցի , և լուաւ ինձ յանդորր:

Տէր է իմ օգնական և ես ոչ երկեաց , զի
արասցէ ինձ մարդ:

Տէր է իմ օգնական , և ես տեսից ՚ի թըշ-
նամիս իմ:

Բարի է յուսալ ՚ի տէր քան յուսալ ՚ի
մարդիկ , բարի է յուսալ ՚ի տէր քան յու-
սալ յիշխանս:

Ղմենայն աղինք շրջեցան զինև , և ան-
ուամք տեառն յաղթեցի նոցա:

Շրջելով շրջեցան զինև , և պաշարեցին
զես ՚ի միասին , և անուամք տեառն վա-

Նեցի զնոսաւ

Հուրջ եղեն զինե որպէս մեզուք , վառե-
ցան բորբոքեցան որպէս փուշք 'ի հուր ,
և անուամբ տեառն մերժեցի զնոսաւ :

Ի մերժելն դրդուեցայ և եղէ մերձ 'ի
գլորիլ . և տէր ընկալաւ զիս :

Օ զօրութիւն իմ և օգնութիւն իմ տէր ,
և եղև ինձ 'ի փրկութիւն :

Հայն ցնծութեան փրկութեան 'ի յարկս
արդարոց :

Ը տեառն արար զօրութիւն , աջ տեառն
բարձր արար զիս , և աջ տեառն արար
զօրութիւն :

Աջ մեռայց , այլ կեցից և պատմեցից ըզ-
գործս տեառն :

Խրատելով խրատեաց զիս տէր , և 'ի մահ
նչ մատնեաց :

Ի այէք ինձ զդրունս արդարութեան զի
մտից ընդ այն , և խոստովանեցի և եղէց տեառն :

Ը յս դուռն տեառն է , և արդարք մտա-
նեն ընդ սա :

Խոստովանեցի քեզ տէր , զի լուար ինձ ,
և եղեր ինձ 'ի փրկութիւն :

Ը էմն զոր անարգեցին շինողքն , նա եղև

դրութի անկեանս

Ի տեառնէ եղև այս, և է սքանչելի առա-
ջի աչաց մերոց:

Այսօր է զոր արար տէր, եկայք ցնծա-
ցուք և ուրախ եղիցուք ՚ի սմա:

Ա՛ տէր փրկեա՛, ս՛ տէր առաջնորդեա՛ .
օրհնեալ որ դալոց ես յանուն տեառն ,
և օրհնեցայք զքեզ ՚ի տանէ տեառն:

Տէր աստուած մեր երևեցաւ մեզ, ա-
բարէք տանս ուրախութեան կանխաւ,
մինչև յանկիւնս սեղանոյ:

Աստուած իմ ես դու՛ և խոստովան եղէց
քեզ, աստուած իմ ես դու՛ և բարձր
արարից զքեզ:

Խոստովան եղէց քեզ տէր՝ զի լուար ինձ,
և եղեր ինձ ՚ի փրկութիւնս:

Խոստովան եղերուք տեառն, զի բարի
է զի յաւիտեան է ողորմութիւն նորա:

Տունք . ին՝ Գորղայս . խն:

Երանեալ են անբիծք 'ի Ճանապարհի , և
 ոչք գնան յօրէնս տեառն :

Երանի ոչք քննեն զվիայութիւնս նորա ,
 բոլորով սրտիւ իւրեանց խնդրեցեն զնա :
 Այ թէ ոչք գործեն զանօրէնութիւն , 'ի
 Ճանապարհս նորա գնացեն :

'Իս պատուիրեցեր զպատուիրանս քո՝ 'ի
 պահել ինձ յոյժ :

Երանի թէ յաջողեալ էին ինձ Ճանապարհք
 իմ , 'ի պահել ինձ զարդարութիւնս քո :
 Յայնժամ ևս ոչ ամաչէի 'ի զդուշանալ
 ինձ 'ի պատուիրանս քո :

Կոստովան եղէց քեզ տէր յուզղութիւն
 սրտի իմոյ . որպէս ուսայց զիրաւունս ար-
 դարութեան քո :

Օ իրաւունս քո պահեցի , մի թողուր
 զիս մինչ իսպառ :

Աւ ուզղեացէ երիտասարդ զՃանապարհս
 իւր , այլ 'ի պահել զքանս քո :

Բոլորով սրտիւ իմով խնդրեցի զքեզ , մի
 մերժեր զիս 'ի պատուիրանաց քոց :

Ի սրաի խնում թագուցի զբանս քո , որ
պէս զի մի մեղայց քեզ :

Օրհնեալ ես դու տէր , ուսն ինձ զար-
դարութիւնս քո :

Շքեամբք խնովք պատմեցից զամենայն
իրաւունս բերանոց քո :

Ի ճանապարհս վկայութեանց քոց զուար-
ձացայ , որպէս յամենայն ՚ի մեծութեան :

Ի պատուիրանս քո հոգացայ , և զգուշա-
ցայ ՚ի ճանապարհս քո :

Օ իրաւունս քո խօսեցայ , և ոչ մոռա-
ցայ զբանս քո :

Հասն ծառայի քում , զի կեցից և պահե-
ցից զբանս քո :

Օ արթն զաչս իմ , և նայեցայց ՚ի սքան-
չելիս օրինաց քոց :

Պանդուխտ եմ ես յերկրի , մի թագու-
ցաներ յինէն զպատուիրանս քո :

Փախադեաց անձն իմ , ՚ի ցանկալ ինձ
իրաւունս քո յամենայն ժամ :

Սաստեցեր ամբարտաւանից . անիծեալ ոչք
խտորեցան ՚ի պատուիրանաց քոց :

Ի բաց արա յինէն զնախատինս և զարհա-
մարհանս , զի զվկայութիւնս քո խնդրեցի :

Քանզի նստան իշխանք և չարախօսէին
 զինէն , այլ ծառայ քո խորհէր յիրա-
 ւունս քո :

Օ ի վկայութիւնք քո խօսք իմ էին . և
 խորհուրդք իմ արդարութիւն քո :

Ս Երձեցաւ անձն իմ 'ի հող , տէր կեցո՞
 զիս ըստ բանի քում :

Օ Ճանապարհս իմ պատմեցի քեզ և լուար
 ինձ . ուսո՞ ինձ զարդարութիւնս քո :

Ի Ճանապարհս արդարութեանց քոց իմաս-
 տուն արա զիս , և քննեցից զսքանչելիս քո :

Տ քնեցաւ անձն իմ առ 'ի ձանձրանալ ,
 հաստատեա՞ զիս 'ի բանս քո :

Օ Ճանապարհս մեղաց 'ի բայց արա յի-
 նէն , և յօրէնս քո ողորմեա՞ ինձ :

Օ Ճանապարհս ճշմարտութեան քո ընտրե-
 ճի . և զիրաւունս քո ես ոչ մտաացայ :

Ս Երձեցայ ես 'ի վկայութիւնս քո . տէր
 մի յամօթ առներ զիս :

Ի Ճանապարհս պատուիրանաց քոց ընթա-
 ցայ , զի անդորր արարեր սրտի իմոյ :

() րէնսզէտ արա զիս տէր 'ի Ճանապարհս
 իրաւանց քոց , և խնդրեցից զնա յամե-
 նայն ժամ :

Իմաստունն արա զիս , և քննեցից զօրէնս
քո , և պահեցից զնա բոլորով սրտիւ իմով :
Առաջնորդեալ ինձ 'ի շաւիղս պատուիրա-
նաց քոց , զի ընդ նոսա հաճեցայ :

Իտնարհեցն զսիրտ իմ 'ի վկայութիւնս քո ,
և մի յագահութիւնս :

Իարձն զաչս իմ զի մի անտից զնանրու-
թիւն , 'ի ճանապարհս քո կեցն զիս :

Հաստատեալ ծառայի քում՝ զբան քո յեր-
կիւղ քո :

Հան յինէն զնախատինս զոր և կարծեցի .
զի դատաստանք քո քաղցր են :

Ահա՛ ցանկացայ պատուիրանաց քոց , յար-
դարութեան քում կեցն զիս :

Ահեցեղ : 'ի վերայ իմ ողորմութիւն քո իօր ,
և փրկութիւն քո ըստ բանի քում :

Տայ պատասխանի ոյք նախատեն զիս բան-
իւք . զի ես 'ի բանս քո յուսացայ :

Ահ 'ի բացեայ առներ 'ի բերանոյ իմմէ
զբան ճշմարտութեան մինչև յոյժ , զի
յիրաւունս քո յուսացայ :

Պահեցի զօրէնս քո յամենայն ժամ , յա-
ւիտեան և յաւիտեանս յաւիտենից :

Դնայի ես յանդորրու , զի զպատուիրանս

քո խնդրեցի:

Խօսէի զվկայութիւնս քո առաջի Թագաւորաց , և ոչ ամաչէի:

Խորհէի 'ի պատուիրանս քո զոր սիրեցի:
Համբարձի զձեռս իմ 'ի պատուիրանս քո զոր սիրեցի , և խորհէի յարդարութեան քում:

Յիշեա՛ զբան ծառայի քո , յոր և յուսացուցեր զիս:

Սա մխիթարեցէ զիս 'ի խոնարհութեան իմում . զի բան քո կեցոյց զիս:

Մբարտաւանք անիրաւեցան յիս յոյժ , այլ յօրինաց քոց ես ոչ խտտորեցայ:

Յիշեցի զիրաւունս քո յաւխտենից տէր , և մխիթարեցայ:

Տրամութիւն կարաւ զիս 'ի մեղաւորաց , և ոչք Թողին զօրէնս քո:

Գովելի են ինձ իրաւունք քո , 'ի տեղւոյ պանդխտութեան իմոյ:

Յիշեցի 'ի գիշերի զանուն քո տէր , և պահեցի զօրէնս քո:

Սա եղև ինձ ճանապարհ 'ի կեանս , զի զարդարութիւնս քո խնդրեցի:

Անկուխաւ

Բաժին իմ ես դու տէր , ասացի պահել
ինձ զօրէնս քո :

Աղաչեցի զերեսս քո բոլորով սրտիւ իմով ,
ողորմեա՛ն ինձ ըստ բանի քում :

Խորհեցայ ՚ի ճանապարհս իմ , և դարձուցի զոտս իմ ՚ի վկայութիւնս քո :

Պատրաստեցայ և ոչ խռովեցայ , զի պահեցի զպատուիրանս քո :

Տոռունք մեղաց պատեցան զինեւ , այլ զօրէնս քո ես ոչ մոռացայ :

Ի մէջ գիշերի յառնէի խոտաովան լինիլ
առքեղ , վասն իրաւանց և արդարութե

քո :

Հաղորդ էի ես ամենայն երկիր զածաց քոց ,
որոց պահեալ էին զպատուիրանս քո :

Ողորմութեամբ տեսան լի եղև երկիր ,
զարդարութիւնս քո ուսն ինձ :

Քաղցրութիւն արարելս ընդ ծառայի քում
տէր , ըստ բանի քում :

Օ քաղցրութիւն զխրատ և զգիտութիւն
ուսն ինձ , զի ՚ի պատուիրանս քո ես հաւատացի :

Մինչև խոնարհեալ էի ես մեղայ , վասն
այսորիկ զբանս քո պահեցի յոյժ :

Քաղցր ես դու տէր , և քաղցրութեամբ
քով ուսն ինձ զարդարութիւնս քո :

Բազմացան յիս անիրաւութիւնք ամբար-
տաւանից . այլ ես բոլորով սրտիւ խնով
քննեցի զպատուիրանս քո :

Մածան որպէս կաթն սիրտք նոցա , այլ
եւ զօրէնս քո խօսեցայ :

Բարի է ինձ զի խոնարհ արարեր զիս , որ-
պէս ուսայց զարդարութիւնս քո :

Բարի են ինձ օրէնք բերանոյ քո՝ քան
զհազարս ոսկւոյ և արծաթոյ :

Չեմք քո արարին և ստեղծին զիս , ի-
մաստունն արա զիս և ուսայց զպատուի-
րանս քո :

Լրկիւ զածք քո տեսցեն զիս և ուրախ եղի-
ցին , զի ես ՚ի բանս քո յուսացայ :

Օանեայ տէր զի արդարութեամբ են դա-
տաստանք քո . յիրաւի խոնարհեցուցեր զիս :

Լղիցի ողորմութիւն քո ՚ի մխիթարել զիս ,
ըստ բանի քում զճառայս քո :

Լկեսցեն յիս գթութիւնք քո և կեցից ,
զի օրէնք քո խօսք իմ է ինն :

Ամաչեցենն ամբարտաւանք որք 'ի տարա-
պարտուց անիրաւեցան յիս , այլ ես հո-
գացայ 'ի պատուիրանս քո :

Խրատեցենն զիս երկիւղածք քո , և ոչք
Ճանաչեն զվկայութիւնս քո :

Եղիցի սիրտ իմ անբիծ յարդարութեան
քում , զի մի ամաչեցից :

Կարօտացաւ անձն իմ 'ի փրկութիւնս քո ,
զի ես 'ի բանս քո յուսացայ :

Սպասեցին աչք իմ բանի քում , ասացի
Երբ մխիթարեցէ զիս :

Եղէ ես որպէս տիկ 'ի պարզի , զի զար-
դարութիւնս քո ես ոչ մտացայ :

Բանի՞ ինչ են աւուրք ծառայի քո , երբ
արասցես ինձ իրաւունս 'ի հալածչաց իմոց :

Պատմեցին ինձ անօրէնք զխորհուրդս ,
այլ ոչ որպէս զօրէնս քո :

Ամենայն պատուիրանք քո ճշմարիտ են , 'ի
նանիր հալածեցին զիս՝ օգնեալ ինձ :

Փոքր մի ևս և կորուսանէին զիս յերկրի ,
այլ ես ոչ թողի զպատուիրանս քո :

Ըստ ողորմութեան քում կեցո՞ զիս , և պա-
հեցից զվկայութիւնս բերանոյ քո :

Յաւիտեան տէր բան քո կայ յերկինս ,

ազգէ մինչև յազգ է ճշմարտութիւն քո
 աստատեցեր զերկիր , և կայ :

Հրամանի քում մնայ տիւ , զի ամենեւ
 քեան ծառայք քո են :

Եթէ ոչ օրէնք քո խօսք իմ էին , կան
 խաւ ևս արդեօք կորուսեալ էի 'ի խոնար
 հութեան իմում :

Հաւիտեան ոչ մտաացայց զարդարութիւնս
 քո , զի նոքօք կեցուցեր զիս :

Քո եմ ես և կեցն զիս , զի զարդարու
 թիւնս քո խնդրեցի :

Ինձ սպասեցին մեղաւորք 'ի կորուսանել ,
 զի զվկայութիւնս քո ես 'ի միտ առի :

Համենայն կատարածի տեսի զխախճան ,
 յոյժ անդորր էին ինձ պատուիրանք քո :

Արպէս սիրեցի զօրէնս քո , զօրհանապաղ
 խօսք իմ էին :

Քան զթշնամիս իմ իմաստուն արարեր զիս
 'ի պատուիրանս քո , զի յաւիտեան իմ էին :

Քան զամենայն ուսուցիչս իմ իմաստուն
 եղէ , զի վկայութիւնք քո խօսք իմ էին :

Քան զձերսն իմաստուն եղէ , զի զպատ
 ուիրանս քո քննեցի :

Համենայն ճանապարհաց չարաց արդե՞լի

զօտս իմ , որպէս զի պահեցից զբանս քո :
 Յիրաւանց քոց ես ոչ խոտորեցայ , զի դու
 օրէնսգէտ արարեր զիս :

Որպէս զի քաղցր են 'ի քիմս իմ բանք քո՝
 քան զվեղբ բերանոյ իմոյ :

Ի պատուիրանաց քոց իմացեալ՝ ատեցի
 զամենայն ճանապարհս չարաց , զի դու
 օրէնսգէտ արարեր զիս :

Տրագ են բանք քո ոտից իմոց , և լոյս
 տան շաւղաց իմոց :

Երդուայ և հաստատեցի , զի պահեցից
 զամենայն իրաւունս արդարութեան քո :
 Խնարհ եղէ մինչև յոյժ , տէր կեցո՞ զիս
 ըստ բանի քում :

Ընդ կամս բերանոյ իմոյ հաճեաց տէր , և
 զիրաւունս քո ուսն ինձ :

Ընձն իմ 'ի ձեռս քո է յամենայն ժամ ,
 և զօրէնս քո ես ոչ մոռացայ :

Եղին ինձ մեղաւորք որդայթ , 'ի պատ-
 ուիրանաց քոց ես ոչ մոլորեցայ :

Չստանդեցի զվիայութիւնս քո յաւիտ-
 եան , զի ցնծութիւն է սրտի իմոյ :

Խնարհեցուցի զսիրտ իմ առնել զարդա-
 րութիս քո յաւիտեան , վասն հատուցման :

() անօրէնս ատեցի , և զօրէնս քո սիրեցի :

() զնական և վրկիչ իմ ես դու , և ես 'ի բանս քո յուսացայ :

Ի բայ եղերուք յինն չարք , և քննեցից զպատուիրանս աստուծոյ իմոյ :

() զնեան ինձ ըստ բանի քում և կեցն զիս , և մի յամօթ առներ զիս 'ի յուսոյ իմմէ :

() զնեան ինձ և սպրեցն զիս , և խորհեցայց յիրաւունս քո յամենայն ժամ :

Ընարդեցեր զամենեւեան որք ապստամբք եղեն յարդարութեանց քոց . զի անիրաւութեամբ էին խորհուրդք նոցա :

Յանցաւ որս համարեցայ զամենայն մեղաւորս երկրի , վասն այսորիկ սիրեցի զպատուիրանս քո :

Ինեռեան ընդ երկիւղ քո զմարմին իմ , զի 'ի դատաստանաց քոց երկեաց յոյժ :

Տունք . կի՛ն .
 Կրօն / Յօր ————— Ի որպէս
 Աւելուիաւ

Ըրարի իրաւունս և արդարութիւն , մի մասներ զիս 'ի ձեռս նեղչաց իմոց :

Բնկալ զծառայս քո ՚ի բարի , զի մի ամ-
բարտաւանք զգուեցեն զխո :

Ապասեցին աչք իմ փրկութեան քում տը ,
և բանից արդարութեան քո :

Արա՛ ընդ ծառայի քում տէր ըստ ողորմու-
թեան քում , զարդարութիւնս քո ուսո՞
ինձ :

Օտառայ քո եմ ես , իմաստունն արա զխո ,
և ծանեայց զվկայութիւնս քո :

Օամ է պաշտել զտէր , խափանեցին զօ-
րէնս քո :

Այսորիկ սիրեցի զպատուիրանս քո ,
քան զամենայն ոսկի և զտպազինոն :

Ամենայն պատուիրանք քո յաջողեցան ինձ ,
զի ատեցի ես զճանապարհս չարաց :

Աքանչելի են վկայութիւնք քո , վասն
այսորիկ սիրեաց զնոսս անձն իմ :

Յայտնութիւն բանից քոց լուսաւորէ և ի-
մաստունն առնէ զտղայս :

Օբերան իմ բացի և առի զհոգի , ՚ի
պատուիրանս քո փափաղեաց անձն իմ :

Այեւա՛ առ իս և ողորմեա՛ ինձ , ըստ իրա-
ւունս սիրողաց անուան քո :

Օճանապարհս իմ ուղիղ արա ինձ ըստ

բանի քում , և մի տիրեացեն ինձ ամե-
նայն մեղք:

Փրկեա՛ զիս 'ի զրպարաութենէ մարդկան ,
և պահեցից զպատուիրանս քո:

Երեւցո՛ զերեսս քո 'ի ծառայս քո , և ուսո՛
ինձ զարդարութիւնս քո:

Ստակք ջուրց իջին յաչաց խնոց , զի ոչ
պահեցին զօրէնս քո:

Նորդար ես դու տէր , և ուղիղ են դա-
տաստանք քո:

Պատուիրեցեր զարդարութիւն վկայու-
թեանց քոց , և ճշմարիտ են յոյժ:

Մաշեաց զիս նախանձ քո , զի՛ մոռացան
զբանս քո թշնամիք իմ:

Նտրեալ է բան քո յոյժ , և ծառայ քո
սիրեաց զսա:

Մանուկ եմ ես և սրհամարհեալ , և զար-
դարութիւնս քո ես ոչ մոռացայ:

Երդարութիւն քո արդարութիւն յաւի-
տանից , և օրէնք քո ճշմարիտ են:

Նեղութիւնք և վիշտք դաին զիս , և պատ-
ուիրանք քո խօսք իմ էին:

Նորդարութեամբ են վկայութիւնք քո յա-
ւիտեան . իմաստուն արա և կեցո՛ զիս:

Վարդացի առ քեզ բողոքով սրաիւ խմով ,
 լուր ինձ տէր զի զարդարութիւնս քո
 խնդրեցի :

Ղաղակեցի առ քեզ և փրկեան զիս , և
 պահեցից զվկայութիւնս քո :

Կանխեցի տարածամու՝ աղաղակեցի , և ես
 ՚ի բանս քո յուսացայ :

Կանխեցին աչք իմ առաւօտու , ՚ի խօսիլ
 ինձ զբանս քո :

Չայնի իմում լուր տէր ըստ ողորմութեան
 քում , և յիրաւունս քո կեցն զիս :

Սերձեցուցին յիս հալածիչք իմ զանօրէ-
 նութիւնս , զի յօրինաց քոց հեռի եղէն :

Սերձ ես դու տէր , և ամենայն պատ-
 ուիրանք քո ճշմարիտ են :

Իսկզբանէ ծանեաց ՚ի վկայութեանց քոց ,
 զի յաւիտեան հաստատեցեր զնոսա :

Տես զխոնարհութիւն իմ և փրկեան զիս ,
 զի զօրէնս քո ես ոչ մտացայ :

Իատեան զդատատանս իմ և փրկեան զիս ,
 և ըստ բանի քում կեցն զիս :

Հեռի է ՚ի մեղաւորաց փրկութիւն , զի
 զիրաւունս քո ոչ պահեցին :

Վթութիւնք քո բազում են տէր , և ըստ

իրաւանց քոց կեցն՝ զիս
 Բազում են որք հալածեն և նեղեն զիս ,
 'ի վկայութեանց քոց ես ոչ խոտորեցայ :
 Հայէի յանազորոյնս՝ և մաշէի , զի զպատու-
 ուիրանս քո ոչ պահեցին :

Տես զի զպատուիրանս քո սիրեցի , տէր
 ողորմութեամբ քո կեցն՝ զիս :

Սկիզբն բանից քոց ճշմարտութիւն է , յա-
 ւիտեան են ամենայն իրաւունք արդար-
 ութեան քո :

Նշխանք հալածեցին զիս 'ի նանիր , և 'ի
 բանից քոց երկեաւ սիրտ իմ :

Յնծացայ ես 'ի բանս քո , որպէս այն որ
 դտանէ աւար բազում :

Օ մեղս ատեցի և անարգեցի , և զօրէնս
 քո սիրեցի :

Լօթն անգամ յաւուր օրհնեցից զքեզ ,
 վասն իրաւանց և արդարութեան քո :

Խաղաղութիւն բազում է այնոցիկ՝ ոյք
 սիրեն զօրէնս քո , և ոչ գոյ 'ի նոսա դայ-
 ւանդութիւնս :

Սպասեցի փրկութեան քում տէր , և ըզ-
 պատուիրանս քո սիրեցի :

Պահեաց անձն իմ զվկայութիւնս քո , և

սիրեաց զնոսա յոյժ:

Պահեցից զպատուիրանս և զվկայութիւնս
քո, զի ամենայն ճանապարհք իմ առաջի
քո են:

Սերձեսցին խնդրուածք իմ առաջի քո
տէր, ըստ բանի քում իմաստունն արա զիս:

Ստցեն աղօթք իմ առաջի քո տէր, և
բանիւ քո փրկեան զիս:

Բղխեսցեն շրթունք իմ զօրհնութիւնս քո,
յորժամ ուսուցես ինձ զարդարութիս քո:

Խօսեսցի լեզու իմ զբանս քո, զի ամե-
նայն պատուիրանք քո արդարութեամբ են:

Լղիցի ձեռն քո ՚ի կեցուցանել զիս, զի
զպատուիրանս քո ընտրեցի:

Յանկացայ փրկութեան քում տէր, և օ-
րէնք քո խօսք իմ էին:

Կեցցէ անձն իմ, օրհնեսցէ զբեզ, և իրա-
ւունք քո օգնեսցեն ինձ:

Սողորեցայ ես որպէս զոչխար կորուսեալ,
խնդրեան զճառայս քո՝ զի զպատուիրանս
քո ես ոչ մոռացայ:

Տունք . ԾՁ:

Սանոնս Գորգայս . Է: Սաղմոս . ԺԳ:

Տունս . յԿ:



ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ԵՍՍՏԵԱՏ ԿԱՅԾԱԿՆԱՄԱՐՈՒՄ
ՍՈՒՐԲ ՄԱՐԳԱՐԷՒՆ

Եսայեայ • ԽԻ՜:

() Բհնեցէք զաստուած յօրհնութիւն նոր ,
զի իշխանութիւն նորա ՚ի բարձունա փա-
ռաւորի :

Լա անուն նորա փառաւորեալ է , ՚ի ծա-
գաց մինչև ՚ի ծագս երկրի :

Ոյք իջանէին ՚ի ծով նաւուք , կղզիք և
ամենայն բնակիչք նոցա ընդ նոսա :

Ուրախ եղիցի անապատն և ամենայն բնա-
կիչք իւր , ուրախ եղիցին բանակք և բակք
կեդարու , և ուրախ եղիցին բնակիչք
միմին :

Ի գլխոց լեռանց գոչեցեն , ապցեն ըզ-
փառս աստուծոյ . և զքաջութիւն նորա
կղզիք պատմեցեն :

Տէր աստուած զօրութեանց դիմեալ գայ
զարթուցանել զպատերազմ , յարուցա-
նել զնախանձ , փող հարկանել և գոչել ՚ի
մերայ թշնամեաց իւրոց զօրութիւն բազմաւ :

Ուրախ եղիցին երկինք ՚ի վերուստ , և
ամպք ցողեցեն զարդարութիւն :
Բղխեացէ երկիր զողորմութիւն և զարդա-
րութիւն՝ առ հասարակ բղխեացէ :

ԱՂՕԹՔ ՅՈՒՆԱՆՈՒ ՄԱՐԳԱՐԷԻՆ

Ի նեղութեան խնում ես առ տէր կարդա-
ցի , և լուաւ աստուած յանդնդոց դժո-
խոց աղաղակի խնում :

Դուք տէր ձայնի խնում՝ զի ընկեցեր զիս
՚ի խորս ծովու , և շրջանք գետոց պաշա-
րեցին զիս :

Վճենայն զբօսանք քո և ալիք քո անցին ՚ի
վերայ իմ , և ասացի թէ՛ մերժեցայ ուրեմն
յերեսաց աչաց քոց :

Վրդ՝ իցէ՞ թէ՛ յաւելից հայիլ ՚ի տաճար
սուրբ քո , զի հեղան զինե ջուրք մինչև
յանձն իմ , և անդունդք անհնարինք պա-
շարեցին զիս :

Կմուտ գլուխ իմ ընդ փապարս լերանց ,
իջի ես ՚ի խորս երկրի , և տեսի զնիգս
նորա , զի էին որպէս աղիք յաւխտենից :

Եւ ելցեն յապականութենէ կեանք իմ:
 Մ. քեզ տէր աստուած իմ՝ ՚ի նուազիլ
 անձին իմոյ կարդացի, և զքեզ տէր յի-
 շեցի, և մտցեն աղօթք իմ ՚ի տաճար
 սուրբ քո:

Օ ի ոյք պահէին զունայնութիւն և զսր-
 տութիւն, յողորմութենէ իւրեանց մեր-
 ժեցան:

Մ. Ես ՚ի ձայն օրհնութեան խոստովան
 եղէց քեզ, մատուցից պատարագս ան,
 և կատարեցից զուխտ իմ ՚ի փրկութեան:
 Փառք հօր և որդւոյ և:

ՄԱՂԹԱՆԻ


Եկեացեն աղօթք մեր ՚ի տաճար սուրբ քո .
 խոնարհեացի ունկն քո ՚ի խնդրուածս մեր:
 Սարդասէր տէր՝ վասն սր:

Չբարոզն և զաղօթս, ՚ի վերջն Մի նախանձիք
 կանոնին գացես ՚ի 124. երեսն:

Handwritten text in a rectangular box, possibly a signature or date, written in a cursive script.



Handwritten text in a cursive script, likely a date or reference number, located on the left side of the page. The text is written in dark ink on a light-colored paper fragment.





ՄԱՂՄՈՍ • ՀԺԹ

Օրհնութիւնք Աստիճանաց :

Ի նեղութեան իմում ես առ տէր կար-
դացի , և լուաւ ինձ , տէր փրկեաց
զանձն իմ 'ի շրթանց նենգաւորաց և 'ի
լեզուէ չարէ :

Օ 'ի տացի քեզ կամ զի՛նչ յաւելցի՝ լե-
զու նենգաւոր :

Արպէս նետք հզօրի , զի մխտալ են կայ-
ծականքք կաղնոյ :

Ս այ ինձ՝ զի ընդ երկար եղև պանդրիս-
տութիւն իմ , և բնակեցայ ես 'ի վրանս
կեդարու :

Բազում անգամ բնակեցաւ անձն իմ ընդ
այնոսիկ , ոչք ատէ՛ին զողջոյն :

Ես էի խաղաղարար , յորժամ խօսէի
մարտնչէ՛ին ընդ իս :

Տունք • 4 :

ՍԱԼՄՈՍ · ՃԻ

Օրհնութիւնք աստիճանաց:

Համբարձի դաչս իմ 'ի լերինս , ուստի
եկեացէ ինձ օգնութիւն:

Օգնութիւն ինձ 'ի տեառնէ եկեացէ , որ
արար զերկինս և զերկիր:

Մի տար 'ի սասանութիւն զոտն քո , և
մի ննջեացէ պահասպան քո:

Որպէս ոչ ննջէ և ոչ 'ի քուն երթայ պա-
հասպանն խորայելի:

Տէր պահեացէ զքեզ , և տէր ընկալցի
աջոյ ձեռամբն իւրով:

Երեգակն 'ի տուէ քեզ մի մեղիցէ , և
մի լուսինն 'ի գիշերի:

Տէր պահեացէ զքեզ յամենայն չարէ ,
պահեացէ տէր զանձն քո:

Տէր պահեացէ զմուտ և զել քո՝ յայսմ
հետէ մինչև յաւիտեան:

Տունք · Ը:

ՍԱԼՄՈՍ · ՃԻՅ

Օրհնութիւնք աստիճանաց:

† Աւրախ եղէ ևս ոչք ասէին ցիս , 'ի տուն
տեառն երթիցուք մեք:

Հասեալ կային ոտք մեր առ դրունս քո
Երուսաղէմ:

Օ Երուսաղէմ շինեալ որպէս քաղաք, և
բնակութիւն իւր շուրջ զնովաւ:

Ընդ ելանէին ազգք ազգք տեառն, ՚ի
վկայութիւն խրայէլի խոստովան ընել ան-
ուան տեառն:

Ընդ արկեալ են աթոռք դատաստանի,
աթոռս արկեալ են ՚ի տան դաւթի:

Հարցէք զողջունէ Երուսաղէմի, և զշի-
նութենէ ոյք սիրէք զտէր:

Լոյիցի խաղաղութիւն ՚ի զօրութե՛ք քում,
և շինութիւն յաշտարակս յամուրս քո:

Վասն եղբարց և ընկերաց իմոց խօսեցայ
զխաղաղութիւն, վասն քոյ և վասն տան
տեառն աստուծոյ մերոյ խնդրեցայք զբա-
րութիւն ՚ի քէն:

Տունք. Ը:

ՍՍՂՄՈՍ. ՃԻԲ

Օրհնութիւնք աստուծանաց:

Ը. քեզ տէր համբարձի զաչս իմ, որ բը-
նակեալդ ես ՚ի յերկինս:

Որպէս աչք ծառայի ՚ի ձեռն տեառն իւ-

րոյ, և որպէս աչք աղախնոյ 'ի ձեռն տիկ-
նոջ իւրոյ:

Այնպէս են աչք մեր առքեզ տէր աստ-
ուած մեր, մինչև ողորմեսցիս 'ի վերայ մեր:
Ողորմեան մեզ տէր ողորմեան մեզ, զի բա-
զում լցաք արհամարհանօք:

Աս առաւել լցան անձինք մեր նախա-
տանօք, որք նախատէին զմեզ արհամար-
հանօք ամբարտաւանից:

Տունք. Ե:

ՍԱՂՄՈՍ. ՃԻԳ

Օրհնութիւնք աստիճանաց:

Եթէ ոչ տէր էր առ մեզ, ասասցէ իս-
րայել, եթէ ոչ տէր էր առ մեզ:

Ինչ յառնել մարդկան 'ի վերայ մեր, կեն-
դանւոյն կամեցան կլանել զմեզ:

Ի բարկանալ սրտմտութեամբ նոցա 'ի վե-
րայ մեր, ապա և ջուրք ուրեմն ընկզմե-
ցին զմեզ:

Ինչ ուղիս անցին անձինք մեր, անցին
անձինք մեր ընդ ուղիս անդադարս:

() Բհնեալ է տէր, որ ոչ ետ զմեզ յորս
ատամանց նոցա:

Մինչինք մեր ապրեցան որպէս ճնճղուկք՝
յորողայթէ որսողաց:

Որողայթք նոցա փշրեցան , և մեք ապ-
րեցաք:

Օգնութիւն է մեզ յանուանէ տեառն ,
որ արար զերկինս և զերկիր:

Տունք . Ը :

ՍԱՂՄՈՍ . ՃԵԴ

Օրհնութիւնք աստիճանաց:

Մ յուսայ 'ի տէր որպէս լեառն սիօն , մի
ասանեացի յաւիտեան՝ որ բնակեալն է
յերուսաղէմ:

Երինք շուրջ են զնախա , տէր շուրջ է
զժողովրդեամբ իւրով՝ յայսմ հեռէ մին-
չև յաւիտեան:

Մէ թողու տէր զգաւազան մեղաւորաց 'ի
փճակս արդարոց , և արդարք մի ձգես-
ցեն զձեռս իւրեանց յանօրէնութիւն:
Բարի առնէ տէր բարեաց , և այնոցիկ
ոչք ուղիղ են սրտիւք:

Իսկ զթիւրեալն 'ի յափշտակութիւն ,
տանի զնոսա տէր ընդ այնոսիկ ոչք գործեն

զանօրէնութիւն . խաղաղութիւնն ՚ի վերայ
խորայէլի :

Տունք . է : Գորդայս . Խ :

ՍԱԼՄՈՍ . ձԻԷ :

Օրհնութիւնք աստիճանաց :

Ի դարձուցանել տեառն զգերութիւն սի-
օնի , և եղաք մեք մխիթարեալք :

Յայնժամ լցան բերանք մեր խնդութիւն ,
և լեզուք մեր ցնծութեամբ :

Յայնժամ ասացեն ՚ի հեթանոսս , մեծ
արար տէր զառնելն իւր ընդ նոսս , մեծ
արար տէր զառնելն իւր ընդ մեզ . և մեք
եղաք բերկրեալք :

Դարձն տէր զգերութիւնս մեր որպէս
զուղիս ՚ի հարաւոյ , ոչք վարէին արտա-
ուօք , ցնծութեամբ հնձեցեն :

Լրթալով երթային և լային , ոչք բարձեալ
տանէին զսերմանիս իւրեանց :

Դալով եկեցցեն և ցնծացցեն , ոչք առեալ
բերիցեն զորայս իւրեանց :

Տունք . Կ :

ՍԱՂԾՈՍ • ՃԻԶ

Օրհնութիւնք աստիճանաց:

Լիթէ՛ հչ տէր շինէ զտունն , 'ի նանիր վաս-
տակին շինողք նորա:

Լիթէ՛ հչ տէր պահէ զքաղաքն , ընդու-
նայն տքնին պահապանք նորա:

Ի նանիր է ձեզ յառնելն կանխաւ . արդ-
արիք՝ մինչև էք ննջեցեալք , ոչք ուտէք
զհաց ցաւոց:

Ի ժամանակի որպէս տացի քուն սիրելեաց
իւրոց . ժառանգութիւն առն՝ որդիք են ,
որոց վարձք իւր են , այն է պատու որո-
վայնի իւրոց:

Որպէս նետք 'ի ձեռս հզօրի . այնպէս են
և որդիքն թօթափելոց:

Երանի՛ որ ելից զցանկութիւն իւր 'ի նո-
ցանէ . մի ամաչեացեն՝ յորժամ խօսես-
ցին թշնամիք նոցա ընդ նոսա ազրանն:

Տունք . Կ:

ՍԱՂԾՈՍ • ՃԻԵ

Օրհնութիւնք աստիճանաց:

Երանի՛ ամենեցուն ոչք երկնչին 'ի տեառ-
նէ , և զնան 'ի ճանապարհս նորա:

Օ վաստակս ձեռաց քոց կերիցես, երանի
է քեզ, և բարի եղիցի:

Կին քո որպէս այգի վայելուչ յանկիւնս
տան քո. որդիք քո որպէս նորասունկ ձի-
թենւոյ շուրջ զսեղանով քո:

Եւ յապէս օրհնեսցի ամենայն մարդ՝ որ եր-
կնչի ՚ի տեսանէ. օրհնեսցէ զքեզ տէր ՚ի
սիօնէ:

Եւ տեսցես դու զբարութիւն երուսաղէ-
մի՝ զամենայն աւուրս կենաց քոց:

Տեսցես դու զորդիս որդւոց քոց, խաղա-
ղութիւն ՚ի վերայ խորայէլի:

Տունք . 4:

ՍԱՂՄՈՍ . ՃԻԸ

Օրհնութիւնք աստիճանաց:

Բազում անգամ մարտեան ընդ իս ՚ի ման-
կութենէ իմմէ, ասասցէ խորայէլ:

Բազում անգամ մարտեան ընդ իս ՚ի ման-
կութենէ իմմէ, և ինձ ոչ յաղթեցին:

Օ թիկունս իմ հարին մեղաւորք, ընդ
երկար արարին զանօրէնութիւնս իւրեանց:

† Տէր արգար է, և խորտակէ զուրն մեղա-
ւորաց:

Ամաչեացեն և յետս դարձցին ամենեքեան՝
 ոչք ատեն զսփօն:

Լիցին նորա որպէս խոտ տանեաց , որ
 մինչև ՚ի բուռն եկեալ չորացաւ:

Աստի ոչ ելից զբուռն իւր հնձօղն , և
 ոչ զգիրիս իւր որ զորայն ժողովէր:

Այ սասցին ամենեքեան ոչք անցանէին
 առ նորք , թէ օրհնութիւն տեառն ընդ
 ձեզ , և օրհնեցաք զձեզ յանուանէ իմն:

Տունք . Ը:

ՍՍՂՄՈՍ . ՃԻԹ

Օրհնութիւնք աստիճանաց:

Ի խորոց կարդացի առ քեզ տէր , տէր լուր
 ձայնի իմուամ:

Լիցին ականջք քո ՚ի լսել զձայն աղօ-
 թից իմոց:

Թէ զանօրէնութիւնս իմ քննես տէր տէր ,
 իսկ ո՞ կարէ կալ առաջի քո , զի ՚ի քէն է
 քաւութիւնս:

Այ ասն անուան քո համբերի տէր , համ-
 բեր անձն իմ բանի քում , յուսացաւ
 անձն իմ ՚ի տէր:

Ի պահէ առաւօտու մինչև յերեկոյ , ՚ի պա-

Հէ առաւօտու յուսացաւ խորայէլ ՚ի տէր
 ՚ի տեառնէ է ողորմութիւն բազում , ՚ի
 նմանէ է փրկութիւն , և նա փրկեաց զիս-
 րայէլ յամենայն նեղութեանց նորա :

Տունք . 51 :

ՍԱՂՄՈՍ . 81

Օրհնութիւնք աստիճանաց :

Տէր ոչ բարձրացաւ սիրտ իմ , և ոչ զբո-
 սան աչք իմ :

Ոչ գնացի ես ընդ մեծամեծս , և ոչ ընդ
 այնոսիկ ոչք սքանչելի եղեն քան զիս :

Իայց թէ խոնարհեցայ ես որպէս մանուկ
 սարտուցեալ ՚ի ստենէ մօր իւրոյ , և դարձ
 նորա անդրէն ՚ի նոյն :

Ըյլ թէ հպարտացուցի արդեօք զանձն
 իմ , այսպէս եղիցի հատուցումն անձին
 իմոյ , յուսացաւ խորայէլ ՚ի տէր յայսմ
 հեռէ մինչև յաւիտեան :

Տունք . 51 : Գորգայս . խ5 :

ՍՆՆՄՈՍ . ՃԼՅ

Երգ լուսոյ:

Յիշեա՛ տէր զգաւթիթ , և զամենայն հե-
զութիւն նորա:

Որպէս երգուաւ տեառն , և ուխտս եդ-
աստուծոյ յակոբայ:

Թէ՛ ոչ մտից ՚ի յարկս տան իմոյ , թէ՛ ե-
լից յանկողինս մահճաց իմոց:

Թէ՛ տաց քուն աչաց իմոց , կամ նինջ ար-
տեանաց իմոց , կամ հանգիստ իրանաց
իմոց . մինչև գտից զտեղի յարկի տեառն
աստուծոյ յակոբայ:

Ըհա լուսաք զնմանէ յեփրաթայ , և գտաք
զնա ՚ի դաշտս մայրեաց:

Մտցնաք ՚ի յարկս նորա , երկիրպագցուք
՚ի տեղւոջ ուր կացեալ են ոտք նորա:

Ըրի՛ տէր ՚ի հանգիստ քո , դու և տա-
պանակ կտակի սրբութեան քո:

Քահանայք քո զգեցցին զարդարութիւն ,
և սուրբք քո ցնծալով ցնծացեն:

Ո՛րան դաւթի սիրելոյ քո , մի՛ դարձու-
ցաներ զերեսս քո յօծելոյ քումս:

Երգուաւ տէր դաւթի ճշմարտութեամբ:

և ոչ ստեաց նմա , 'ի պաղոյ որովայնի նորա
նստուցանել յաթոռ նորա :

Թէ պահեսցեն որդիք քո զօրէնս իմ , և
զվկայութիւնս իմ զոր ուսուցից նոցա :

Որդիք նոցա նստցին յաւիտեանս յաւիտեանից յաթոռ քո :

Հաճեցաւ տէր ընդ սիօն , և ընտրեաց բնակիլ 'ի նմա . առէ՛ այս է հանգիստ իմ յաւիտեանս յաւիտեանից , 'ի սմա բնակեցայց զի հաճեցայ ընդ սա :

Օ այրիս սորա օրհներով օրհներցից , և զաղքատս սորա լցուցից հացիւ :

Երիցանց սորա զգեցուցից զփրկութիւն , և սուրբք սորա ցնծալով ցնծացեն :

Ընդ ծաղեցից զերջիւր 'ի դաւիթ , պատրաստ արարից զճրագ օծելոյ իմոյ :

Թշնամեաց նորա զգեցուցից զամօթ , այլ 'ի վերայ նորա ծաղկեցցի սրբութիւն իմ :

Տունք . ԺԷ :

ՍԱԼՄՈՍ . ՃԼԲ

Երգ լուսոյ :

(Օ) 'ի բարի կամ զի՞ վայելուչ , զի բնակին եղբարք 'ի միասին :

Որպէս իւղ զի իջանէ 'ի գլուխ և 'ի մօ-
րունն ահարօնի , և 'ի մօրուացն իջանէ 'ի
գրասպանս զգեստու նորա :

Որպէս ցօղ զի ցօղէ 'ի հերմօնէ 'ի վերայ
լերին սիօնի :

Տէր անդ պատրաստեաց զօրհնութիւն ,
և զկեանս յաւիտենից :

Տունք . 7 :

ՍՍՂԽՈՍ . ՃԼԴ

ԵՐԴ շուրջ :

Ըստ օրհնեցէք ամենայն ծառայք տեառն
զտէր , ո՛ր կայք 'ի տունն տեառն և 'ի գաւի-
թրս աստուծոյ մերոյ :

Ի զիշերի համբարձէք զձեռս ձեր 'ի սրբ-
ութիւն , և օրհնեցէք զտէր :

Օրհնեցէ զմեզ տէր 'ի սիօնէ , որ արար
զերկինս և զերկիր :

Տունք . 7 :

ՍՍՂԽՈՍ . ՃԼԴ

Աճլուխա :

Օրհնեցէք զանուն տեառն , օրհնեցէք
ծառայք տեառն զտէր , ո՛ր կայք 'ի տունն

տեառն , 'ի գաւթի թա աստուծոյ մերոյ :

Օրհնեցէք զտէր զի բարի է , սաղմոս
ասացէք անուան նորա զի քաղցր է :

Օ յակօր ընտրեաց իւր տէր , և զխարայ-
էլ ժառանգութիւն իւր :

Եւ ծանեաց զի մեծ է տէր , և տէր մեծ
է քան զամենայն կուռս :

Օ ամենայն զոր ինչ կամեցաւ և արար ինր ,
յերկինս և յերկրի 'ի ծով և յամենայն
խորս :

Հանէ զամպս 'ի ծագաց երկրի , զխայ-
լատակունս իւր յանձրես արար , և հա-
նէ զհողմ 'ի շտեմարանաց իւրոց :

Եւ հար զամենայն անդրանիկս եգիպտաց-
ւոց , 'ի մարդոյ մինչև յանասուն :

Եւ արեաց զնշանս և զարուեստս իւր 'ի մէջ
քո եգիպտոս , 'ի փարաւօն և յամենայն
զօրս իւր :

Եւ հար զազգս բազումս , և սպան զթա-
գաւորս հզօրս :

Օ սեհօն թագաւոր ամուրհացւոց , զովք
թագաւոր բասանու , և զամենայն թա-
գաւորութիւնս քանանացւոց :

Եւ զերկիր նոցա 'ի ժառանգութիւն :

Ճառանգութիւն խրայելի Ճողովորդեան
իւրոյ:

Տէր անուն քո յաւիտեան , տէր յիշա-
տակ քո ազգէ մինչև յազգ:

Դատէ տէր զՃողովորդս իւր , և ՚ի ծա-
ռայս իւր մխիթարի:

Կուռք հեթանոսաց ոսկի և արծաթ են ,
ձեռագործք են որդւոց մարդկան:

Իերան գոյ՝ և ոչ խօսին , աչք են՝ և ոչ
տեսանեն:

Իկանջք են՝ և ոչ լսեն , և ոչ գոյ շունջ
՚ի բերանս նոցա:

Ղման նոցա եղիցին ոյք արարին զնոսա ,
ամենեքեան ոյք յուսացեալ են ՚ի նոսա:

Տուն խրայելի օրհնեցէք զտէր . տուն
ահարօնի օրհնեցէք զտէր:

Տուն զևեայ օրհնեցէք զտէր . երկիւ-
ղածք տեառն օրհնեցէք զտէր:

() օրհնեալ տէր ՚ի սիօնէ , որ բնակեալն
է յերուսաղէմ:

Տունք . Ի . Գորգայս . ինք:

~~~~~

Կառն ի Յօրե որդւոյ:

Խոստովանն եղերուք տեառն , զի բարի է  
զի յաւիտեան է ողորմութիւն նորա :

Խոստովանն եղերուք աստուծոյն աստու-  
ծոց , զի յաւիտեան է ողորմութիւն նորա :

Խոստովանն եղերուք տեառն տերանց , զի  
յաւիտեան է ողորմութիւն նորա :

Արար սքանչելիս մեծամեծս միայն , զի  
յաւիտեան է ողորմութիւն նորա :

Օ երկինս արար իմաստութեամբ իւրով ,  
զի յաւիտեան է ող :

Հաստատեաց զերկիր ՚ի վերայ ջուրց , զի  
յաւիտեան է ող :

Արար զլուսաւորս մեծամեծս միայն , զի  
յաւիտեան է ող :

Օ արեգակն արար իշխանական տուրն-  
ջեան , զի յաւիտեան է ող :

Օ լուսին ե զաստեղս իշխանական գիշե-  
րոց , զի յաւիտեան է ող :

Եւհար զերկիրն ե գիպտացւոց անդրանկօք  
իւրովք հանդերձ , զի :

Եւ եհան զխրայէլ ՚ի միջոց նորա , զի յա-

- Էիտեանն է ողորմութիւն նորա :  
 Ի ձեռն բարձր և բազուկ հզօր , զի յա-  
 Էիտեանն է ողորմութիւն նորա :  
 Լիհերձ զժողն մեծ և բաժանեաց յերկուս  
 մասունս , զի յաւիտեանն է ողորմութի նի :  
 Լև անցոյց զխրայէլ ընդ մէջ նի , զի յա-  
 Էիտեանն է ողորմութիւն նորա :  
 Ի նկղմեաց զփարաւօն և զզօրս իւր ՚ի ծով  
 կարմիր , զի յաւիտեանն է ողորմութի նորա :  
 Լև եհան զժողովուրդ իւր յանապատ , զի  
 յաւիտեանն է ողորմութիւն նորա :  
 Լիհար զազգս մեծամեծս միայն , զի յա-  
 Էիտեանն է ողորմութիւն նորա :  
 Լև սպան զԹագաւորս հզօրս , զի յաւի-  
 տեանն է ողորմութիւն նորա :  
 Օ սեհօն Թագաւոր ամուրհացւոց , զի յա-  
 Էիտեանն է ողորմութիւն նորա :  
 Օ ուղգ Թագաւոր բասանու , զի յաւի-  
 տեանն է ողորմութիւն նորա :  
 Լատ զերկիր նոցա ՚ի ժառանգութիւն , զի  
 յաւիտեանն է ողորմութիւն նորա :  
 Ժառանգութիւն իարայէլի ծառայի իւ-  
 րոյ , զի յաւիտեանն է ողորմութիւն նորա :  
 Երկեաց զմեզ տէր ՚ի խոնարհութեան մե-

բում, զի յաւիտեան է ողորմութի նորա:  
 Լւ փրկեաց զմեզ 'ի ձեռաց Թշնամեաց  
 մերոց, զի յաւիտեան է ողորմութի նորա:  
 Ա տայ կերակուր ամենայն կենդանեաց,  
 զի յաւիտեան է ողորմութիւն նորա:  
 Խոստովանե եղերուք աստուծոյն երկնաւորի,  
 զի յաւիտեան է ողորմութիւն նորա:

Տունք . Ի Գ .

ՍԱՂԴՈՍ . ՃԼԶ

Սաղմոս Դաւթի . 'ի ձեռն երեմիայի . աննշան յեբ-  
 բայեցւոցն:

Ընդ գետս բարեւըացոց, անդ նստեալք և  
 լայաք . որպէս յիշեցաք մեք անդ զսիօն:  
 Ի մէջ ուռեաց նոցա կախեցաք զկտակա-  
 րանս մեր:

Ընդ հարցանելին գերիչք մեր զբանս օրհ-  
 նութեան, գերեվարք մեր ստիպելին ըզ-  
 մեզ և ասելին:

Օրհնեցէք մեզ յօրհնութենէն սիօնի .  
 իսկ զիարդ օրհնեսցուք զօրհնութիս տեա-  
 ւքն յերկիր օտար:

Ի՞նչ մոռացայց զքեզ երուսաղէմ, մո-  
 ռացի զիս աջ իմ:

Ացեցցի լեզու իմ 'ի քիմս իմ՝ թէ ոչ յի-  
շեցից զքեզ , թէ ոչ նախ նուագեցից ըզ-  
քեզ երուսաղէմ , սկիզբն ուրախութեան  
իմոյ :

Յիշեա՛ տէր զորդիան եղովմայ յաւուրսն  
երուսաղէմի :

Աբ ասէին՝ քակեցէ՛ք քակեցէ՛ք , մին-  
չև 'ի հիմն հասուցէ՛ք :

'Ղուստր բարեւացւոց թշուառական , ե-  
րանի՛ որ հատոյց զհատուցումն քո զոր դու-  
մեզ հատուցեր :

Երանի՛ որ կալաւ զմանկունս քո , և ե-  
հար զքարի :

Տունք . Դ :

ՍԱՆՄՈՍ . ՃԼԷ :

Սաղմոս դաւթի :

Խոստովան եղէց քեզ տէր բոլորով սրտիւ  
իմով , առաջի հրեշտակաց սաղմոս ասա-  
ցից քեզ :

Օ 'ի լուար զբանս բերանոյ իմոյ , երկիր-  
պագից 'ի տաճար սուրբ քո , և խոստո-  
վան եղէց անուան քում վան ողորմու-  
թեան և ճշմարտութեան քո :

Մեծ արարեր յամենայնի զանուն սուրբ  
քո . յորում աւուր կարգամ առքեղ  
վաղվաղակի լուր ինձ , և բազում արաս-  
ցես զօրութիւնս յանձն իմ :

Խոստովան եղիցին առքեղ ամենայն թա-  
ղաւորք երկրի , զի լուան զբանս բերա-  
նոյ քո , և օրհնեսցեն զճանապարհս քո :

Մեծ են փառք տեառն , բարձր է տէր՝  
զխոնարհս տեսանէ , և զբարձունս ՚ի հե-  
ռաստանէ ճանաչէ :

Թէ գնացից ես ՚ի մէջ ներդութեանց , կե-  
ցուցես զիս ՚ի բարկութենէ թշնամւոյն :  
Չգեցեր զձեռն քո՝ և փրկեաց զիս աջ  
քո , և տէր հատուցէ ընդ իմ :

Տէր ողորմութիւնքո յաւիտեան , զգործս  
ձեռաց քոց մի անտես առներ :

Տունք . Ը : Գորգայս . խնք :

ՍԱՂՄՈՍ . ԺԼԸ

Ի կատարած . Սաղմոս Գաւթի :

Տէր փորձեցեր զիս և ծանեար զիս , դու  
ծանեար զիստեղ իմ և զյառնեղ իմ :



Ի միտ առեր զխորհուրդս իմ 'ի հեռա-  
տանէ , զչաւիղս իմ և զվիճակս իմ դու  
քննեցեր , և զամենայն ճանապարհս իմ  
յառաջագոյն տեսեր , զի ոչ դոյ նենգու-  
թիւն 'ի լեզուի իմում :

Ահա դու տէր ծանեար զյետին իմ և  
զառաջին իմ , դու ստեղծեր զիս և եղեր  
զձեռն քո 'ի վերայ իմ :

Սքանչելի եղև գիտութիւն քո յինէն ,  
զօրացաւ և ոչ հանդարտեմ սմա :

Յո՞ երթայց ես յոգւոյ քումմէ , կամ յե-  
րեսաց քոց ես յո՞ փախեայց :

Թէ երանեմ յերկինս՝ դու անդ ես , և  
թէ իջանեմ 'ի դժոխս՝ և անդ մօտ ես :

Թէ առից զթևս իմ ընդ առաւօտս , և  
բնակեցայց յեզերս ծովու :

Սակայն և անդ ձեռն քո առաջնորդեցէ  
ինձ , և աջ քո ընկալցի զիս :

Սացի խաւար ուրեմն արդեօք ծած-  
կեաց զիս , կամ զիշեր փոխանակ լուսոյ  
փափկութեան իմոյ :

Խաւարն՝ 'ի քեզ ոչ խաւարեցի , և գի-  
շերն որպէս տիւ լուսաւոր եղիցի , և խա-  
ւար նորա որպէս զլոյս նորա :

Դու ստացար զերթկամունս իմ , և ընկա-  
լար զիս յորովայնէ մօր իմոյ :

Խոստովան եղէց քեզ տէր զի ահեղ և բա-  
քանչեղի ես . սքանչեղի են դործք քո , և  
անձն իմ սիրեաց յոյժ :

Ո՛ր թագեալ ոսկր իմ 'ի քէն զոր արա-  
րեր 'ի ծածուկ , և կար զօրութեան իմոյ  
ընդ ստորինս երկրի :

Օ անդործս իմ տեսին աչք քո , և 'ի գիրս  
քո ամենեքեան գրեցան :

Ի տուէ մոլորեցան , և սչ ոք էր որ ա-  
ռաջնորդէր նոցա :

Ինձ յոյժ մեծարու եղեն բարեկամք քո  
աստուած , և յոյժ զօրացան իշխանք նոց :  
Թուեցի զնոսա և քան զաւազ բազմա-  
ցան , զարթեաց և արդ ընդ քեզ եմ :

Թէ սպանանես զմեղաւորս աստուած ,  
անք արեան 'ի բաց եղերուք յինէն :

Ի հակառակութիւն և 'ի նախանձ , առ-  
ցեն 'ի նանիր զքաղաքս քո :

Օ ատելիս քո տէր ատեցի , և 'ի վերա  
թշնամեաց քոց մաշեցայ :

Յատելութիւն կատարեալ ատեցի զնոսա ,  
և եղեն ինձ թշնամիք :

Փորձեա՛ն զիս աստուած և ծանխի՛ր զսիրտ  
 իմ , քննեա՛ն զիս և ծանխի՛ր զչաւիղս իմ . և  
 տէ՛ս թէ՛ իցեն անօրէ՛նու թիւնք ՚ի ճանա-  
 ւարհս իմ , և առաջնորդեա՛ն ինձ ՚ի ճա-  
 նապարհս քո յաւիտենից :

Տունք . իր :

ՍԱՂՄՈՍ . ՃԼԹ

Ի կատարած . Սաղմոս դաւթի :

Ապրեցո՛ն զիս տէր ՚ի մարդոյ չարէ , յառ-  
 նէ անիրաւէ փրկեա՛ն զիս :

Խորհեցան զանօրէ՛նու թիւն ՚ի սիրտս իւր-  
 եանց , զօր ամենայն պատրաստեցան ՚ի պա-  
 տերազմ :

Արեցին զլեզուս իւրեանց որպէ՛ս զօձի , և  
 թոյնք ի թից ՚ի ներքոյ շրթանց նոցա :

Պահեա՛ն զիս տէր ՚ի ձեռաց մեղաւորի , և  
 ՚ի մարդոյ չարէ փրկեա՛ն զիս :

Խորհեցան խափանել զգնացս իմ , թա-  
 դուցին ամբարտաւանք որոգայթ ինձ :

Արս ձղեցին որոգայթ ոտից իմոց , շուրջ  
 դաւղօք իմովք եղին ինձ զգայթակղուի :

Ասացի տէր աստուած իմ ես դու , ունկն  
 դիր տէր ձայնի աղօթից իմոց :

Տէր տէր զօրութիւն փրկութեան իմոյ ,  
 հովանի գլխոյ իմոյ յաւուր պատերազմի :  
 Մի մատներ զիս տէր 'ի ցանկութիւն մե-  
 ղաւորաց , ոչք խորհեցան վասն իմ՝ մի  
 ընդ վայր հարկաներ զիս :

Օ 'ի մի երբէք բարձրացին , և խոր-  
 հուրդք նոցա մի կատարեսցին . վախճան  
 կատարածի նոցա վաստակ ջրթանց իւր-  
 եանց ծածկեսցէ զնոսա :

Մրկցես 'ի վերայ նոցա զկայծակունս հը-  
 րոյ , և կործանեսցես զնոսա . 'ի տաաւ-  
 պանաց մի կարացեն կեալ :

Մարդոյ լեզուանոյ մի յաջողեսցի 'ի վե-  
 րոյ երկրի . զայր մեղաւոր չարիք իւր որ-  
 սացեն 'ի կորուստ :

Չանեայ զի առնես տէր դատաստան աղ-  
 քատի , և իրաւունս անանկի :

Մրդարք գոհացին զանուանէ քումմէ , և  
 բնակեսցին ուղիղք առաջի երեսաց քոց :

ՍԱՂՄՈՍ . ՃԵ

Սաղմոս դաւթի :

Տէր կարդացի առ քեզ և լուր ինձ , նայեա՛նք ՚ի ձայն աղօթից իմոց ՚ի կարդալ իմում առ քեզ :

Ուղիղ եղիցին աղօթք իմ որպէս խուճի առաջիքս տէր . համբարձումն ձեռաց իմոց պատարագ երեկոյի :

Ղի՛ր տէր պահապան բերանոյ իմոյ . և դուռն ամուր շրթանց իմոց , զի մի խտորեսցի սիրտ իմ բանիւ չարութեան :

Ի պատճառել զպատճառս մեղաց ընդ մարդս՝ ոչք գործեն զանօրէնութիւն . և ոչ եղէց կցորդ ընտրելոց նոցա :

Խրատեսցէ զիս արդարն ողորմութեամբ՝ և յանդիման արացէ , իւղ մեղաւորի մի օժցէ զգլուխ իմ , այլ աղօթք իմ ՚ի կամրս նորա :

Արդելան մերձ առ վիմին դատաւորք նոցա . լուիցեն բանից իմոց և քաղցրասցին : Որպէս թանձրութիւն հողոյ՝ զի սփռեալ է ՚ի վերայ երկրի . ցրուեսցին ոսկերք նոցա մերձ ՚ի դժոխս :

Ա. քեզ տէր տէր են աչք իմ , 'ի քեզ  
յուսացայ՝ մի հաներ զհոգի յինէն :

Պահեան զիս յորոգայթէ որ թագուցաւ  
ինձ , 'ի դայթակղութենէ գործողին զա-  
նորէնութիւն :

Անկցին 'ի ցանցս նորա մեղաւորք , միայն  
եմ ես մինչև անցից :

Տունք . Գ :

ՍԱՂՄՈՍ . ՃԽԱ

Իմաստութիւն գաւթի . Աղօթք , 'ի ժամանակի՝ զի  
էր նա յայրի անդ :

Չայնիւ իմով ես առ տէր կարդացի , ձայ-  
նիւ իմով զտէր աղաչեցի :

Սիռեցից առաջի տեսան զաղօթս իմ , և  
զնեղութիւնս իմ առաջի նորա պատմեցից :

Ի նուաղիլ յինէն հոգւոյ իմոյ , դու տէր  
ծանեար զչաւիղս իմ , 'ի ճանապարհ յոր  
և գնայի , թագուցաւ ինձ որոգայթ :

Հայէի յաջմէ և տեսանէի , և ոչ որ ճա-  
նաչէր զիս . կորեաւ յինէն փախուստ իմ .

և ոչ գտաւ ինդրող անձին իմոյ :

Աղաղակեցի առ քեզ տէր և ասացի , դու  
ես յոյս և բաժին իմ յերկրին կենդանեաց :

Նայեա՛ տէր յաղօթս իմ զի ես խոնարհ  
 եղէ՛ յոյժ . ապրեցն՝ զիս 'ի հալածչաց ի-  
 մոց , զի հզօրք եղին քան զիս :

Տէր հա՛ն 'ի բանտէ զանձն իմ , գոհանամ  
 զանուանէ՛ քու մտէ :

Եւ քեզ սպասեն արդարք՝ մինչև հա-  
 տուսցես :

Տունք . Ը : Գորղայս . ծի :

ՍՍՆՄՈՍ . ՃԻԲ

Սաղմոս Գաւթի , 'ի ժամանակի զի հալածէր զնա  
 արխաղղմ որդի նորա :

Տէր ընդ աղօթից իմոց , սենկն գիր խըն-  
 դրուածաց իմոց ճշմարտութեամբ քօլ :

Եւր ինձ արդարութեամբ քօլ , և մի  
 մտաներ 'ի դատաստան ընդ ծառայի քում ,  
 զի ոչ արդարանայ առաջի քո ամենայն  
 կենդանի :

Հալածեաց թշնամին զանձն իմ , խոնարհ  
 արար յերկիր զկեանս իմ . և նստոյց զիս  
 'ի խաւարի որպէս մեռեալ յաւխտենից :  
 Չանձրացաւ յիս հողի իմ , և սիրտ իմ

խառնեցաւ յիս:

Յիշեցի զաւուրսն զառաջինս , խորհեցայ  
յամենայն գործս քո , յարարածս ձեռաց  
քոց խորհեցայ , և համբարձի առ քեզ  
զձեռս իմ:

Ենձն իմ որպէս երկիր ծարաւի է առ  
քեզ . վաղվաղակի լուր ինձ տէր՝ զի նուա  
ղեցաւ յինէն հոգի իմ:

Մի դարձուցաներ զերեսս քո յինէն ,  
նմանիցիմ այնոցիկ ոյք իջանենն ՚ի գուբ:

Ես ին արա ինձ առաւօտու զողորմու  
թիւնս քո , զի ես ՚ի քեզ տէր յուսացայ:  
Յոյց ինձ ճանապարհ յոր և գնացից , զի  
առ քեզ տէր համբարձի զանձն իմ:

Փրկեա՛ զիս ՚ի թշնամեաց իմոց տէր , զի  
զքեզ ապաւէն ինձ արարի:

Ուսո՛ ինձ առնել զկամս քո , զի դու ես  
աստուած իմ:

Հոգի քո բարի առաջնորդեցէ ինձ ՚ի  
յերկիր ուղիղ:

Ո՛րան անուան քո տէր կեցուցես զիս  
արդարութեամբ քով , հանցես ՚ի նեղու  
թենէ զանձն իմ:

Ողորմութեամբ քով սատակեա՛ զթշնամիս



իմ . և կորն զամենայն ներդիչս անձին ի-  
մոյ , զի ես ծառայ քո եմ :

Տունք . ԺԴ :

ՍԱՂՄՈՍ . ԺԽԴ

Ստղենս դաւթի . առ գողթաթ :

( ) Բհնեալ տէր աստուած իմ , որ ուսոյց  
զձեռս իմ ՚ի պատերազմ , և զմատունս  
+ իմ ՚ի ճակատամարտ :

Աղորմութիւն իմ և ապաւէն իմ , օգնա-  
կան իմ և փրկիչ իմ . ապաւէն իմ , և ես  
յուսամ ՚ի նա . ո՛հ հնազանդ առնէ զժո-  
ղովուրդս ընդ ինև :

Տէր՝ ո՞վ է մարդ զի յայանեցար դու նմա ,  
կամ որդի մարդոյ թէ համարիս ինչ զնա :  
Սարդ նանրոյ նմանեցաւ , և աւուրք  
նորա որպէս հովանի անցին :

Տէր խոնարհեցն զերկինս և էջ , մերձեան  
՚ի լերինս և ծխեացին :

Փայլեան զփայլատակունս քո և խռովեան բզ  
նոսա , առաքեան զնետս քո և ցրուեան  
զնոսա :

Մաքեան զձեռն քո ՚ի բարձանց և փրկեան

զիս 'ի ջուրց բաղմաց , և 'ի ձեռաց որդւոց  
օտարաց :

Արոց բերանք իւրեանց խօսեցան զնան-  
րութիւն , և աջ նոցա աջ է մեղաց :

Նստուած՝ յօրհնութիւն նոր օրհնեցից  
զքեզ , տանադեաւ սաղմոսարանիւ սաղ-  
մոս ասացից . քեզ :

Ա՛ տացէ զփրկութիւն թագաւորաց մե-  
րոց , որ փրկելոց իցէ զդաւիթ ծառայ  
իւր 'ի սրոյ չարէ :

Փրկեա՛ զիս՝ և ապրեցն՛ զիս 'ի ձեռաց որդ-  
ւոց օտարաց :

Արոց բերանք իւրեանց խօսեցան զնան-  
րութիւն , և աջ նոցա աջ է մեղաց :

Արոց ուստեքք իւրեանց որպէս նորատունկ  
հաստատուն են 'ի մանկութենէ իւրեանց .  
դստեքք նոցա զարդարեալ և պաճուճեալ  
'ի նմանութիւն տաճարի :

Շտեմարանք նոցա լի են և բղխեն 'ի մի-  
մեանս , խաշինք նոցա բաղմածինք են և  
բաղմանան 'ի զնացս իւրեանց , և ան-  
դեայք նոցա պարարտք են :

Ա՛ջ դոյ խրամատութիւն ցանկոյ նոցա ,  
և ո՛չ աղաղակ 'ի հրապարակս նոցա :

Արդ երանեցից ժողովրդեան որոյ այս  
այսպէս է . նա՛ երանի ժողովրդեան որոյ  
տէր աստուած է նոցա :

Տունք . ժգ :

ՍԱԼՄՈՍ . ճԽԳ

Օրհնութեանց Սաղմոս դաւթի :

Նարձք առնեմ զքեզ աստուած իմ և թա-  
գաւոր իմ , և օրհնեմ զանուն քո յաւիտ-  
եան և յաւիտեանս յաւիտենից :

Օ օրհանապազ օրհնեցից զքեզ , և գո-  
վեցից զանուն քո յաւիտեան և յաւիտ-  
եանս յաւիտենից :

Սեծ է տէր և օրհնեալ է յոյժ , և մե-  
ծութեան նորա ոչ գոյ չափ :

Ազգք և ազգք գովեցեն զգօրծս քո , և  
զգօրութիւնս քո պատմեցեն :

Օ մեծ վայելութիւն փառաց սրբութեան  
քո խօսեցին , և զսքանչելիս քո պատ-  
մեցեն :

Օ զօրութիւն անի քո ասացեն , և զմե-  
ծութիւնս քո պատմեցեն :

Օ յիշատակ բազում քաղցրութեան քո :

բղխեսցեն , և արդարութեամբ քո ցըն-  
ծասցեն :

Գթած ողորմած է տէր , երկայնամիտ և  
բազումողորմ :

Վաղցր է տէր առ ամենեւեան , և զը-  
թութիւն նորա ՚ի վերայ ամենայն արա-  
բածոց իւրոց :

Ի սատուան եղիցին առ քեզ տէր ամենայն  
գործք քո . և սուրբք քո օրհնեսցեն զքեզ :  
Օ փառս արքայութեան քո ասասցեն , և  
զգօրութիւնս քո պատմեսցեն :

Ճանաչել որդւոց մարդկան զգօրութիւնս  
քո , և զփառս մեծ վայելութեան արքայ-  
ութեան քո :

Վարքայութիւն քո արքայութիւն ամենայն  
յաւիտենից . և տէրութիւն քո ազգէ մին-  
չև յազգ :

Հաւատարիմ է տէր յամենայն բանս իւր ,  
և արդար է յամենայն գործս իւր :

Հաստատէ տէր զամենայն գայթակղեալս ,  
և կանգնէ զամենայն դլորեալս :

Մէք ամենեցուն ՚ի քեզ յուսան , և դու-  
տաս կերակուր նոցա ՚ի Տամու :

Տաս դու նոցա և կերակրին , բանաս ըզ-

ձեռն քո , և լցուցանես զամենեսեան  
քաղցրութեամբ կամօք քովք:

Երգար է տէր յամենայն ճանապարհս  
իւր , և սուրբ է յամենայն գործս իւր:

Մերձ է տէր առ ամենեսեան՝ ոչք կար-  
գան առ նա , առ ամենեսեան՝ ոչք կար-  
գան առ նա ճշմարտութեամբ:

Օ կամս երկիւզածաց իւրոց առնէ տէր ,  
աղօթից նոցա լսէ և կեցուցանէ զնոսա:

Պահէ տէր զամենեսեան ոչք սիրեն զնա ,  
և զամենայն մեղաւորս սատակէ տէր:

Օ օրհնութիւնս ան խօսեցի բերան իմ .  
օրհնեցի ան կենդանի զանուն սուրբ նի՛  
յաւիտեան , և յաւիտեանս յաւիտենից:

Տունք . ի՞նչ Գորդայս . ծի:

ՍԱԼՄՈՍ . ձԵՆ

Աէլուիս . անդեայ և զաքարիայ:

Օրհնեա՛ անձն իմ զտէր , օրհնեցից ըզ  
տէր ՚ի կեանս իմ , սաղմոս առացից աս-  
տուծոյ իմոյ՝ մինչև ետ ես:

Մի՛ յուսայք յիշխանս յորդիս մարդկան ,

Չի ոչ գոյ փրկութիւն ՚ի նոսաւ  
 Լիցէ հոգի ՚ի նոցանէ՝ և դարձցին անդ-  
 րէն ՚ի հող , և յայնմ աւուր կորիցեն ա-  
 մենայն խորհուրդք նոցաւ :

Երանի ազգի՝ որոյ տէր աստուած յակա-  
 քայ օգնական է նմա , և յոյս նորա ՚ի  
 տէր աստուած է :

Որ արար զերկինս և զերկիր , զԾով և զա-  
 մենայն որ է ՚ի նոսաւ :

Ո պահէ զճշմարտութիւն յաւիտեան , և  
 առնէ իրաւունս զգիւրցոյ :

Տայ հաց քաղցելոց , և արձակէ զկապ-  
 եալս տէր :

Տէր բանայ զաչս կուրաց , և կանգնէ ըզ-  
 գլորեալս տէր :

Տէր սիրէ զարդարս , տէր պահէ զպան-  
 դուխտս . զորքս և զայրիս ընդունի տէր ,  
 և զճանապարհս ամբարշտաց կորուսանէ :

Թագաւորեցէ տէր յաւիտեան , աստ-  
 ուած քո սիօն ազգէ մինչև յազգ :

## ՍԱՀՄՈՍ • ՃԻՁ

Աւելութիւն • անգեայ և զարբարիայ:

Օրհնեցէք զտէր՝ զի բարի է սաղմոս .  
աստուծոյ մերում քաղցր եղիցի օրհնու-  
թիւն:

Շինէ զերուսաղէմ տէր , և զցրուեալսն  
խորայելի ժողովէ:

Իժշկէ զբեկեալ սիրտս , և սպատէ զամե-  
նայն վերս նոցա:

Ո՞թուէ զբազմութիւն աստեղաց , և զա-  
մենեգեան զնոսա յանուանէ կոչէ:

Մեծ է տէր և մեծ է զօրութիւն նորա ,  
խմաստութեան նորա նչ գոյ բաւ:

Ի նդունի զհեզս տէր , և խոնարհ առնէ  
զամբարտաւանս մինչև յերկիր:

Օրհնեցէք զաստուած խոստովանութիւն ,  
սաղմոս ասացէք նմա օրհնութեամբ:

Ո զգեցոյց զերկինս ամայովք , և սպա-  
րաստ արար զանձրե իւր յերկիր:

Ի ուսոյց զխոտ ՚ի լերինս , և զդաշարի ՚ի  
ձառայութիւն մարդկան:

Ո տայ անասնոց կերակուր . ձաղուց աղ-  
աւուց ոյք կարդան առ նա:

Ո՛չ թէ ընդ զօրութիւնս ձիոյ կամեցաւ  
տէր , և ո՛չ ընդ իրանս առն հսկայի հա-  
ճեցաւ :

Այլ հաճեցաւ տէր ընդ երկիւղածս իւր ,  
և ընդ այնոսիկ ոյք յուսան յողորմութիւն  
նորա :

Տունք . ժբ :

ՍԱՂՄՈՍ . ձեկ :

Աէլուիս . անգեայ և զաբարիայ :

Գովեան երուսաղէմ զտէր :

Լւ օրհնեան զաստուած քո սիօն :

Օ ի զօրացոյց զնիգս դրանց քոց , և օրհ-  
նեաց զորդիս քո ՚ի քեզ :

Ո եղ զսահմանս քո ՚ի խաղաղութիւն ,  
պարարտութեամբ ցորենոյ լցոյց զքեզ :

Աաբէ զբան իւր յերկիր , վաղվաղ ըն-  
թանան պատգամք նորա :

Դնէ զձիւն որպէս զապ , և զմէզ որպէս  
փոշի ցանեաց :

Արկանէ զսառն որպէս պատառս , առա-  
ջի ցրտոյ նորա ո՞ կարէ կեալ :

Աաբէ զբան իւր և հայէ զնոսս , շնչես-  
ցեն հողմք և գնացեն ջուրք :



Պատմէ զբան իւր յակորայ , զարդարու-  
թիւն և զիրաւունս խորայէլի :

Ոչ այսպէս արար ամենայն ազգաց տէր ,  
և զդատաստանս իւր ոչ յայանեաց նոցա :

Տունք . Ժ . Գորգայս . ԼԷ :



ԱՂՈԹ-Բ ԱՄԲԱԿՈՒՄԱՅ ՄԱՐԳԱՐԷԻ

Ամբակ . Դ :

Տէր զուր քո լուայ և երկեայ , տէր նայ-  
եցայ ՚ի գործս քո և զարհուրեցայ :

Ի մէջ երկուց կենդանեացն ծանխցիս դու ,  
՚ի մերձենալ ամացն յայանեցիս , և ՚ի հա-  
սանել ժամանակին երևեցիս :

Ի խռովել անձին իմոյ՝ ՚ի ժամանակի բար-  
կութեան , զողորմութիւն յիշեցես :

Աստուած ՚ի հարաւոյ եկեցէ , և սուրբն  
՚ի փառան լեռնէ :

Նայանեցեն երկինք զվայելութիւն փա-  
ռաց նորա , և օրհնութեամբ նորա լցան  
տիեզերք :

Նառագայթք որպէս ՚ի լուոյ հատան ՚ի  
նմանէ , և եղջիւրք ՚ի ձեռին նորա գը-

տան , և անդ հաստատեցաւ զորութիւն  
փառաց նորա :

Յերեսաց նորա ելցեն հարուածք , և ըզ-  
հեա շաւղաց նորա երթիցեն մեծամեծք  
ի թռչնոց :

Եկաց և չափեաց զերկիր , հայեցաւ և  
դիտեաց զհեթանոսս :

Երինք հալեացին , և անտառք փտանեա-  
ցին . ճանապարհք՝ որք ՚ի սկզբանէն է-  
ին , կուրացին , և ՚ի նմանէ դողացի  
ամենայն երկիր :

Տեսի զբանակս քուշացոց , խռովեցան  
բնակիչք վրանացն մադիամու :

Մի թէ ՚ի վերայ դետոց բարկացցին դու-  
տեր , կամ սրամտութիւն քո ՚ի վերայ  
դետոց , կամ բարկութիւն քո ՚ի վերայ  
ծովու :

Ելեր դու ՚ի կառս քո , հեծելութիւնդ  
քո փրկութիւն եղև յերանելն քո :

Օտրթեաւ աղեղն քո , զնեա կապար-  
ճից քոց արբուցեր , զգետս ցրուեցեր ,  
զերկիր դողացուցեր ՚ի սաստկութենէ անձ-  
րեի , որք անցանեն ընդ սա :

Ենդունդք աղաղակեցին մեծապէս , լցա

փայլման արեգականն արգելաւ , և ծա-  
ղումն լուսնին դադարեցաւ :

Արպէս 'ի նշոյլս սլաքաց քոց գնացես ,  
և որպէս 'ի լոյս փայլատակման սրոյ քոյ :  
Նարկու-թեամբ զարթիցես 'ի վերայ երկ-  
րի , և դողու-թեամբ կացես զհեթանոսս :  
Լըրեեցար 'ի փրկու-թիւն ժողովրդեան քո ,  
'ի փրկել զընտրեալս քո :

Նետաձիգ եղեր 'ի գլուխս մարդկան ամ-  
բարտաւանից , մինչև յանդունդս ծովու-  
րնկղմեցան :

Խնդրեցեր զվրէժ զօրու-թեամբ քով 'ի զօ-  
րագլխացն մեղաւորաց , որք յուսացեալ  
էին յանդգնու-թիւնս իւրեանց , զի կե-  
րին զաղքատն 'ի զաղանիս :

Նաաքեցեր 'ի վերայ ծովու գերիւնրս քո ,  
և խառնեցան յաղթ ջուրք անդնդոց :  
Կացի ես և գելան աղիք իմ 'ի ձայնէ բե-  
րանոյ իմոյ , եմուտ դողումն յոսկերս իմ ,  
և ես յանձն իմ խառնեցայ :

Ոչպս պահեցես յաւուր նեղու-թեան ,  
ածել 'ի վերայ ազգի ամենայնի՝ որք մար-  
տնչին ընդ ժողովրդեան քում :

Թղենի ոչ տացէ զպտուղ իւր , և յայդ-

Լող բեր մի գոցի . ձիթենիք սնացին ,  
 և երկիր մի բուսուցէ զգալարի :  
 Պակասեցին հօտք 'ի ճարակաց , և եղինք  
 մի գոցին առ մտուրս :  
 Լա 'ի տէր յուսացայ , ցնծացայց և ու-  
 րախ եղէց յաստուած փրկիչ իմ :  
 Տէր տէր ետ ինձ զօրութիւն և կացոյց  
 զոտս իմ 'ի հաստատութեան , 'ի վերայ  
 սարանոցի թշնամւոյն կացոյց զիս , և հան-  
 գոյց զիս երազ երազ :  
 Փառք հօր և որդւոյ և :



### ՄԱՂԹԱՆԲ

Եւր մեզ տէր լուր մեզ , աստուածային ողոր-  
 մութեամբ և զթութեամբ քո ինայեան յարա-  
 բաժս քո :

Արդասէր տէր՝ վասն սրբուհւոյ անարատի մօր  
 քոյ և կուսի , և վասն իրաչի քոյ սրատուականի :  
 տէր ընկան զաղաչանս մեր , և կեցո՛ զմեզ :

Չքարոզն և զաղօթս , 'ի վերջն , Ողորմեան կանանին  
 գոցես 'ի 165 . երեսն :

## ՍԱՂՄՈՍ • ՃԻՆ

Աւելուիա • անգեայ և զաքարիայ:

Օրհնեցէք զտէր յերկնից , օրհնեցէք  
 զնա 'ի բարձանց:

Օրհնեցէք զնա ամենայն հրեշտակք նո-  
 րա , օրհնեցէք զնա ամենայն զօրութիւնք  
 նորա:

Օրհնեցէք զնա արեգակն և լուսին , օրհ-  
 նեցէք զնա ամենայն աստեղք և լոյսք:

Օրհնեցէք զնա երկինք երկնից , և ջուրք  
 որ 'ի վերոյ քան զերկինս օրհնեցէք զա-  
 նուն տեառն:

Օ ի նա ասաց և եղեն , հրամայեաց և  
 հաստատեցան:

Կացոյց զնոսա յաւիտեանս յաւիտենից ,  
 սահման եղ և ոչ անցանեն:

Օրհնեցէք զտէր յերկրէ վիշապք , և ամ-  
 մենայն խորք:

Ջուր և կարկուտ ձիւն և սառն , հողմ և  
 մրրիկ՝ որք առնէք զքան նորա:

Երբնք և ամենայն բարձունք , ծառք  
 պտղաբերք և ամենայն մայրք:

Գազանք և ամենայն անասունք, սողունք,  
և ամենայն թռչունք թևաւորք:

Թագաւորք երկրի և զօրք իւրեանց, իշխանք և ամենայն դատաւորք երկրի:

Լրիտասարդք և կուսանք, ծերք և աղայք  
օրհնեցէք զանուն տեառն:

Բարձրացաւ անուն նորա միայն, խոստովանութիւն նմա յերկինս և յերկրի:

Բարձր առնէ տէր զեղջիւր ժողովողեան իւրոյ, օրհնութիւն նմա յամենայն սրբոց նորա, յորդոցն խրայելի ժողովոյն որ մերձ է առ տէր:

Տունք . 47:

ՍԱՂՄՈՍ . ՃԽԹ

Աւելուիա . անգեաց և զարարիայ:

(Օրհնեցէք զտէր յօրհնութիւն ՚ի նոր, օրհնութիւն նմա յեկեղեցիս սրբոց:

Ուրախացի խրայել յարարիչ իւր, որդիք սիօնի ցնծացեն ՚ի թագաւորն իւրեանց:

(Օրհնեցեն զանուն նորա օրհնութեամբ, սաղմոսիւք և օրհնութեամբ սաղմոս երգեցեն նմա:

Հաճի տէր ընդ ժողովուրդ իւր սուրբ, և  
 բարձր առնէ զհեզս ՚ի փրկութեան:  
 Պարծեսցին սուրբքն փառօք, և ցնծաւ-  
 ցեն ՚ի հանգիստ իւրեանց, և բարձր ա-  
 րասցեն զաստուած բերանօք իւրեանց:  
 Սուր երկսայրի ետ ՚ի ձեռս նոցա, առ-  
 նուլ զհատուցումն ՚ի հեթանոսաց, ՚ի  
 յանդիմանութիւն ամենայն ժողովրդոց:  
 Ի կապել զթագաւորս նոցա կապանօք,  
 զզօրավարս նոցա ձեռնակապօք երկաթեօք:  
 Լռնել նոցա դատաստանս ըստ գրոց. և  
 փառք այս են ամենայն սրբոց նորա:

Տունք . Ը :

ՍԱՂՄՈՍ . ճԺ

Աւերուիա . անգեայ և զաբարիայ:

Օրհնեցէք զաստուած ՚ի սրբութեան նո-  
 րա, օրհնեցէք զնա ՚ի հաստատութեան  
 ՚ի զօրութեան նորա:

Օրհնեցէք զնա ՚ի զօրութեան նորա,  
 օրհնեցէք զնա ՚ի բազում մեծութեան  
 նորա:

Օրհնեցէք զնա ՚ի ձայն օրհնութեան,  
 օրհնեցէք զնա սաղմոսիւք և օրհնութիւնք:

Օրհնեցէք զնա ցնծութեամբ , գովեցէք  
զնա ուրախութեամբ :

Օրհնեցէք զնա 'ի բանա քաղցր , գովե-  
ցէք զնա 'ի բարբառ լսելի :

Օրհնեցէք զնա 'ի ձայն գոհութեան ,  
ամենայն հոգիք օրհնեցէք զաւր :

Տունք . 4 : Գորգայս . 1ը :

Կանոնս յորս Չորք Կանոնս Տունք . 5 յխր :

Միահամուռ սաղմոս՝ Գորգայս . 8 4 : Սաղմոս . 38 :  
Տունք 'ի սնա 7 նկի :

Այս սաղմոս ինքնագիր Դաւթի արտաքոյ թուոցս  
Ի ժամանակի զի ել նա նահատակ ընդ դէմ գողիա-  
թու , առաջի սաւուղայ , և ամենայն զօրացն իս-  
րայելի :

Փոքր էի ես յեղբարս իմ , և կրտսերս 'ի  
տան հօր իմոյ , արած էի զխաշինս հօր  
իմոյ :

Չեաք իմ արարին զսաղմոսարան , և մա-  
տունք իմ կազմեցին զգործի օրհնութեանս :  
Իսկ արդ՝ ո՞ սպասեցէ զայս տեսան ի-  
մում , ինքնին տէր ամենայնի լուիցէ զա-  
մենայնս :

Լի առաքեաց տէր զհրեշտակ իւր , և  
համբարձ զիս 'ի հօտէ խաշանց հօր իմոյ :



և էօժ զիս յօժումն իւղոյ իւրոյ:

Նշարարք իմ մեծամեծք և գեղեցիկք, և

ոչ հաճեցաւ ընդ նոսա տէր:

Նլի ես ընդ դէմ այլազգւոյն, և նզովեցի

զկուռս նորա:

Հանի զսուտերն ՚ի նմանէ և հատի զգը-

լուիս նորին, և բարձի զնախատինս յորդ-

ւոյն իսրայէլի:

Պատք հօր և որդւոյ և:

Բարտոլէ և Պետրոս ՚ի վերջ

Երդարեա հանունին գրայտ

՚ի յՅ. Երեմ. Բ. Բ.

Շն գրամեկոյ սէշ շնորհս





ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ԵՐԻՏ ԿԱՆԿԱՆՑ

Դանիելի • Կ :

( ) Երհնեալ ես տէր աստուած հարցն մե-  
րոց , օրհնեալ փառաւորեալ անուն քո  
յաւիտեան :

{ } իրաւունս անցուցեր զայս ամենայն ընդ  
մեզ . արդար ես դու տէր , և ամենայն  
գործք քո ճշմարիտ են :

Ղանապարհք քո ուղիղ են , և ամենայն  
դատաստանք քո արդար են :

Դատաստան արդարութեան ամեր ՚ի վե-  
րայ մեր ըստ ամենայնի , զոր ինչ ամեր  
՚ի վերայ մեր և քաղաքի սրբոյ հարցն մե-  
րոց երուսաղէմի :

Արդարութեամբ և յիրաւի ամեր զայս  
ամենայն ՚ի վերայ մեր վասն մեղաց մերոց :

Անօրինեցաք և յանցեաք ապատամբ իննել  
՚ի քէն , մեղաք յամենայնի և պատուիրա-  
նաց քոց մեք ոչ անսացաք :

Ոչ պահեցաք և ոչ արարաք որպէս պատ-  
ուիրեցեր դու մեզ , զի զբարիս գացուք

մեք 'ի քէն:

Արդ՝ զամենայն զոր արարեր և զոր ինչ  
ածեր 'ի վերայ մեր , արդար դատաստա-  
նաւ արարեր:

Մատնեցեր զմեզ 'ի ձեռս Թշնամեաց մե-  
րոց , անօրինաց խտաց և ապստամբողաց:  
'ի ձեռս Թագաւորի անօրինի և չարի քան  
զամենայն երկիր , մատնեցեր զմեզ:

Եւ արդ՝ ոչ գոյ մեզ ժամ բանալ զբերանս  
մեր , զի ամօթ և նախատինք եղաք ծա-  
ռայից քոց պաշտօնէից:

Այլ մի մատներ զմեզ իսպառ վասն ան-  
ուան քոց , մի ցրեր զուխտս քո , և մի 'ի  
բացեաց առներ զողորմութիւնս քո 'ի մէնջ:

Ս ասն արբահամու սիրելւոյ քոց , իսահա-  
կայ ծառայի քո , և իսրայէլի սրբոյ քո:

Իստապար նոցա և ասացեր , բազմացու-  
ցից զզաւակ ձեր որպէս զաստեղս երկնից  
բազմութեամբ և որպէս զաւազ առ եղբ  
ծովու:

Եւ արդ տէր՝ նուաղեցաք մեք քան զա-  
մենայն ազգս , և եմք տառապեալ յամե-  
նայն երկրի այսօր վասն մեզաց մերոց:

Ոչ գոյ 'ի ժամանակի յայսմիկ իշխան մար-

դարէ և առաջնորդ , ոչողակէզք պատարագաց , ոչ խունկէ օրինաց , և ոչ տեղի պատարագս մատուցանելոյ առաջիքո , և զողորմութիւն գտանել ՚ի քէն :

Մանձամբ խոնարհեալ և հոգւով տառապանաց ընդունելի լիցուք մեք որպէս զողակէզս խոյոց և զուարակաց , և որպէս բիւրաւորս գառանց պարարտաց :

Մնպէս ընդունելի լիցին պատարագք մեր այսօր առաջիքո , զի կատարեալ գտցուք զկնիքո , և չիք ամօթ յուսացելոցս ՚ի քեզ :

Եւ արդ՝ գամք զհետքո ամենայն սրտիւք մերովք , երկնչիմք ՚ի քէն և խնդրեմք զերեսքո , տէր մի յամօթ առներ զմեզ :

Մարս առ մեզ ըստ հեղութեանքում , և ըստ բազում ողորմութեանքում , փրկեան զմեզ վասն սքանչելեաց քոց տէր , և փառաւորեցի անունքո յաւիտեան :

Յամօթ լիցին ամենեքեան , որ չարչարեն զժառայսքո , ամաչեցեալ լիցին բռնութիւնք նոցա և ամենայն զօրութիւնք նոցա խորտակեցին :

Եւ ծանիցեն զի դու ես տէր աստուած միայն , որ փառաւորեալդ ես ՚ի վերայ

## ամենայն տիեզերաց:

- ( ) օրհնեալ ես դու տէր իմ՝ հարցն մերոց , գովեալ և առաւել բարձրացեալ յաւիտեանս և օրհնեալ է անուն սուրբ փառաց քոց , գովեալ և առաւել բարձ:
- ( ) օրհնեալ ես 'ի տաճարի փառաց սրբութեան քո , գովեալ և առա:
- ( ) օրհնեալ ես 'ի վերայ աթոռոյ արքայութեան քո , գովեալ և առա:
- ( ) օրհնեալ ես որ նստիս 'ի բրուսէս և հայիս յանդունդս , գովեալ և առա:
- ( ) օրհնեալ ես 'ի վերայ հաստատութեան երկնից , գովեալ և առա:
- ( ) օրհնեցէ՛ք իմ գործք տեառն զտէր . օրհնեցէ՛ք և բարձր արարէ՛ք զնա յաւիտեանս:
- ( ) օրհնեցէ՛ք երկինք զտէր . օրհնեցէ՛ք և բարձր արարէ՛ք զնա յաւիտեանս:
- ( ) օրհնեցէ՛ք հրեշտակք տեառն , և ջուրք որ 'ի վերոյ երկնից զտէր . օրհն:
- ( ) օրհնեցէ՛ք զօրութիւնք տեառն , արեգակն և լուսին զտէր . օրհն:
- ( ) օրհնեցէ՛ք աստեղք երկնից՝ անձրևք և ցողք զտէր . օրհն:
- ( ) օրհնեցէ՛ք ամենայն հողք հուր և ջեր

զտէր . օրհն:

- (Օրհնեցէ՛ք ցուրտ և տօթ , ցօղ և ձիւ .  
նաբեր զտէր . օրհն:
- (Օրհնեցէ՛ք սառն և սարզ , եղեամն և  
ձիւն զտէր . օրհն:
- (Օրհնեցէ՛ք տիւք և դիշերք , լոյս և խա-  
ւար զտէր . օրհն:
- (Օրհնեցէ՛ք ամսք և փայլատակունք և  
երկիր զտէր . օրհն:
- (Օրհնեցէ՛ք լերինք բլուրք , և ամենայն  
բոյսք երկրի զտէր . օրհն:
- (Օրհնեցէ՛ք աղբիւրք ծովք և գետք զտէր:
- (Օրհնեցէ՛ք կէտք և ամենայն կայտառք ,  
որ 'ի ջուրս , և թռչունք երկնից զտէր:
- (Օրհնեցէ՛ք գազանք և անասունք , և որ-  
դիք մարդկան զտէր . օրհն:
- (Օրհնեցէ՛ խորայել զտէր . օրհնեցէ՛ և  
բարձր արասցէ զնա յաւիտեան:
- (Օրհնեցէ՛ք քահանայք զտէր . օրհն:
- (Օրհնեցէ՛ք ծառայք տեառն զտէր . օրհն:
- (Օրհնեցէ՛ք անձինք , և շունչք արդարոց  
զտէր . օրհն:
- (Օրհնեցէ՛ք սուրբք և խոնարհք սրտիւք  
զտէր . օրհն:

Օրհնեցէք անանիա աղարիա և միսայէլ  
զաէր . օրհնէ

ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՄԱՐԻԱՄՈՒ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻՆ  
Ղուկասու . Կ՛

Սեծացուցէ անձն իմ զաէր , և ցըն-  
ծացէ հոգի իմ աստուծով փրկչաւ իմով :  
Եւ այ արար ՚ի վերայ խոնարհութեան ա-  
ղախնոյ իւրոյ , այսուհետեւ երանիցեն ինձ  
ամենայն ազգք :

Եւ արար ընդ իս մեծամեծս հզօրն , և սուրբ  
է անուն նորա :

Ողորմութիւն արար ազգաց յազգս եր-  
կիւղածաց իւրոյ , արար զօրութիւն բազ-  
կաւ իւրով :

Յրուեաց զամբարտաւանս ՚իմտաց սրտից ,  
և քակեաց զհզօրս յաթոռոց :

Ս խոնարհս բարձրացոյց՝ զկարօտս ելից  
բարութեամբ , և զմեծատունս արձա-  
կեաց ունայնս :

Պաշտպանեաց իսրայէլի ծառայի իւրոյ ,  
յիշելով զողորմութիւն իւր :

Որպէս խօսեցաւ առ հարսն մեր՝ ընդ ար-  
բահամու և զաւակի նորա յաւիտեան:

ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ԶԱՔԱՐԻԱՅԻ ԼՕՐՆ ՅՈՎՀԱՆ-  
ՆՈՒ ՄԿՐՏՉԻ

Ղուկասու . Կ :

Օրհնեալ տէր աստուած խրայէլի որ յայց  
ել , և արար փրկութիւն ժողովրդեան  
իւրոյ :

Յարոյց մեզ եղջիւր փրկութեան ՚ի տա-  
նէ դաւթի ծառայի իւրոյ , որպէս խօսե-  
ցաւ բերանովք սրբոցն որ յաւիտենից  
մարդարէքն էին :

Փրկութիւն ՚ի թշնամեաց մերոյ , և ՚ի  
ձեռաց ամենայն ատելեաց մերոց :

Անել ողորմութիւն առ հարսն մեր , և  
յիշել զկտակարանս սրբութեան իւրոյ :

Երդումն զոր երգուաւ արբահամու հօր  
մերոյ , տալ մեզ առանց երկիւղի զփր-  
կութիւն ՚ի թշնամեաց մերոց :

Պաշտել զնա սրբութեամբ և արդարու-  
թեամբ առաջի նորա , զամենայն աւուրս  
կենաց մերոց :

Եւ զնու մանուկ՝ մարդարէք բարձրելոյն կու-



չեաջիր , դնասցես առաջի տեառն պատ-  
րաստել զճանապարհս նորա :

Տալ զգիտութիւն փրկութեան ժողովրդ-  
դեան իւրոյ , ՚ի թողութիւն ամենայն  
մեղաց մերոց :

Ո՞ր ան զթոյ ողորմութեան տեառն աստու-  
ծոյ մերոյ՝ որով երևեցաւ մեզ արեգակն  
՚ի բարձանց , լուսաւոր աննել զխաւար  
մեր :

Օ՞ր ան զլոյս ՚ի վերայ այսոցիկ , որ նառե-  
աք ՚ի խաւարի և ՚ի ստուերս մահու , ուղ-  
ղել զօրս մեր ՚ի ճանապարհս խաղաղու-  
թեան :

ԱՂՕԹ-Բ ՍԻՄԵՈՎՆԻ ԾԵՐՈՒՆԻՈՅՆ

Ղուկասու . ք :

Ըրդ արձակեա՛ զժառայս քո տէր ըստ բա-  
նի քում ՚ի խաղաղութիւն , զի տեսին աչք  
իմ զփրկութիւն քո՝ զոր պատրաստեցեր  
առաջի ամենայն ժողովրդոց :

Եղս յայտնեցար հեթանոսաց , և փառք  
ժողովրդեան քում իորայելի :



ԱՂՕԹ-Բ ԱՊԱՀԻՍՐՈՒԹ-ԵՆՆ ՄԱՆԱՍԷԻ  
ԹՅԳՅՈՒՄԻՆ

Տէր ամենակալ աստուած արքահամու՝  
խառնակայ յակորայ և զաւակի նոցա ար-  
դարոց . ամենակալ տէր թող զմեզս իմ  
Որ արարեր զերկինս և զերկիր՝ և զամե-  
նայն զարդ նոցա . ամենա :

Որ կապեցեր զծով բանիւ հրամանի քո ,  
փակեցեր զխորս , կնքեցեր ահաւոր և փա-  
ռաւորեալ անուամբ քով սրբով . ամենա :

Որ ամենայն ինչ սարսի և դողայ յերեսաց  
ահի զօրութեան քո . ամենա :

Ընբաւ է մեծփայտելութիւն փառաց սրբ-  
բութեան քո , սաստիկ է բարկութիւն  
սպառնալեաց քոց ՚ի վերայ մեղաւորաց ,  
անչափ և անքննին են ողորմութիւնք աւետ-  
եաց քոց . ամենա :

Ղու տէր բարձրեալ զթած երկայնամիտ  
բազումողորմ , և զղջանաս ՚ի վերայ շար-  
եաց մարդկան . ամենա :

Ղու աստուած ոչ եղեր ասպաշխարութիւն

վանն արդարոցն՝ արբահամու , իսահակայ  
 և յակոբայ , որք ոչ մեղան քեզ . ամե :  
 Այլ եղեր ապաշխարութիւն վանն իմ մե-  
 զաւորիս , զի մեղայ աւելի քան զաւազ  
 ծովու , և բազմացան անօրէնութիւնք  
 իմ . ամենա :

Նեմ արժանի հայիլ և տեսանել զբարձ-  
 րութիւնս երկնից՝ ՚ի բազմութենէ անօ-  
 րէնութեան իմոյ . ամենա :

Կորացեալ եմ ես ՚ի բռնութենէ կապանաց  
 երկաթից , և ոչ զոյ ինձ հանգիստ . ամե :  
 Բարկացուցի զսրտմտութիւն և շար առա-  
 ջի քո արարի , կանգնեցի պատկեր և բազ-  
 մացուցի զցասումն . ամենա :

Լա արդ տէր՝ խոնարհեցուցանեմ զծննդ  
 սրտի իմոյ , և հայցեմ ՚ի քաղցրութենէ  
 քումմէ . ամենա :

Սեղայ տէր մեղայ , և զանօրէնութիւնս  
 իմ ես ինձէն գիտեմ . ամենա :

Ղաչեմ և խնդրեմ ՚ի քէն թող ինձ տէր  
 թող ինձ , և մի կորուսաներ զիս ըստ անօ-  
 րէնութեան իմոյ . ամենա :

Մի յաւիտեան բարկանար ինձ տէր , և  
 մի յիշեր զչարիսն իմ , և մի պարտաւորիք

զիս ընդ իջեալսն ՚ի ներքոյ երկրի չարեօք՝  
ամենաւ :

Օ ՚ի դու աստուած աստուած ապաշխա-  
րողաց ես , և յիս ցոյց զբարերարութիւնդ  
քո որ անարժան եմ . ամենաւ :

Կեցուսցես զիս ըստ բազում ողորմութեան  
քում , և ես օրհնեցից զքեզ զամենայն  
աւուրս կենաց իմոց . ամենաւ :

Օ քեզ տէր օրհնեն ամենայն զուարթունք  
երկնից . և քո են փառք յաւիտեանս ,  
ամէն :

Փառք հօր և որդ . Ա՛յժմ և միշտ և :  
Ա՛ղաչեմ և խնդրեմ ՚ի քէն տէր , թո՛ղ  
ինձ զմեղս իմ :

Բազում ողորմ տէր՝ ողորմեա՛ ինձ :

Ա՛ստուած՝ քաւեա՛ զիս զմեղաւորս ՚ի մե-  
ղաց և կեցո՛ւ :

Ա՛րարիչ իմ և յոյս աստուած՝ դժա՛ն ՚ի մե-  
ղուցեալ ծառայս , և ողորմեա՛ ինձ բազ-  
մամեղիս :

Ա՛մէնօրհնեալ սրբուհի և միշտ կոյս աստ-  
ուած ամին մարիամ , բարեխօսեա՛ առ տէր  
փասն իմ մեղաւորիս :

Ա՛մենայն սուրբք աստուծոյ բարեխօսեցէ՛ք

առ հայր ՚ի յերկինս զասն մեր մեղաւո-  
րացս :


Վերիստոս որդի աստուծոյ անոխակալ ըն-  
կալ զաղաչանս մեր , զի ՚ի քեզ են ապա-  
ւինեալ անձնիք մեր :

Յաղթող զօրութեամբ սուրբ և կենդանա-  
րար և պատուական խաչիւ քո տէր՝ պահ-  
պանեալ զմեզ :

Մաքեալ տէր զհրեշտակ խաղաղութեան  
քո , որ եկեալ պահեսցէ զմեզ անխռովս  
՚ի տուէ և ՚ի գիշերի :

Եւ մարդասիրութեամբ քո յիշեալ զմեզ  
տէր յիշեալ զմեզ , յորժամ գաս արքայ-  
ութեամբ քով , և ողորմեալ մեզ :





Նախադրութիւնք խրատականք յաղագս աղօթիցն ,  
 զոր արարեալ է Տեառն Ներսէսի եղբօրն Գրիգորի  
 սիսի հայոց կաթուղիկոսի :

Մղթք հասարակաց քրիստոնէից մեծաց  
 և փոքունց , զոր պարտին ուսանիլ ամե-  
 նեքեան՝ և ուսուցանել զմիմեանս . քա-  
 հանայք՝ զժողովուրդս , հարք՝ զորդիս ,  
 մարք՝ զդասերս , և ընկեր՝ զընկերն իւր-  
 ՚ն աղօթեցեն սովաւ յաւուրն հինգ ան-  
 դամ՝ երկոտասան ծնրադրութեամբ ՚ի  
 ժամուն . սյսինքն՝ յառաւօտուն , ՚ի ճա-  
 շուն , ՚ի հասարակ աւուրն , յերեկոյնիս ,  
 և ՚ի հանգստեան : Մյա թէ պղերդ որ լի-  
 նիցի և ծուլանայ զհինգ ժամ աղօթս կա-  
 տարել , աղօթեցէ չորս անգամ , կամ  
 երեք անգամ , կամ երկու անգամ , կամ  
 մի անգամ յաւուրն . որ միայն ճանաչի  
 թէ քրիստոնեայ է , և զինքն ծանիցէ թէ  
 արարած եմ աստուծոյ և երկրպագու նր-  
 ՚ն թէ զամենայն բանս աղօթիցն հեղգայ  
 ուսանիլ , (որք և զսատանայական երգս

բազումս փութով ուսանին , ) ուսցի զկէս  
սորա , կամ այլ նուազ . զի թէ տունս ե-  
րիս ուսանիցին 'ի սմանէ , և աղօթեցնեն  
երիս ճնորդութեամբ 'ի ժամուն , ըն-  
դունելի է առաջի աստուծոյ : Ապա թէ որ  
'ի քրիստոնէիցն անփոյթ առնէ զսա՛յու-  
սանելոյ և յաղօթելոյ , յանդիմանեցի և  
'ի մոլար ժողովոյն այլազգեաց . որք զա-  
ղօթան զոր ուսոյց նոցա , 'ի պատերազ-  
մունս անգամ ո՛չ խափանենն՝ թող թէ 'ի  
խաղաղութեան : Ասկ մեր ժողովուրդք ար-  
տաքոյ աղօթից տեղւոյ բնաւ ո՛չ յիշեն  
զանունն աստուծոյ . զի ո՛չ ունին փոյթ 'ի  
կարգս աղօթից որպէ՛ս զաստուածապաշտս ,  
այլ սիրեն զդատարկաբանութիւնքան զա-  
ղօթս : Աւ թէ երբեմն զան ոմանք յաղօ-  
թել առ քահանայն , կամ փակեալ բերա-  
նով կանգնին , կամ զրուցատրութիւնս  
առնեն ընդ միմեանս . զի ո՛չ ինքեանք զի-  
տեն բանս աղօթից , և ո՛չ քահանայից միտ  
դնեն սաղմոսաց և պաշտմանց : Ա՛սան այսր  
պատճառի արարաք զաղօթս զայս պարզ  
և յատակ բառիւ վասն տխմարաց դիւրա-  
հաս լինելոյ . որ է սակաւ ըստ բանից՝ տու-

նրա քսանն և չորս , ըստ ժամուց տունջեանն  
 և գիշերոց , և ըստ տառից սրբոց մարդա-  
 բէիցն , և զօրաւոր ըստ մտաց - զի զյո-  
 լովագոյն պէտս խնդրուածոց մերոց որ  
 յաստուծոյ՝ ունի յինքեան . և տուաք ժո-  
 ղովորդեան մերում յուսումն . զի ամե-  
 նայն անձն քրիստոսնէի ուսցի զսա՛ , և  
 ուր հանդիպեսցին ՚ի ժամ աղօթիցն՝ խօ-  
 սեսցին սովաւ ընդ աստուծոյ , թէ յեկե-  
 ղեղի՝ թէ ՚ի տան՝ թէ յանդի՝ թէ ՚ի  
 գործ ինչ՝ թէ ՚ի ճանապարհիս Եւ որք ու-  
 սանին զսա և աղօթեսցեն մտադրութեամբ՝  
 ջերմեռանդ սրտիւ և արտասուօք , ամե-  
 նայն խնդրուածք որ գրեալ են ՚ի սմա՝  
 կատարեսցին ՚ի կենդանութեան և յետ  
 մահու : Իսկ որք արհամարհեն և ոչ ուսա-  
 նին և ոչ աղօթեսցեն , ինքեանք տեսցեն  
 զվնաս անձանց իւրեանց . մեք հատաք ՚ի  
 մէնջ զպատճառն՝ առնելով զաղօթս զայս .  
 զի մի այլևս պատճառեսցեն թէ ոչ գի-  
 տեմք բանս աղօթից , վասն այնորիկ ոչ  
 կամք յաղօթս : Իսպց ծանիցեն այնպի-  
 սիքն , թէ սատանայ ոչ այնչափ ջանայ  
 զայլ բարեգործութիւնս մեր խափանել



որչափ զաղօթս . զի գիտէ որ յաղօթիցն  
միայն ինքն հալածի 'ի մէնջ , և աստուած  
բնակէ 'ի մեզ : Արդ՝ մեք աղաչեսցուք  
զբարերարն աստուած բանալ զաչս մտաց  
ձերոց , յօժարութեամբ ուսանիլ զսա՛ և  
աղօթել , և աստուծոյ սիրելի լինել :  
Եւ յաղօթելն՝ զԳրիգորիս կաթուղիկոս  
հայոց , և զեղբայրն նորին զՆերսէս զա-  
ղօթիցս յօրինօղն յիշեցէք 'ի քրիստոս :  
Եւ որք ընդ օրինակէք 'ի գիրս զաղօթս ,  
գրեցէք և զխրատական բանս զայստսիկ .  
և որք գրեն զսա՛ գրեսցին 'ի դպրութիւն  
կենացն յաւիտենից : Եւ որք ուսանին և  
աղօթեսցեն , ողորմութիւն ընդօրցին 'ի  
քրիստոսէ . և որք ուսուցանիցեն զընկերս ,  
վարձս առցեն յաստուծոյ : Եւ որք գրենն ,  
մի առաւելքան զօրինակս՝ բան կամ գիր  
խառնեսցեն , և մի նուազ գրեսցեն , զի  
մի այլ և այլ լինիցին բանքն , այլ հաւա-  
սար լիցին ամենեքեան ուր և գրեսցին :  
Եւ տխմարքն 'ի գիրս՝ ուղիղ գրողացն  
տացեն գրել . և քրիստոսի փառք յաւիտ-  
եանս , ամէն :



Աղօթք հարկաւոր իւրաքանչիւր անձանց հաւատացե-  
լոց 'ի բրիտանոս , արարեալ սրբոյն Ներսէսի շնորհալ-  
ւոյ հայոց կաթուղիկոսի :

Հաւատով խոստովանիմ , և երկիրպագա-  
նեմ քեզ՝ Հայր և Որդի և սուրբ Հոգի ,  
անեղ և անմահ բնութիւն , արարիչ հը-  
րեշտակաց և մարդկան և ամենայն եղե-  
լոց . ողորմեա՛ քո արարածոց , և ինձ բազ-  
մամեղիս :

Հաւատով խոստովանիմ , և երկիրպագա-  
նեմ քեզ՝ անբաժանելի լոյս , միասնական  
սուրբ երրորդութիւն և մի աստուածու-  
թիւն , արարիչ լուսոյ և հալածիչ խաւա-  
րի . հալածեա՛ 'ի հոգւոյ իմիկ զխաւար  
մեզաց և անգիտութեան , և լուսաւորեա՛  
զմիտս իմ 'ի ժամուս յայսմիկ աղօթել քեզ  
'ի հաճոյս , և բնդունել 'ի քէն զինդ բը-  
ռուածս իմ . ողորմեա՛ ինձ բազմամեղիս :

Հայր երկնաւոր աստուած ճշմարիտ՝ որ  
առաքեցեր զորդիդ քո սիրելի 'ի խնդիր  
մօլորեալ ոչխարին , մեզայ յերկինս և ա-

առաջի քո . ընկալ զիս որպէս զանառակ  
որդին , և զգեցն ինձ զգատմուճանն զա-  
ռաջին զոր մերկացայ մեղօք . ողորմեա՛ քո  
արա :

Արդի աստուծոյ աստուած Ճշմարիտ՝ որ  
խոնարհեցար ՚ի հայրական ծոցոյ՝ և առեր  
մարմին ՚ի սրբոյ կուսէն մարիամայ վասն  
մերոյ փրկութեան , խաչեցար և թաղե-  
ղեցար և յարեար ՚ի մեռելոց՝ և համբար-  
ձար փառօք առ հայր , մեղայ յերկինս և  
առաջի քո . յիշեա՛ զիս որպէս զաւազակն՝  
յորժամ գաս արքայութեամբ քով . ողոր-  
մեա՛ քո արա :

Հոգի աստուծոյ աստուած Ճշմարիտ՝ որ  
խըր ՚ի յորդանան և ՚ի վերնասառնն , և  
լուսաւորեցեր զիս մկրտութեամբ սուրբ  
աւազանին , մեղայ յերկինս և առաջի քո .  
մաքրեա՛ զիս վերստին աստուածային հրով  
քո՝ որպէս հրեղէն լեզուօք սուրբ զառա-  
քեալն . ողորմեա՛ քո արա :

Մենդ բնութիւն՝ մեղայ քեզ մտօք ի-  
մովք , հոգւով և մարմնով իմով . մի յի-  
շեր զմեզս իմ զառաջինս վասն անուանդ  
քում սրբոյ . ողորմեա՛ քո արա :

Տեսօղ ամենայնի՝ մեղայ քեզ խորհրդով  
բանիւ և գործով . Յնձեան զձեռագիր յան-  
ցանաց իմոց , և դրեան զանուն իմ 'ի դըպ-  
րութեան կենաց . ողորմեան քո արա :

Վննօղ զաղտնեաց՝ մեղայ քեզ կամաւ և  
ակամայ , դիտութեամբ և անգիտու-  
թեամբ . Թողութիւն շնորհեան մեղաւո-  
րիս , զի 'ի ծննդենէ սուրբ աւաղանին  
մինչև ցայսօր մեղուցեալ եմ առաջի ասա-  
ուածութեանդ քո զգայարանօք իմովք ,  
և ամենայն անգամօք մարմնոյս . ողորմեան  
քո արա :

Վմենախնանմ աւեր՝ դիր պահապան աչաց  
իմոց զերկիւղ քո սուրբ ոչ ևս հայիլ յա-  
րատ , և ականջաց իմոց՝ ոչ ասորժել լը-  
սեք զբանս չարութեան , և բերանոց իմոց՝  
ոչ խօսիլ զստութիւն , և սրտի իմոց՝ ոչ  
խորհիլ զչարութիւն , և ձեռաց իմոց՝ ոչ  
գործել զանիրաւութիւն , և օտից իմոց՝  
ոչ դնալ 'ի ճանապարհս անօրէնութեան .  
այլ ուղղեան զչարժումն սոցա լինել միշտ  
ըստ պատուիրանաց քոց յամենայնի . ո-  
ղորմեան քո արա :

Հնր կենդանի բրիստոս՝ զհուր սիրոյ քո

զոր արկեր յերկիր , բորբոքեան յանձն իմ .  
 զի այրեսցէ զաղտ հոգւոյ խնոյ , և սրբես-  
 ցէ զխիղճ մտաց խնոյ , և մաքրեսցէ ըզ-  
 մեղս մարմնոյ խնոյ , և վառեսցէ զլոյս գի-  
 տութեան քո 'ի սրաի խնում . ողորմեան ,  
 ՚մասատութիւն հօր յիսուս՝ տուր ինձ ի-  
 մասատութիւն , զբարիս խորհիլ և խօսիլ  
 և գործել առաջի քո յամենայն ժամ . 'ի չար  
 խորհրդոց՝ 'ի բանից և 'ի գործոց փրկեան  
 զիս . ողորմեան քո արա :

Կամեցօղ բարեաց տէր կամարար՝ մի թո-  
 ղուր զիս 'ի կամս անձին խնոյ գնալ . այլ  
 առաջնորդեան ինձ լինիլ միշտ ըստ կամաց  
 քոց բարեսիրաց . ողորմեան քո արա :

Մքայ երկնաւոր՝ տուր ինձ զարքայու-  
 թիւն քո , զոր խոստացար սիրելեաց քոց .  
 և զօրացն զսիրտ իմ առել զմեղս , և սի-  
 բել զքեզ միայն , և առնել զկամս քո .  
 ողորմեան քո արա :

Ինամօղ արարածոց՝ պահեան նշանաւ խա-  
 չի քո զհոգի և զմարմին իմ 'ի պատրանաց  
 մեղաց՝ 'ի փորձութեանց զիւաց , և 'ի  
 մարդոց անիրաւաց , և յամենայն վտան-  
 գից հոգւոյ և մարմնոյ , ողորմեան քո արա :

Պահապանն ամենայնի քրիստոս՝ աջ քո հո-  
 վանի լիցի 'ի վերայ իմ 'ի տուէ և 'ի գիշե-  
 րի , 'ի նստիլ 'ի տան , 'ի դնալ 'ի ճա-  
 նապարհ , 'ի ննջել և 'ի յառնել՝ զի մի  
 երբէք սասանեցայց . ողորմեան քո արաւ  
 Մատու՛ծ իմ՝ որ բանաս զձեռն քո , և  
 ընուս զամենայն արարածս ողորմութեամբ  
 քով , քեզ յանձն առնեմ զանձն իմ .  
 դու հոգն և պատրաստեան զպէտս հոգւոյ  
 և մարմնոյ իմոյ յայսմ հետէ մինչև յաւիտ  
 եան . ողորմեան քո արաւ :

Դարձուցիչ մոլորելոց՝ դարձն զիս 'ի չար  
 սովորութեանց իմոց 'ի բարի սովորութիւն .  
 և բեւեռեան 'ի հոգի իմ զսոսկալի որ մա-  
 հուն , և զերկիւզ գեհննոյն , և զսէր ար-  
 քայութեանն , զի զղջացայց 'ի մեղաց ,  
 և գործեցից զարդարութիւն . ողորմեան  
 քո արաւ :

Մղբիւր անմահութեան՝ աղբերացն 'ի  
 սրակ իմմէ զարտասուս ասպաշխարութեան  
 որպէս պոռնկին . զի լուացից զմեզս անձին  
 իմոյ յառաջ քան զելանելի իմ յաշխար-  
 հէս . ողորմեան :

Պարգեիչ ողորմութեան՝ պորգեւեան ինձ

ուղղափառ հաւատով , և բարի դործով ,  
 և սուրբ մարմնոյ և արեան քո հաղորդու-  
 թեամբ դալ առ քեզ . ողորմեա՛ քո արաւ  
 ՚Բարերաւր տէր՝ հրեշտակի բարւոյ յանձն  
 արասցես զիս քաղցրութեամբ աւանդել  
 զհոգի իմ , և անխռով անցուցանել ընդ  
 շարութիւն այսոցն որ են ՚ի ներքոյ երկ-  
 նից . ողորմեա՛ քո արաւ :

Ե՛րբ ճշմարիտ քրիստոս՝ արժանաւորեա՛  
 զհոգի իմ ուրախութեամբ տեսանել ըզ-  
 լոյս փառաց քոյ ՚ի կոչման աւուրն , և  
 հանգչիլ յուսով բարեաց յօթեանս ար-  
 դարոց մինչև յօր մեծի գալտեան քո .  
 ողորմեա՛ քո արաւ :

Պատաւոր արդար՝ յորժամ դաս փառօք  
 հօր դատել զկենդանիս և զմեռեալս , մի  
 մտաներ ՚ի դատաստան ընդ ծառայի քում .  
 այլ փրկեա՛ զիս ՚ի յաւիտենական հրոյն ,  
 և լսելն արա ինձ զերանաւէտ կոչումն ար-  
 դարոց յերկնից արքայութիւնդ . ողորմեա՛  
 ՚Մէնողորմ տէր՝ ողորմեա՛ ամենայն հա-  
 ւատացելոց ՚ի քեզ , իմոց և օտարաց ,  
 ծանօթից և անծանօթից , կենդանեաց և  
 մեռելոց . շնորհեա՛ և թշնամեաց իմոց և

ստեղծաց զԹողութիւն որ առ իս յանցա-  
 նաց , և դարձն զնոսա ՚ի չարեացն զոր  
 ունին վասն իմ , զի ողորմութեան քուժ  
 արժանի եղիցին . ողորմեա՛ քո արա՛  
 Փառաւորեալ տէր՝ ընկալ զաղաչանս ծա-  
 աայիս քո , և կատարեա՛ ՚ի բարի զխնդրու-  
 աւածս իմ՝ բարեխօսութեամբ սրբուհւոյ  
 աստուածածնին , և յովհաննու մկրտչին ,  
 և սրբոյն ստեփաննոսի նախապային , և  
 սրբոյն գրիգորի մերոյ լուսաւորչին , և  
 սրբոյ առաքելոց՝ մարգարէից՝ վարդապե-  
 տաց՝ մարտիրոսաց , հայրապետաց՝ Տիմա-  
 ւորաց՝ կուսանաց , և ամենայն սրբոց քոց  
 երկնաւորաց և երկրաւորաց : Եւ քեզ  
 փառք և երկրպագութիւն՝ անբաժանելի  
 սուրբ երրորդութեանդ յաւիտեանս յա-  
 ւիտենից , ամէն :





... 151, ...

... 152, ...

... 153, ...

... 154, ...

... 155, ...

... 156, ...

... 157, ...

... 158, ...

... 159, ...

... 160, ...

... 161, ...

... 162

արթարտիւնց. ընդ աւելիով շարքաց  
Բիւրեւն արեւ և զպատեւեւեւն ար  
դի յարցայ յարաւի իւր աւթիւնս:  
Արց. Եկեցի մտնել ի իւր իւրս  
Ի իւր արջաւիճ, Բիւրեւն արցիւ  
արջաւիճ և զարցաւ մաւրի զի  
արարչիւն արցոյ. զի արջաւիճ իւր  
արնոց զյաւաւ. Իւր արցաւ իւր յար  
յարնայ արցոյ Բարեւարաւ իւրարի  
յարնով: Արքն արջայ ԱՅՐ ԱՅԻ  
Ար իւրն և յարարիւն:  
Արջով:

ԱՅՐ ԱՅԻ Իրիւն Բարոյ որ յար  
արն

Handwritten text in a cursive script, likely a historical document or manuscript. The text is written in a dark ink on aged paper and is enclosed within a rectangular border. The script is dense and difficult to decipher due to its cursive nature and the fading of the ink. The text appears to be organized into several lines, with some words or phrases being more prominent than others. The overall appearance is that of a well-used, possibly official, document from a past era.



